ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հ ա ղ ո ր դ ո ւ մ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2013 թվականի գործունեության մասին

Հարգարժան պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներպետական և միջազգային համապատասխան իրավական ակտերով, 2013թ. ընթացքում բավարար ծանրաբեռնվածությամբ աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման ու վերլուծության, հանցագործությունների բացահայտման, քննության որակն ու արդյունավետությունը բարելավելու, հետաքննության և նախաքննության, դատարանում մեղադրանքի պաշտպանության, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, պետական շահերի պաշտպանության, պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, վերահսկողական-տեսչական, միջազգային համագործակցության, իրավական ապահովման, ինչպես նաև դատախազական գործունեության կազմակերպման մյուս ոլորտներում: Գործունեության առավել կարևորություն ներկայացնող հարցերով կատարվել են ուսումնասիրություններ ու վերլուծություններ, որոնց արդյունքները քննարկվել են դատախազության կոլեգիայի նիստերում ու համապատասխան խորհրդակցություններում, և այդ արդյունքներով կազմված

ու համապատասխան ակտերում ամրագրված կանխորոշումները կարևոր նշանակություն են ունեցել դատախազական գործունեության կազմակերպման և դատախազական լիազորությունների իրականացման արդյունավետության ապահովման, ինչպես նաև քրեական պետական քաղաքականության մշակման և իրականացման համար:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից **2013 թվականի առաջին 10 ամիսներին** քրեական պետական քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում համապատասխան վերլուծություններ և ամփոփումներ իրականացվել է և դատախազության գործունեության կազմակերպման ուղղությունները հիմնականում կանխորոշվել են նախկին կառուցվածքում ընդգրկված հիմնական առարկայական սկզբունքով ստեղծված կառուցվածքային ստորաբաժանումների մասնագիտական ուղղություններին համահունչ: ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքում գործել են Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, Ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով, Կազմակերպական-վերահսկողական, Պետական շահերի պաշտպանության, Կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով, Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունները և Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով, Անձնակազմի, Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման, Իրավական ապահովման և եվրաինտեգրման, Միջազգային-իրավական կապերի բաժինները:

Սկսած 2013 թվականի նոյեմբեր ամսից, կապված ՀՀ դատախազության համակարգում իրականացվող իրավակազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների հետ, վերոհիշյալ աշխատանքներն իրականացվել են ՀՀ գլխավոր դատախազության նոր կառուցվածքին համապատասխան, որում, նշված ժամանակահատվածից սկսած, գործում են դատախազության լիազորություններին համահունչ ստեղծված Հատկապես կարևոր գործերով քննության (դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դատական ակտերի բողոքարկում, համապատասխան լիազորություններն իրականացնում է ՀՀ նախաքննության բոլոր մարմինների կենտրոնական ապարատում քննվող գործերով և նախապատրաստվող նյութերով), Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության, Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման, ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով, Պետական շահերի պաշտպանության, Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության, Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, Վերահսկողական-տեսչական վարչությունները և Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով, Իրավական ապահովման և եվրաինտեգրման, Միջազգային-իրավական կապերի բաժինները:

Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ սույն հաղորդման մեջ նույնպես վերլուծություններն ու ամփոփումները կատարված են վերը նշված, միմյանցից տարբերվող իրավակազմակերպական, կառուցվածքային գործունեության կազմակերպման և մասնագիտացման ուղղությունների հնարավոր համադրմամբ, ինչպես նաև առանձին դեպքերում վերլուծությունները կատարվել են ՀՀ գլխավոր դատախազության նախկին և նոր կառուցվածքներով նախատեսված միևնույն ոլորտի, սակայն տարբեր ենթաուղղվածություններ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների մասնագիտացմանը համապատասխան, (օրինակ՝ նախկինում կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչություն, ներկայումս՝ կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն):

1. Հանցագործությունների շարժընթացում և կառուցվածքում արձանագրված փոփոխությունները

Հաշվետու ժամանակահատվածի հանցավորության ընդհանուր վիճակի վերլուծությունը;

2013թ. գրանցվել է հանցագործության 18333 (2012թ.՝ 15776) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 2557-ով, աճը կազմել է 16,2%, դրանով պայմանավորված՝ 84,7%-ով աճել է 100 հազար բնակչին բաժին ընկնող հանցագործությունների թիվը:

Արձանագրված դեպքերից բացահայտվել է 15139-ը, 3194-ը չի բացահայտվել (2012թ.-ին 13646 դեպքից չի բացահայտվել 2130-ը), 2013թ.-ին բացահայտումը կազմել է 82,6% (2012թ.՝ 86,5%):

2013թ. ընթացքում գրանցվել է քրեական հետախուզության գծով հաշվառվող 10064 դեպք (2012թ.՝ 9314), այսինքն՝ աճը կազմել է 750 դեպք: Դեպքերի քանակի աճի հետ բացահայտման վիճակը վատթարացել է՝ կազմելով 70,1% (2012թ.՝ 79,6%):

2013թ. ընթացքում **մարդու դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերն աճել են 191-ով (2012թ.՝ 4536, 2013թ.՝ 4727) կամ 4,2%-ով, **հասարակության անվտանգության և հասարակական կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերը՝ 243-ով (2012թ.՝ 2878, 2013թ.՝ 3121) կամ 8,4%-ով, **սեփականության դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերը՝ 665-ով (2012թ.՝ 5810, 2013թ.՝ 6475) կամ 11,4%-ով, **տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերը՝ 357-ով (2012թ.՝ 770, 2013թ.՝ 1127) կամ 46,4%-ով, **պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերը՝ 1082-ով (2012թ.՝ 1754, 2013թ.՝ 2836) կամ 61,7%-ով, այլ հանցագործությունների դեպքերը՝ 19-ով (2012թ.՝ 28, 2013թ.՝ 47) կամ 67,9%-ով:

2013թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, 544-ով կամ 21,4%-ով **աճել են ծանր հանցագործությունների** դեպքերը (2012թ.՝ 2544, 2013թ.՝ 3088): Դեպքերի քանակի աճի հետ բացահայտման վիճակը վատթարացել է՝ կազմելով ընդամենը 58,0% (2012թ.՝ 66,0%): 26-ով կամ 16,7%-ով նվազել են առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը (2012թ.՝

156, 2013թ.՝ 130): Դրական միտում է նկատվել նաև նշված հանցագործություններով բացահայտման վիճակում: 2013թ. բացահայտումը կազմել է 80,8% (2012թ.՝ 80,1%):

2013թ. **սպանության դեպքերը նվազել են 2-ով** (2012թ.՝ 50, 2013թ.՝ 48) կամ 4%-ով, **սպանության փորձի դեպքերի թիվը մնացել է նույնը** (2012թ.՝ 25, 2013թ.՝ 25), իսկ **առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս** պատճառելու դեպքերը աճել են 16-ով (2012թ.՝ 170, 2013թ.՝ 186) կամ 9,4%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված սպանությունների բացահայտումը բարելավվել է՝ կազմելով 72,9% (2012թ.՝ 62,0%): Սպանության 48 (2012թ.՝ 50) դեպքից բացահայտվել է 35-ը (2012թ.՝ 31):

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված սպանության փորձերի դեպքերի բացահայտումը բարելավվել է՝ կազմելով 92,0% (2012թ.՝ 88,0%): 2013թ. սպանության փորձի 25 (2012թ.՝ 25) դեպքից բացահայտվել է 23-ը (2012թ.՝ 22):

Ընդհանուր բնույթի հանցագործությունների աճը պայմանավորված է ժամկետային զինվորական ծառայությունից խուսափողների թվի աճով, ինչն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին քրեական գործեր են հարուցվել նաև 3 տարի տարկետման իրավունք ստացած, սակայն հերթական բուժզննման չներկայացած զորակոչիկների նկատմամբ:

1. Ընդհանուր առմամբ հանցավորության շարժընթացում **դրական** գնահատելով դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերի նվազումը, **բացասական է գնահատվում** դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի աճը, մասնավորապես արձանագրվել է 16 դեպքով աճ (2012թ.՝ 170, 2013թ.՝ 186), և նշված հանցագործություններով բացահայտման վիճակը, այսպես՝ 2013թ. բացահայտումը կազմել է 83,9%, 186 դեպքից բացահայտվել է 156-ը (2012թ.՝ 84,1%, 170 դեպքից բացահայտվել է 143-ը):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ **դիտավորյալ սպանության, սպանության փորձի և ծանր մարմնական վնասվածք պատճառելու դեպքերի** հաշվառման, կանխարգելման, դրանց կատարմանը նպաստող հանգամանքների ուսումնասիրության, բացահայտման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերացման ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Այսպես, դիտավորյալ սպանության, սպանության փորձի և առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դեպքերին հիմնականում նախորդում են հանցագործություն կատարած անձանց և տուժողների միջև ծագած վիճաբանությունները, դրանց վերաբերյալ պարզաբանումները, որոնք հաճախ կրում են շարունակական բնույթ, իսկ առանձին դեպքերում զուգորդվում են հասարակական վայրերում կազմակերպվող հանդիպումներով:

Օպերատիվ աշխատանքների ոչ բավարար մակարդակի, այն է՝ ժամանակին տեղեկություն չստանալու արդյունքում, կատարվածի մասին տեղեկությունը ստացվում է

միայն դեպքից (սպանության, ծանր մարմնական վնասվածք) հետո: Բացի այդ, եզակի չեն այդ բնույթի հանցագործության դեպքերը զվարճանքի վայրերում, որտեղից նույնպես ժամանակին տեղեկություն չի ստացվում, հատկապես գիշերային ժամերին նման վայրերում կամ մոտակայքում ուժեղացված ծառայություն չի իրականացվում:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզվել է նաև, որ **բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների** թվի աճը հիմնականում պայմանավորված է ինչպես իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված պրոֆիլակտիկ միջոցառումների անարդյունավետությամբ, այնպես էլ բնակչության անհանդուրժողականությամբ: Այդ բնույթի հանցագործությունների պատճառ են հանդիսանում, հիմնականում, կենցաղային հարցերը:

Հարկ է նշել, որ բավարար չեն նաև այդ բնույթի հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկված քննչական միջոցառումները, ինչպես նաև նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցությունը: Վերը թվարկված թերությունների վերացման, նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցության ուժեղացման, հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից կատարվել է զգալի աշխատանք, մասնավորապես՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման և այդ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում տրվել են բազմաթիվ հանձնարարականներ, գրավոր ցուցումներ, վերացվել են քրեական գործի վարույթը կասեցնելու և նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ:

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հասարակական վտանգավորության աստիճանը բարձր է՝ հաշվի առնելով այն, որ դրանք հիմնականում կատարվում են հասարակական վայրերում, այլ անձանց ներկայությամբ՝ հասարակության անդամների մոտ առաջացնելով անպաշտպանվածության տագնապ, հատկապես, երբ այդ հանցագործությունները կատարած անձինք չեն բացահայտվում և, խուսափելով քրեական պատասխանատվությունից, մնում են ազատության մեջ: Այս համատեքստում ՀՀ դատախազությունում 15-օրյա ժամկետում չբացահայտված, բարդ, ապացուցման դժվարություններ ունեցող քրեական գործերը նախ հանգամանորեն ուսումնասիրվել և քննարկվել են, դրանցով կոնկրետ ցուցումներ և հանձնարարականներ են տրվել նախաքննության, հետաքննության մարմիններին՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ակտիվացնելու վերաբերյալ:

Հանցագործությունների բացահայտման աշխատանքներում տեղ գտած նշված թերությունները խոչընդոտում են երկրում պատշաճ քրեական քաղաքականության իրականացմանը, նվազեցնում հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը, նպաստավոր պայմաններ ստեղծում նոր հանցագործությունների կատարման համար: Ընդ որում, արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չիրականացնելու, մեղավոր բոլոր անձանց չբացահայտելու, հանցանք կատարած անձանց մեղքը հիմնավորող բավարար ապացույցներ ձեռք չբերելու պատճառով հասարակության

մոտ կարող է ստեղծվել անպաշտպանվածության զգացում՝ էապես վնասելով երկրի իրավապահ մարմինների հեղինակությանը

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման, հասարակության մեջ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ձևավորելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է տվյալ բնույթի հանցանք կատարած անձանց նկատմամբ **ձևավորել խիստ պատժողական և միասնական պրակտիկա**, միջոցներ ձեռնարկել հասարակության իրավագիտակցության, օրինապաշտության և պատժի անխուսափելիության գիտակցության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով հարկավոր է ակտիվացնել բնակչության շրջանում տարվող իրավախախտումների նախականխիչ աշխատանքները, վեր հանել և վերացնել այդ աշխատանքներում տեղ գտած թերությունները, ձեռնարկել միջոցներ՝ ուղղված հասարակության մեջ հանցագործությունների բոլոր տեսակների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը, հակաօրինական և հանրորեն վտանգավոր վարքագծի դատապարտմանը, այս բնույթի հանցավոր ոտնձգություն կատարած անձանց նկատմամբ նշանակված պատիժների մասին հասարակությանն իրազեկել զանգվածային լրատվության միջոցներով և քարոզչական այլ ակտիվ աշխատանքներով:

Ուլորտում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ հանցագործությունների չբացահայտման **պատճառներից մեկը** վկաների և տուժողների դրսևորած վարքագիծն է: Վերջին տարիներին հաճախակի են դարձել այն դեպքերը, երբ տուժողները ճիշտ չեն ներկայացնում մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքները, պատճառաբանելով, թե, իբր, դրանք ստացել են վայր ընկնելու կամ իրենց իսկ այլ անզգույշ գործողությունների հետևանքով: Առանձին դեպքերում, դատավարության այս մասնակիցները նույնիսկ միտումնավոր շեղում են քննությունը՝ մատնանշելով մարմնական վնասվածք ստանալու միանգամայն այլ հանգամանքներ, փոխելով արարքի կատարման եղանակը, ժամանակը, վայրը: Մի շարք դեպքերում էլ վկաները կամ տուժողները, ճանաչելով հանցագործություն կատարած անձին կամ նրա մասին իմանալով այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ կտան պարզելու հանցագործություն կատարած անձի ինքնությունը, դրանք չեն հայտնում վարույթն իրականացնող մարմնին, որով արհեստական դժվարություններ են ստեղծում հանցագործության բացահայտման համար:

Խնդրի լուծման համար պետք է զուգորդել ինչպես սուտ ցուցմունք տալու համար մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու, այնպես էլ վկաների, տուժողների նկատմամբ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված համապատասխան պաշտպանության միջոցների կիրառման ուղիները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանության միջոցները և դրանց իրականացման կարգը սահմանող նորմերը գրեթե չեն կիրառվում՝ համապատասխան իրավական կառուցակարգերի բացակայության պատճառով, օրինակ՝ իրավասու մարմնի, համապատասխան նյութական միջոցների բացակայություն և այլն:

Բացի այդ, ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածի 3-րդ մասի խրախուսական նորմի առկայությունը ոչ թե կանխում, այլ, որքան էլ տարօրինակ է, ընդհակառակը, նպաստում է սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից

խուսափելուն: Ստեղծվում է մի վիճակ, որ սուտ ցուցմունք տվողը, ըստ էության, մնում է անպատիժ: Այդ մասին է վկայում նաև վերջին 5 տարվա դատական վիճակագրությունը: Ըստ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների, չնայած այս հանցատեսակի խիստ տարածվածությանը, 2008-2012թթ. ընթացքում ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածով քրեական պատասխանատվության է ենթարկվել ընդամենը 48 մարդ:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների աճի պայմաններում **խիստ կարևոր է այս բնույթի հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը**: Այս առումով, առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի կանխարգելման գործում մեծ է ոչ միայն իրավապահ մարմինների և, ընդհանրապես, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև **քաղաքացիական հասարակության ինստիտուտների**՝ հասարակական կազմակերպությունների, փաստաբանների, ԶԼՄ-ների և, հատկապես, հեռուստատեսության դերը:

Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին, ապա նման բնույթի հանցագործությունների կանխման աշխատանքներին անհրաժեշտ է ներգրավել ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին, որպեսզի ժամանակին վեր հանվեն մարդկանց միջև ծագած կոնֆլիկտային իրավիճակները և միջոցներ ձեռնարկվեն դրանք հարթելու ուղղությամբ: Այդ առումով, կանխարգելմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ կարող էին դառնալ, եթե ոստիկանությունում ժամանակին ու պատշաճ միջոցներ ձեռնարկվեն, առաջին հայացքից աննշան համարվող, կենցաղային վեճերի պատճառներն ու դրանց նպաստող պայմանները վերացնելու ուղղությամբ:

Ինչպես մյուս հանցատեսակների, այնպես էլ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի կանխարգելումը սերտորեն կապված է **դրանք հայտնաբերելու, գրանցելու, հաշվառելու, հնարավորինս սեղմ ժամկետում բացահայտելու** և այդ հանցագործությունները կատարած անձանց արդարացի պատժի ենթարկելու հետ: **Ուստի, անհրաժեշտ է ուժեղացնել դատախազական հսկողությունը ինչպես նախաքննության, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների նկատմամբ և պահանջել, որպեսզի վերջիններս պատշաճ մակարդակով կատարեն հանցագործությունների բացահայտմանն ուղղված իրենց պարտականությունները:**

Վերլուծությունը ցույց է տվել, որ հանցագործությունների կանխարգելման մյուս արդյունավետ միջոցն օրենքով նախատեսված կարգով **քրեական գործերի քննության թափանցիկության և հրապարակայնության ապահովումն է:** Վերջին տարիներին ՀՀ դատախազությունը պարբերաբար տեղեկացնում է հասարակությանն առավել հնչեղություն ունեցող գործերի ընթացքի մասին, և այդ քաղաքականությունը դրական ազդեցություն է թողնում հանցավորության դեմ պայքարում ունեցած հաջողությունների լուսաբանման, հասարակական կարծիքի ձևավորման, ուստի և հանցագործությունների կանխարգելման հարցում:

2. Հաշվետու ժամանակահատվածում **արձանագրվել է թրաֆիքինգի դեպքերի նվազում 26,3%-ով** (2012թ.՝ 19, 2013թ.՝ 14), որն առաջին հայացքից կարող է մտահոգիչ թվալ՝ հաշվի առնելով այս հանցատեսակի լատենտային բնույթը: Սակայն վերլուծությունը ցույց է տալիս, որ **այդ նվազումն ունի օբյեկտիվ պատճառներ:**

Նախ, մեր երկրում քննարկվող խնդրով զբաղվող շահագրգիռ հասարակական, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին հանրապետությունում էապես նվազել է թրաֆիքինգի ռիսկայնությունը: Դա պայմանավորված է երևույթի մասին բնակչության, հատկապես խոցելի խմբերի, իրազեկության բարձրացմամբ, ինչպես նաև թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ խիստ պատիժների նշանակմամբ՝ ընդհանուր կանխիչ մթնոլորտի ձևավորմամբ: Նշվածն առավել հիմնավորվում է նրանով, որ վերջին տարիներին թրաֆիքինգի փաստերով հարուցված քրեական գործերով բացահայտված դեպքերն առավել վաղ տարիներին արձանագրված դեպքեր են: Պետք է նշել նաև, որ չնայած հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է դեպքերի նվազում, **սակայն հարուցված քրեական գործերի թվի առումով արձանագրվել է աճ միայն մեկ դեպքով (2012թ.՝ 11, 2013թ.՝ 12):**

Տեղին է հիշատակել, որ 2013թ. ԱՄՆ պետքարտուղարության կողմից թրաֆիքինգի վերաբերյալ հրապարակված ամենամյա զեկույցում նշված է այն փաստը, որ այս ոլորտում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է առաջընթաց՝ Հայաստանի Հանրապետությունը 2-րդ խմբի երկրների ցանկից տեղափոխվել է 1-ին խումբ, որում ընդգրկված են այս հանցատեսակի դեմ պայքարի ոլորտում առաջադեմ պետությունները: Զեկույցում նշվել է, որ Հայաստանն ամբողջությամբ բավարարում է թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: Արձանագրվել է նաև այս ոլորտում իրավապահ մարմինների կողմից իրականացված աշխատանքների կատարելագործման հանգամանքը:

2013թ. ընթացքում մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) վերաբերյալ օրենսդրություն չի ընդունվել: Այս առումով խնդրի համակարգային և ամբողջական լուծումն իրականացվել է 30.03.2011թ.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված համապատասխան փոփոխությունների օրենսդրական փաթեթով:

ՀՀ դատախազությունն առաջարկել է Եվրոպական հարևանության քաղաքականության՝ Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014–2015 թվականների միջոցառումների ցանկում, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունների կանխորոշման շրջանակներում, որպես իրականացման ենթակա միջոցառում ներառել «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը (ըստ անհրաժեշտության):

Ընդ որում, ՀՀ Նախագահի 29.12.2011թ. N ՆԿ-232-Ն կարգադրությամբ հաստատված՝ ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի համաձայն՝ 26.04.2012թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «ՀՀ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների»

ժամանակացույցը, համաձայն որի՝ ՀՀ գլխավոր դատախազությունը՝ որպես կատարման համար պատասխանատու մարմին, ընդգրկված է մի շարք միջոցառումների իրականացման գործընթացում, ինչի մասին յուրաքանչյուր կիսամյակ համապատասխան հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին:

3. 2013թ. գրանցվել է **հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման** 60 (2012թ.՝ 17) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 43-ով կամ 252,9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից ապահովվել է մասնակցությունը Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպվող Եվրոպայի խորհրդի **կիբերհանցագործությունների դեմ պայքարի կոնվենցիայի** կոմիտեի (T-CY) 10-րդ լիագումար նիստին, ինչպես նաև «Համագործակցությունը կիբերհանցագործության դեմ պայքարում» խորագրով հերթական համաժողովին (Octopus 2013):

2013թ. ընթացքում աշխատանքներ են տարվել կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության ապահովման մասով և ԵԱՀԿ փորձագետների հետ համատեղ մշակվել է «ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենսդրական փաթեթ, որի արդյունքում հնարավոր կլինի անհրաժեշտ լիարժեքությամբ ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու Եվրոպայի խորհրդի՝ 23.11.2001թ. Բուդապեշտի՝ «Կիբերհանցագործությունների մասին» կոնվենցիայի պահանջներին:

4. 2013թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, հանրապետությունում 665 դեպքով կամ 11,4%-ով **ավելացել են սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝** կազմելով 6475 դեպք (2012թ.՝ 5810): **Էականորեն՝ 11%-ով նվազել է** սեփականության դեմ ուղղված հանցագործությունների **բացահայտման ցուցանիշը՝** կազմելով 61,1% (2012թ.՝ 72,1%):

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների ծնող պատճառների ու դրանց նպաստող պայմանների մեջ գերակշռող գործոնները շարունակում են հանդիսանալ հեշտությամբ նյութական արժեքներ ձեռք բերելու, համեմատաբար անհոգ կյանք վարելու ձգտումը և այլն:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման, ծնող պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացման համար հարկավոր է բարձրացնել ոստիկանության ծառայությունների աշխատանքների, այդ թվում՝ հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների որակն ու արդյունավետությունը, իրականացնել նպատակային և հետևողական գործունեություն՝ այս բնույթի հանցագործությունների փաստերի գրանցման և բացահայտման ուղղությամբ, հասարակությանն իրազեկել հանցագործությունների բացահայտման և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ու պատժի ենթարկելու անխուսափելիության մասին՝ ներկայացնելով առանձին օրինակներ, հասարակության իրավագիտակցության, օրինապահության բարձրացման և աճող սերնդի պատշաճ իրավական դաստիարակության նպատակով ձեռնարկել ընդհանուր քարոզչական և պրոֆիլակտիկ աշխատանքներ:

2013թ. 687 դեպքով (2012թ.՝ 5142, 2013թ.՝ 5829) կամ 13,4%-ով **ավելացել են անձնական գույքի հափշտակության** դեպքերը, մինչդեռ **պետական կամ հանրային գույքի հափշտակության դեպքերը նվազել են** 68-ով (2012թ.՝ 258, 2013թ.՝ 190) կամ 26,4%-ով:

Պետք է նշել, որ ինչպես վերջին տարիներին, այնպես էլ 2013թ., անձնական գույքի հափշտակության դեպքերը հիմնականում արձանագրվում են **մայրաքաղաքում և նրա հարակից մարզերում**: Այս տեսակի հանցագործությունների դեպքերի քանակի աճի համար **նպաստավոր պայմաններ է ստեղծում այն**, որ հանցավոր անցյալ և հակումներ ունեցող անձինք իրենց ապրելակերպով, հանցավոր կապերով, վարքագծով շարունակում են դուրս մնալ իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության օպերատիվ ծառայությունների տեսադաշտից:

2013թ. 692-ով (2012թ.՝ 3857, 2013թ.՝ 4549) կամ 17,9%-ով ավելացել են անձնական գույքի գողության, այդ թվում՝ 269-ով (2012թ.՝ 1054, 2013թ.՝ 1323) կամ 25,5%-ով **բնակարանային գողության,** 35-ով (2012թ.՝ 111, 2013թ.՝ 146) կամ 31,5%-ով **անձնական գույքի յուրացման կամ վատնման**, 13-ով (2012թ.՝ 864, 2013թ.՝ 877) կամ 1,5%-ով **անձնական գույքին խարդախությամբ տիրանալու** դեպքերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գողության դեպքերի զգալի աճը հիմնականում պայմանավորված է հասարակական տրանսպորտում և զվարճանքի վայրերում քաղաքացիների բջջային հեռախոսների կամ դրամապանակների, ինչպես նաև ավտոմեքենաների լուսարձակների, հայելիների, պետհամարանիշների և այլ մասերի գողության դեպքերի աճով:

Գողության դեպքերի աճի պատճառների վերլուծությունը վկայում է նաև այն մասին, որ դրանք հաճախ պայմանավորված են քաղաքացիների կողմից իրենց գույքի նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցները գիշերային ժամերին չհսկվող տարածքներում կայանելու հանգամանքով:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում վերլուծությունը ցույց է տալիս, որ գրանցված բնակարանային գողությունների գերակշիռ մասը կատարվել է հարմարեցված բանալու կամ նույնատիպ տեխնիկական միջոցների գործադրմամբ դուռը բացելու եղանակով, սակայն քիչ չեն նաև պատուհանից կամ պատշգամբից մուտք գործելու միջոցով կատարված գողության դեպքերը

Այս բնույթի հանցագործությունների **նախականխման ուղղությամբ** արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ զվարճանքի վայրերում, շենքերի բակերում և տրանսպորտային միջոցներում տեսանկարահանման սարքերի տեղադրումը, ոստիկանության պարեկապահակային ծառայության աշխատակիցների նպատակաուղղված գործողությունները, քաղաքացիների զգոնության մակարդակի և հանցագործությունների բացահայտմանն ուղղված օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Այս հարցում թերացում ունի նաև նախաքննական մարմինը, որն այս հանցատեսակների վերաբերյալ քրեական գործերի քննությունը իրականացնում է ոչ արդյունավետ, չեն

կազմվում քննության պլաններ, առաջ չեն քաշվում հանցագործությունը բացահայտելու վարկածներ, հետաքննության մարմնին տրվում են ձևական հանձնարարություններ:

Ըստ վերլուծությունների՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նման ցուցանիշների առկայությունը պայմանավորված է ազգաբնակչության ծանր սոցիալական պայմաններով, արտերկիր մեկնած քաղաքացիների կողմից բնակարանները, շենք-շինությունները տևական ժամանակ առանց հսկողության թողնելու, ինչպես նաև հիշյալ բոլոր, թեկուզև ոչ խոշոր չափի գույքի հափշտակության դեպքերի պարտադիր գրանցմամբ, իսկ որոշ դեպքերում նաև ստացված օպերատիվ տեղեկությունների իրացման ընթացքում հայտնաբերված դեպքերի հաշվառմամբ:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ոստիկանության ստորաբաժանումներից պահանջվել է հանձնարարել ակտիվացնել տեղամասային տեսուչների ու օպերլիազորների կողմից սպասարկվող տարածքների բնակիչների շրջանում կանխարգելիչ-օպերատիվ միջոցառումների կատարումը՝ ապահովելով դրանց արդյունավետությունը:

Ակնհայտ է, որ գողության դեպքերի հաջող բացահայտման գրավականներից է նաև օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետ իրականացումն ապրանքների իրացման վայրերում, **մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2013թ. ընթացքում իրացման վայրերից** դեպքեր գրեթե չեն բացահայտվել կամ էլ բացահայտումները եղել են տուժողների ակտիվ միջամտության շնորհիվ և նրանց նախաձեռնությամբ, երբ նրանք են հայտնաբերել հափշտակված իրերը կամ առարկաները:

Այդ բնույթի հանցագործությունների չբացահայտումը հետևանք է հաշվառման ընթացքում բացթողումների, բացահայտման ընթացքում քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների ոչ բավարար համագործակցության: Մասնավորապես, բնակարանային գողության դեպքերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանց գերակշիռ մասը կատարվել է տուժողների հարևանությամբ բնակվող կամ մտերիմ անձանց կողմից հայտնած տեղեկություններով: Այդ բնույթի հանցագործությունների բացահայտման ընթացքում բավարար միջոցներ չեն ձեռնարկվում հարևանությամբ բնակվող անձանց, նրանց բարեկամական և ընկերական շրջապատում նմանատիպ հանցագործություններ կատարած անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ և այդ մասին հայտնի է դարձել հանցագործությունն այլ եղանակով բացահայտելուց, կամ հանցագործին հայտնաբերելուց հետո միայն: Բացի այդ, դեպքերի զգալի մասի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաճախ հանցագործների ուշադրությունը գրավել է բնակարանների, այսպես կոչված, «եվրապատուհանների» առկայությունը, մասնավորապես, շենքերի 2-րդ հարկում գտնվող բնակարանների, ուր մուտք գործելը հեշտացել է հիմնականում 1-ին և 2-րդ հարկերի միջնամասում գտնվող գազատար խողովակների միջոցով: Այդ կապակցությամբ բնակչության շրջանում բավարար բացատրական աշխատանքներ չեն տարվում հատկապես 2-րդ հարկերում գտնվող բնակիչների կողմից ճաղավանդակներ տեղադրելու անհրաժեշտության մասին:

Հաճախ կատարված գողության մասին ոստիկանության բաժնում հայտնի է դառնում հանցագործին գողության մեկ այլ դեպքով հայտնաբերելուց հետո, մինչդեռ գողության չհաշվառված դեպքի մասին մինչ այդ իմանում են շենքի բոլոր բնակիչները, ինչպես նաև տուժողների երեխաների ուսման վայրերում և այլն: Այդ կապակցությամբ նույնպես բավարար բացատրական աշխատանքներ չեն տարվում, չեն կազմակերպվում ստուգայցեր դպրոցներ և այլ ուսումնական հաստատություններ: Հանցագործության դեպքի մասին ուշ տեղեկանալու հետևանքով բացառվում է հանցագործությունը տաք հետքերով բացահայտելու հնարավորությունը:

Բացի այդ, չնայած բազմաթիվ միջնորդագրերին և նախազգուշացումներին, անվտանգության միջոցներ շարունակում են չձեռնարկվել նաև տարադրամի փոխանակման կետերի գերակշիռ մասում:

Այս բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նույնպես ցածր մակարդակի վրա է քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցությունը, տրված հանձնարարականներին հաճախ տրվում են ձևական պատասխաններ, չնշելով ձեռնարկված կոնկրետ միջոցառումների և դրանց արդյունքում ձեռք բերված տվյալների մասին: Ոչ քննչական, ոչ էլ օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից բավարար վերլուծական աշխատանքներ չեն կատարվում նաև այս բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով ստացված հեռախոսային խոսակցությունների վերծանումների կապակցությամբ:

Բնակարանային գողությունների վերաբերյալ կատարող անձը հայտնի չլինելու հիմքով կասեցված քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քննիչներն այդ գործերին չեն անդրադարձել, իրենց հանձնարարությունների կատարման վերաբերյալ ոստիկանության բաժնից տեղեկություններ չեն պահանջել, անձամբ միջոցներ չեն ձեռնարկել կատարող անձանց, հափշտակված գույքն ու արժեքները հայտնաբերելու համար: Այդ ուղղությամբ ոստիկանության բաժնի կողմից լիարժեք չեն կատարվում հետախուզական, առավել ևս օպերատիվ բնույթի աշխատանքները, որոնք ավելի գործնական ու ակտիվ բնույթ պետք է կրեն քրեական գործով վարույթը կասեցնելուց հետո:

Ավելին, քրեական գործի վարույթը կասեցնելուց հետո քննիչները հանցագործությունը բացահայտելու նպատակով առաջ չեն քաշել նոր վարկածներ, չեն ստուգել այն անձանց, ովքեր կարող են կրել տվյալ հանցագործությունը կատարելու հատկանիշներ, չեն ուսումնասիրվել նույնաբնույթ հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերը, այդ թվում այն անձանց վերաբերյալ քրեական գործերը, ովքեր արդեն դատապարտվել են: Արդյունքների համադրումը հնարավորություն կտար որոշակի շրջանակից կոնկրետացնելու հանցագործություն կատարող անձանց:

Օպերատիվ աշխատակիցների ամենօրյա ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն տվյալ տարածքում հաշվառում չունեցող և վարձակալությամբ բնակվող, ինչպես նաև կասկածելի կենսակերպ ունեցող անձինք՝ հնարավոր հանցավոր գործունեությունը կանխելու նպատակով: Անհրաժեշտ է պարբերաբար վերանայել տվյալ տարածքում գողություններ, կողոպուտներ կատարած, ինչպես նաև այլ տարածքի բնակիչ հանդիսացող և

նախկինում հանցագործությունների, այդ թվում՝ գողությունների, կողոպուտների համար դատապարտված անձանց ցուցակները՝ ռեցիդիվ թույլ չտալու նպատակով: Գիշերային ժամերին կազմակերպել ստուգայցեր տվյալ տարածքում տեղակայված գիշերային և ինտերնետ ակումբներ, սրճարաններ և ժամանցի վայրեր, բուքմեյքերական կետեր ու այլ հնարավոր հավաքատեղիներ՝ հակահասարակական արարքները, մասնավորապես, գողությունները կանխելու նպատակով: Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել և պարզել այն բնակարանները, որոնց բնակիչները բացակայում են երկար ժամանակ և ձեռնարկել համապատասխան նախազգուշական միջոցներ՝ հնարավոր գողությունները նախականխելու նպատակով:

Օպերատիվ-հետախուզական, քննչական և դատավարական գործողություններից բացի, գողությունների դեմ համալիր պայքարը պահանջում է նաև ընդհանուր քարոզչական աշխատանք, հասարակության իրավագիտակցության բարձրացում, քաղաքացիների իրազեկում հափշտակությունների կատարմանը նպաստող պայմանների ու պատճառների, ինչպես նաև նախատեսված քրեական պատասխանատվության և պատժի մասին: Զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ անհրաժեշտ է հասարակության մեջ ձևավորել գողությունների և, ընդհանրապես, հանցագործությունների բոլոր դրսևորումների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտ, դատապարտել հակաօրինական և հանրորեն վտանգավոր վարքագիծը:

Հանցագործությունների, այդ թվում՝ գողությունների և, հատկապես, բնակարանային գողությունների դեմ արդյունավետ պայքարի նպատակով անհրաժեշտ է ապահովել քննչական և հետաքննական մարմինների արդյունավետ համագործակցություն, միջոցներ ձեռնարկել հանցածին կողմնորոշումներ ունեցող, այդ թվում՝ համասեռ արարքների համար դատապարտված և պատժի կրման վայրերից վերադարձած անձանց անհատական պրոֆիլակտիկայի և ռեցիդիվի կանխման ուղղությամբ, որով կբարձրացվի նաև հանցագործների նկատմամբ իրականացվող պատժի արդյունավետության ապահովումը:

Վերը թվարկված թերությունների վերացման, համագործակցության ուժեղացման, հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից կատարվել են զգալի աշխատանքներ, մասնավորապես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման և այդ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում տրվել են բազմաթիվ գրավոր ցուցումներ, հանձնարարականներ, վերացվել են քրեական գործի վարույթը կասեցնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ:

Ամփոփելով 2013թ. ընթացքում ոստիկանությունում գրանցված բնակարանային գողությունների բացահայտման ցածր ցուցանիշը, կարելի է հետևություն անել, որ դրանք պայմանավորված են հետևյալով.

1) օպերատիվ աշխատանքների ձևական կազմակերպմամբ, բնակարանային գողություններով ստացված օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների վերլուծության բացակայությամբ, օպերատիվ-հետախուզական և քննչական

միջոցառումների մասին համատեղ պլանների ձևական կազմմամբ և դրանց՝ ամենևին ոչ հետևողական ու համատեղ իրականացմամբ,

2) հետաքննության մարմնին քննիչների կողմից տրվող հանձնարարությունների ձևականությամբ (օրինակ՝ քննիչներն իրենց տրամադրության տակ ունենալով տուժողներից ստացված սպառիչ տեղեկություններ գողացված ապրանքների անունների, դրանց քանակի, արտաքին տեսքերի և այլ հատկանիշների վերաբերյալ, ոստիկանության բաժնին, որպես կանոն, վերացական հանձնարարություններ են տալիս՝ ձևակերպելով հայտնաբերել գողոնը):

Բնակարանային գողությունների դեմ պայքարն ավելի արդյունավետ կազմակերպելու, դրանք բացահայտելու և կանխարգելելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

1) կիրառել հանցագործությունների, մասնավորապես, բնակարանային գողությունների աճի պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացմանն ուղղված արդյունավետ միջոցներ,

2) ոստիկանության ծառայությունների ուժերով պարբերաբար կազմակերպել շրջագայություններ, համագործակցված աշխատանքներ տանել պահպանության բաժնի հետ՝ ավելի շատ բնակարաններ պահպանության տակ վերցնելու համար, բնակչության շրջանում տանել բացատրական աշխատանքներ՝ բնակարաններում ահազանգման սարքեր տեղադրելու և այն պահպանության բաժնին միացնելու համար,

3) կատարել կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) աշխատանքներ նախկինում դատապարտված անձանց հետ, հատկապես հանցագործություն կատարած և ոստիկանությունում հաշվառված անձանց շրջանում, այդ աշխատանքներն ավելի նպատակային և արդյունավետ դարձնել այն հաշվով, որ հնարավորինս բացառվեն հանցանք կատարած անձանց կողմից նոր հանցագործություն կատարելը,

4) բարելավել համագործակցությունը նախաքննության և հետաքննության մարմինների միջև, որպեսզի գողությունների վերաբերյալ գործերով տրվեն քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համապատասխան հանձնարարություններ, ժամանակին նշանակվեն անհրաժեշտ դատական փորձաքննություններ՝ սպառիչ հարցերի առաջադրմամբ, նախապես խորհրդակցելով փորձագետների կամ համապատասխան մասնագետների հետ,

5) բնակարանային գողությունների դեմ տարվող պայքարի աշխատանքները կազմակերպելիս և իրականացնելիս, հետաքննության և նախաքննության ընթացքում ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, այդ հանցագործությունները կատարողներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու, քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական գործնական միջոցներ ձեռնարկելու, այդ թվում՝ վարույթը կասեցված քրեական գործերով, հարկադրանքի միջոցները ճիշտ և ժամանակին կիրառելու (ձերբակալում, խափանման միջոցներ, բերման ենթարկել, խուզարկություն, առգրավում, գույքի վրա կալանք դնել և այլն), նախաքննության ժամկետները պահպանելու, նախաքննության ընթացքում գործի հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ

հետազոտելու, քաղաքացիներին պատճառված վնասը վերականգնելու վերաբերյալ օրենքի պահանջներն անթերի կատարելու ուղղությամբ:

Որոշակի փոփոխություններ է կատարվել նաև **ավազակության դեպքերի** շարժընթացում, դեպքերն աճել են 10-ով կամ 15,9%-ով (2012թ.՝ 63, 2013թ.՝ 73): 8,4%-ով նվազել է նաև ավազակության դեպքերի բացահայտման ցուցանիշը (2012թ.՝ 71,4%, 2013թ.՝ 63,0%):

Հաշվի առնելով նշված հանցատեսակի վտանգավորության աստիճանը, ավազակության դեպքերով հարուցված քրեական գործերը մշտապես գտնվել են ՀՀ դատախազության ուշադրության կենտրոնում: Երկշաբաթյա ժամկետում չբացահայտված ավազակության դեպքերով բոլոր քրեական գործերը, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշման համաձայն, քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչությունում, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալի մոտ, տրվել են ցուցումներ, իսկ առանձին դեպքերում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականներ են տրվել ՀՀ ոստիկանության ղեկավարությանը:

2013թ. ընթացքում 63-ով կամ 25,5%-ով նվազել են **կողոպուտի դեպքերը**: Դեպքերի նվազմանը զուգահեռ, էականորեն՝ 10,3%-ով նվազել է նաև նշված դեպքերի բացահայտման ցուցանիշը (2012թ.՝ 60,3%, 2013թ.՝ 50,0%):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որպես կողոպուտի կատարման առավել տարածված ձևեր շարունակում են մնալ բջջային հեռախոսների և կանանց կողմից կրվող ոսկյա զարդերի բացահայտ հափշտակման դեպքերը:

2013թ. ընթացքում որոշակի **բացասական փոփոխություններ** են տեղի ունեցել **խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի** շարժընթացում՝ արձանագրվել է նման հանցագործությունների աճ 13 դեպքով (2012թ.՝ 864, 2013թ.՝ 877) կամ 1,5%-ով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս շարունակվում է քաղաքացիաիրավական վեճերի վերաբերյալ դատական ատյաններում քննված գործերի արդյունքներից դժգոհ մնացած քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների հիման վրա նախապատրաստված նյութերով ակնհայտ անհիմն քրեական գործերի հարուցման արատավոր երևույթը, որոնք դատական հեռանկար չեն կարող ունենալ և քննության արդյունքում կարճվում են հանցակազմի կամ հանցադեպքի բացակայության հիմքով: Նշված երևույթները խոսում են այն մասին, որ դատախազները նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ իրականացնում են ոչ պատշաճ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն:

Որոշակի փոփոխություն է տեղի ունեցել նաև **տրանսպորտային միջոցներ փախցնելու դեպքերի շարժընթացում՝** նախորդ տարվա համեմատությամբ **դեպքերը նվազել են** 10-ով (2012թ.՝ 61, 2013թ.՝ 51) կամ 16,4%-ով, սակայն 7,5%-ով (2012թ.՝ 82,0%, 2013թ.՝ 74,5%) **նվազել է նաև այդ հանցագործությունների բացահայտման ցուցանիշը**: 2013թ. գրանցվել է տրանսպորտային միջոցներ փախցնելու 51 դեպք, որից 38-ը բացահայտվել է:

5. 2013թ. ընթացքում նախորդ տարվա համեմատ ՀՀ-ում 243 դեպքով կամ 8,4%-ով **ավելացել են հասարակության անվտանգության և հասարակական կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը**՝ կազմելով 3121 դեպք (2012թ.՝ 2878): 1,3%-ով **նվազել է նշված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը**՝ կազմելով 92,1% (2012թ.՝ 93,4%):

2013թ. արձանագրվել է **խուլիգանության** 185 դեպք (2012թ.՝ 189), որից զենքի գործադրմամբ կատարվել են 32-ը (2012թ.՝ 33): Խուլիգանության **դեպքերը նվազել են** 4-ով կամ 2,1%-ով, իսկ զենքի գործադրմամբ կատարվածները՝ 1 դեպքով կամ 3,0%-ով: 4,9%-ով **նվազել է խուլիգանության դեպքերի բացահայտման ցուցանիշը**՝ կազմելով 93,5% (2012թ.՝ 98,4%), ընդ որում 9,5%-ով (2012թ.՝ 93,9%, 2013թ.՝ 84,4%) նվազել է զենքի գործադրմամբ խուլիգանությունների դեպքերի բացահայտման ցուցանիշը:

Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք, որպես կանոն, կատարվել են ալկոհոլային խմիչքների ազդեցության տակ գտնվող անձանց կողմից, երեկոյան ժամերին, հասարակական և բազմամարդ վայրերում: Այդ հանցագործությունների ծնող պատճառների և նպաստող պայմանների շարքին կարելի է դասել օրինակ՝ ալկոհոլի ազդեցության տակ անձի մոտ առաջացող ագրեսիվ վարքագծի դրսևորումը, և այլն:

Վերը հիշատակված գործոնները հաճախ սուբյեկտիվ բնույթ են կրում և, որպես հանցագործությունների կատարմանը դրդող և նպաստող պայմաններ, անկանխատեսելի են ու կանխարգելման իմաստով անվերահսկելի:

Բարդություններ են առաջանում **խուլիգանության** դեպքերի հաշվառման և բացահայտման ընթացքում՝ կապված հանցանքը հիմնավորող ապացույցներ՝ ականատեսների ցուցմունքներ ձեռք բերելու հետ: Հաճախակի այդ բնույթի հանցագործությունները կատարվում են հանցագործի բնակության վայրում և դեպքերը մնում են չբացահայտված այն պատճառով, որ վկաները հարևաններ են ու, ի վերջո, նրանք կամ հրաժարվում են բացատրություններ տալուց կամ էլ տալիս են իրականությանը չհամապատասխանող բացատրություններ:

Ինչ վերաբերում է խուլիգանության դեպքերի էական նվազմանը, ապա այն պայմանավորված է նաև խուլիգանության հանցակազմի առկայության վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.03.12թ թիվ ԱՎԴ/0014/01/11 նախադեպային որոշմամբ տրված մեկնաբանությամբ, որով, ըստ էության, նեղացվել են խուլիգանության հանցակազմի սահմանները և մարմնական վնասվածքներով գրանցված դեպքերի քրեաիրավական որակման առումով դրանց ուղեկցող ոչ բոլոր հակահասարակական արարքներն են դիտվել որպես ուղղակի դիտավորությամբ կատարված հասարակական կարգի կոպիտ խախտումներ և դրա արդյունքում բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումներ:

2013թ. 10 դեպքով կամ 2,4%-ով **աճել են հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրա ապօրինի շրջանառության դեպքերը**՝ 433 (2012թ.՝ 423), ինչը հանցավորության շարժընթացում գնահատվում է որպես դրական միտում՝ հաշվի առնելով տվյալ տեսակի հանցագործությունների խիստ քողարկվածությունը:

2013թ. գրանցվել է **ճանապարհատրանսպորտային հանցագործությունների** 1050 դեպք (2012թ.՝ 960), **աճը կազմել է** 90 դեպք կամ 9,4%: 13 դեպքով կամ 7,1%-ով աճել են նաև մահվան ելքով ՃԵԿ-ի խախտման դեպքերը՝ 196 դեպք (2012թ.՝ 183), սակայն աճել է այդ բնույթի հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 95,4% (2012թ.՝ 95,1%):

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի աճը հիմնականում պետք է բացատրել վարորդների կողմից ալկոհոլի օգտագործմամբ, սահմանված արագության գերազանցմամբ, ինչպես նաև մայրուղիների որոշ հատվածներում լուսավորության և համապատասխան ճանապարհային նշանների բացակայությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի զգալի մասը կատարվում է տաքսիների վարորդների կողմից:** Նկատի ունենալով բնակչության սպասարկման տվյալ ոլորտի կարևորությունը, անհրաժեշտ է սահմանել վերահսկողության գործուն միջոցներ, որպեսզի **բացառվեն տաքսու վարորդների կողմից 24 ժամ առանց հանգստի աշխատելու դեպքերը**:

2013թ. 6,8%-ով **նվազել է մայրաքաղաքում** արձանագրված մահվան ելքով ճանապարհատրանսպորտային դեպքերի թիվը: Նշված հանգամանքը կարող է պայմանավորված լինել վերջին շրջանում մայրաքաղաքում կատարված աշխատանքներով՝ մի շարք փողոցներում վերգետնյա անցումների կառուցմամբ, արագաչափերի և տեսախցիկների տեղադրմամբ:

Տրանսպորտային հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքներ են՝ ճանապարհների շինարարական, ինժեներատեխնիկական և կառուցապատման աշխատանքներում առկա թերությունները, ինչպես նաև քաղաքային ճանապարհներին երթևեկության նշանների, հետիոտնային նշագծումների, իսկ գյուղական շրջաններում նաև լուսավորության բացակայությունը, որոնք անուղղակիորեն նպաստում են այս բնույթի հանցագործությունների աճին:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես 2013 թվականին, այնպես էլ նախորդ տարի, վթարների առաջացման հիմնական պատճառը եղել է վարորդների կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցները վարելը, վրաերթների դեպքերում՝ հետիոտների կողմից փողոցը ոչ սահմանված տեղերով հատելը, ճանապարհների ոչ բարվոք վիճակը, ավտոմայրուղիներում սահմանված արագության գերազանցումը, ոչ սեզոնային անվադողերով տրանսպորտային միջոցների շահագործումը, ճանապարհների լեռնային հատվածներում բազմաթիվ ոլորանների առկայությունը և այլն:

Մահվան ելքով գրեթե բոլոր դեպքերում տրանսպորտային միջոցները վարող անձինք գտնվել են ալկոհոլի ազդեցության տակ, ուստի այս կապակցությամբ անհրաժեշտ է նշված հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի առումով կարևորվում է նաև օրենսդրական թերությունների և բացերի վերացումը:

Բացի այդ արտասահմանյան տարբեր երկրներում ալկոհոլի ազդեցության տակ գտնվող վարորդների համար օրենսդրությամբ սահմանվում են պատժի համեմատաբար խիստ տեսակներ: Մասնավորապես, ալկոհոլի ազդեցության տակ գտնվող վարորդի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում մեկից ավելի մարդու

մահ առաջանալու դեպքերում, Սալվադորում, Թայլանդում, Ինդոնեզիայում և Չինաստանում նույնիսկ նախատեսված է մահապատիժ: Ի դեպ, նույն արարքի համար պատասխանատվություն նախատեսող ՌԴ քրեական օրենսգրքում այս առումով 2013 թվականին կատարվել է փոփոխություն, մասնավորապես, խստացվել են այս արարքի համար նախատեսված սանկցիաները, օրինակ՝ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը ալկոհոլի ազդեցության տակ կատարելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ, առավելագույն 9 տարուց փոփոխվել է 5-ից 15 տարի:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում 2013թ. գրանցվել է 1222 (2012թ.՝ 1139) հանցագործության դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 83-ով կամ 6,8%-ով:

Արձանագրված դեպքերից 527-ը (2012թ.՝ 515) իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանց ապօրինի իրացման դեպքեր են: Այսինքն՝ գրանցվել է դեպքերի աճ 12-ով կամ 2,28%-ով:

2013թ. գրանցվել է առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության 525 (2012թ.՝ 597) դեպք, այսինքն՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը նվազել են 72-ով կամ 12%-ով:

Արձանագրված դեպքերից բացահայտվել է 945-ը (2012թ.՝ 935), չի բացահայտվել 94-ը (2012թ.՝ 105): Բացահայտումը նախորդ տարվա 89,9%-ի դիմաց կազմել է 90,8%, այսինքն՝ աճել է 0,9%-ով:

Ներկայումս եզակի դեպքերում է բացահայտվում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը ներգրավված անձանց ողջ շրջանակը, որոշ դեպքերում են միայն հայտնաբերվում թմրամիջոցները ՀՀ ապօրինի ներմուծած անձինք: **Թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով** քննված քրեական գործերից իրացնողների վերաբերյալ անջատված մասերով կատարվող աշխատանքները նույնպես բավարար չեն կարող գնահատվել, քանի որ քրեական գործի վարույթը կասեցնելուց հետո ոչ միշտ են կատարվում հնարավոր բոլոր քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումները հանցագործությունը բացահայտելու համար:

Վերջին տարիներին **թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում** դեպքերի աճի դինամիկ տեմպ ունեցող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, ինչպես նաև թմրամիջոցների մաքսանենգության դեմ պայքարը մշտապես եղել ու մնում է առաջնային խնդիր: Նշված հանցատեսակների դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել դրանց վերաբերյալ քննվող քրեական գործերի քննության որակին և օպերատիվ-հետախուզական մարմինների հետ պատշաճ համագործակցության հարցին: Նկատի ունենալով, որ նշված հանցատեսակներն իրենց բնույթով քողարկված են և, որպես կանոն, բացահայտվում են քննչական ու օպերատիվ-հետախուզական համագործակցված աշխատանքի արդյունքում, ուստի վիճակագրական տվյալներ ներկայացնելիս պետք է կարևորել այդ

հանցագործությունների դեպքերի հայտնաբերման ցուցանիշը՝ այն դիտարկելով համեմատական վերլուծության մեջ:

Տվյալ դեպքում՝ 2013թ. արձանագրված **թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հանցագործությունների դեպքերի** որոշակի աճի միտումը վկայում է այդ հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարելավման մասին, ինչը հիմնականում պայմանավորված է նշված բնագավառում օպերատիվ-հետախուզական գործունեություն ծավալելու իրավասությամբ օժտված մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետ կազմակերպմամբ և իրականացմամբ, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնող և շահագրգիռ մյուս մարմինների պատշաճ համագործակցությամբ:

Պարեկապահակային ծառայության հետ համագործակցության ընթացքում վերջինիս պահակակետերում և ծառայության իրականացման երթուղիներում պետք է կազմակերպվի թմրամիջոցների հետ կապված իրավախախտում կատարած անձանց բացահայտումը:

Հերթապահ մասերի աշխատակիցների հետ համագործակցության ընթացքում բերման ենթարկված անձանց հետ կապված պետք է աշխատանքներ տարվեն վերջիններիս կողմից թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ կատարած լինելու հնարավորությունը ուսումնասիրելու համար: Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների կատարման վերաբերյալ հաղորդումներ ստանալիս հերթապահ մասի աշխատակիցները պետք է ապահովեն օպերատիվ-հետախուզական և քննչական արդյունավետ գործողությունների իրականացումը տաք հետքերով: Հերթապահ մաս բերման ենթարկվածները պետք է ստուգվեն պրոֆիլակտիկ հաշվառումներով, եթե անձը գտնվում է հաշվառման մեջ, դրա վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ուղղվի համապատասխան ստորաբաժանում:

Հատկապես պետք է ընդգծել թմրամիջոցների դեմ պայքարի ստորաբաժանման աշխատակիցների և քննիչների միջև համագործակցության կարևորությունը: Նրանց փոխհամաձայնեցված գործողություններն ուղղված են օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում ստացված տվյալների օգտագործմանը և դրանց հիման վրա հանցագործություն կատարած անձի նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելուն: Առավել պատասխանատու պահ է համատեղ ստացված տվյալների գնահատումը և դրանց օգտագործումը: Քննիչները և օպերատիվ աշխատակիցները պետք է մշտապես տեղեկացնեն միմյանց նոր հանգամանքների և դրանց օգտագործման ընթացքում ստացված արդյունքների վերաբերյալ, քանի որ իրացնողների, հափշտակողների, առաքիչների, որջերի կազմակերպիչների, այլ անձանց օգտագործմանը հակողների բացահայտումը պահանջում է նշված հանցագործների գործունեության առանձնահատկությունների խոր իմացություն:

Այս բնույթի հանցագործությունների բացահայտման և կանխարգելման գործում օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումները դեռևս պատշաճ մակարդակի վրա չեն: Դրանց ուսումնասիրությամբ պարզվել է, որ թմրանյութերի

իրացմամբ զբաղվող անձինք երկարատև, առանց խոչընդոտների իրականացնում են հանցավոր գործունեություն ու մնում չբացահայտված:

Այս համատեքստում ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով հանվում է ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի դիսպոզիցիայում սահմանված «ապօրինի» բառը՝ դրանով իսկ ապահովելով օրենսդրական միասնականություն և որոշակիություն, ներքին տրամաբանական կապ քրեական և վարչական պատասխանատվությունների միջև, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և Քրեական օրենսգրքով սահմանված նորմերի հստակ սահմանազատում՝ ելնելով իրավախախտումների հանրային վտանգավորության աստիճանից, քանի որ հիմնավոր չէ, որ անկախ «ապօրինի» կամ «օրինական» լինելու հանգամանքից, եթե թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսեր ցանել կամ աճեցրել են **մանր կամ զգալի** չափերով՝ այն միևնույն է առաջացնում է վարչական պատասխանատվություն, իսկ խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանցակազմի առկայության պարտադիր հատկանիշ է հանդիսանում «ապօրինի» նշված բույսերը ցանելը կամ աճեցնելը:

2013թ. գրանցվել է **կոռուպցիոն բնույթի** հանցագործության 903 (2012թ.՝ 703) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 200-ով կամ 22,1%-ով:

Դատախազության կողմից կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ հաջող պայքարում անհրաժեշտ պայման է համարվել կադրերի հետ աշխատանքի ճիշտ կազմակերպումը:

Այսպես, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից դատախազների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման մշտապես գործող դասընթացների ընթացքում դատախազների, դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց համար կազմակերպվել են կոռուպցիային հակազդելու, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բնորոշման, որակման և դատական պրակտիկայի վերաբերյալ դասախոսություններ և գործնական սեմինարներ:

ՀՀ գլխավոր դատախազությունը 2013թ. ապրիլի 10-12-ը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած՝ ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև 2012-2013թթ. համագործակցության ծրագրի շրջանակներում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում, ինչպես նաև կոռուպցիոն և այլ իրավախախտումների կանխարգելման հարցում դատախազությունների կադրային ստորաբաժանումների միջև պրակտիկայի, պայքարի ձևերի արդյունավետության հարցերի քննարկմանը:

ՀՀ գլխավոր դատախազությունը 2013թ. մայիսի 13-15-ը մասնակցել է Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում կայացած «Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրավապահ գերատեսչությունների իրազեկվածության բարձրացումը» թեմայով՝ Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի՝ եվրոպական հանձնաժողովի

կողմից ֆինանսավորվող «Արևելյան գործընկերություն-սահմանների համալիր կառավարման առաջատար նախաձեռնության թրեյնինգային նախագծի» շրջանակներում կազմակերպած տարածաշրջանային դասընթացին:

ՀՀ գլխավոր դատախազությունը 03.05.2013թ. մասնակցել է Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից կազմակերպված «Ազատազրկվածների նկատմամբ վերաբերմունքը ոստիկանության բաժիններում» թեմայով զեկույցի քննարկմանը:

ՀՀ գլխավոր դատախազությունը 04.05.2013թ. մասնակցել է ՄԱԿ-ի՝ կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի կիրառման մոնիթորինգ իրականացնող երկու երկրների՝ Ղրղզստանի և Լիտվայի, ինչպես նաև ՄԱԿ-ի՝ թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի ներկայացուցիչների հետ հանդիպմանը:

ՀՀ դատախազությունը 2013թ. մայիսի 13-15-ը մասնակցել է «Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրավապահ գերատեսչությունների իրազեկվածության բարձրացումը» թեմայով՝ Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «Արևելյան գործընկերություն-սահմանների համալիր կառավարման առաջատար նախաձեռնության թրեյնինգային նախագծի» շրջանակներում կազմակերպված տարածաշրջանային դասընթացին:

ՀՀ դատախազությունը 2013թ. հունիսի 20-25-ը մասնակցել է Ջինան քաղաքում Հակակոռուպցիոն կառույցների միջազգային ասոցիացիայի (IAACA) կազմակերպած «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ բաժնով նախատեսված «Տեխնիկական օգնությունը և տեղեկատվության փոխանակումը» թեմայով 5-րդ սեմինարին:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը 2013թ. օգոստոսի 14-19-ը մասնակցել է Պեկին քաղաքում ՀՀ գլխավոր դատախազության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գերագույն ժողովրդական դատախազության միջև 2012-2013թթ. համագործակցության ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ փորձի փոխանակումը, պրակտիկայի, պայքարի արդյունքների և արդյունավետության վերաբերյալ մի շարք հարցերի քննարկումը» թեմայով սեմինարին:

Բացի այդ, 2013թ. ընթացքում արտասահմանյան գործընկերների հրավերով ՀՀ դատախազության համակարգի մի շարք դատախազներ գործուղվել են այլ երկրներ: Մասնավորապես. ՀՀ դատախազությունը 2013թ. մարտի 18-22-ը մասնակցել է Չեխիայի Հանրապետության Պրահա քաղաքում դատախազների, դատավորների և քննիչների հակակոռուպցիոն վերապատրաստմանը, իսկ 2013թ. մարտի 20-24-ը՝ Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի աշխատանքային խմբի հանդիպմանը:

ՀՀ գլխավոր դատախազի օգնականը և ՀՀ դատախազության աշխատակազմի հանրային կապերի վարչությունը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և «Հայ պետական ծառայողներ» հասարակական կազմակերպության հետ համատեղ, ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողների մասնագիտական վերապատրաստման համար պատրաստել և հրատարակման է ներկայացրել ձեռնարկ՝ «Հաղորդակցման հմտությունների և էթիկայի

կանոնների կիրարկումը» վերնագրով՝ ուղղված դատախազության համակարգում պետական ծառայողների հակակոռուպցիոն ընկալման ձևավորմանը :

6. 2013թ. ընթացքում արձանագրվել է **անչափահասների մասով հանցագործությունների կայուն վիճակ՝** 418 (2012թ.՝ 414) դեպք:

Անչափահասների կողմից կատարված հանցագործություններին և դրանց աճին նպաստող պայմաններ են հանդիսանում ինչպես անչափահասների սոցիալական վատ վիճակը, հանրակրթական դպրոցներում և տեղական ինքնակառավարման մարմիններում նրանց հետ տարվող ընդհանուր դաստիարակչական ոչ բավարար աշխատանքները, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների ցածր մակարդակը:

7. 2013թ. ընթացքում հանցագործություն կատարած 327 (2012թ.՝ 441) անձ եղել է նախկինում դատապարտված, որոնցից 163-ը (2012թ.՝ 205)՝ 2 և ավելի անգամ, այսինքն՝ **արձանագրվել է կրկնահանցագործությունների նվազում**, ինչը դրական միտում է:

Կրկնահանցագործության պրակտիկայի ուսումնասիրությունը և վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ **անհրաժեշտ է ակտիվացնել նախականխիչ միջոցառումների իրականացումը,** մասնավորապես՝ բարձրացնել ոստիկանության բաժիններում գործող պրոֆիլակտիկայի բաժանմունքների աշխատակիցների ակտիվությունն ազատազրկման վայրից, այդ թվում՝ համաներում հայտարարելու մասին ՀՀ ԱԺ որոշման հիման վրա վերադարձած անձանց կենցաղի և վարքագծի, նրանց զբաղմունքի ու հակումների նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու առումով:

Նշված հարցի լուծմանն էապես կարող է օգնել նաև կրկնահանցագործների նկատմամբ խիստ պատժողական քաղաքականության իրականացումը:

Կրկնահանցագործությունների համար նպաստող գործոններ են պատժի կրման վայրերից վերադարձած անձանց կողմից նոր հակասոցիալական կապերի ստեղծումը կամ հին հանցավոր կապերի վերականգնումը, ինչպես նաև պատժիչ քաղաքականության ոչ ճիշտ իրականացումը, երբ ճիշտ չի կազմակերպվում պատժի կրումը կամ սխալ են կիրառվում պատժի կրումից վաղաժամկետ ազատման և պայմանական դատապարտման ինստիտուտները, անձն ազատվում է պատժի կրումից առանց բավարար հիմքերի: Շատ հաճախ, ազատազրկման վայրերում ուղղվելու փոխարեն անձը ենթարկվում է բացասական ուժեղ ազդեցության, յուրացնում հակասոցիալական վարքագծի կանոնները՝ հանցաշխարհի օրենքները:

Կրկնահանցագործությունները հնարավորինս կանխելու նպատակով հարկավոր է անձանց որոշակի քանակակազմից հայտնաբերել նրանց, ում մոտ նկատելի են կրկին հանցագործություն կատարելու հակումներ, նրանց նկատմամբ տանել անհատական պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ նրանց վրա դրական ազդեցություն գործադրելու համար, տեսադաշտում պահել նրանց հին հանցավոր կապերը՝ դրանց վերականգնումը և նոր կապերի ստեղծումը բացառելու նպատակով, օժանդակել սոցիալապես օգտակար կապերի հաստատմանը և հանցավոր խմբերի ազդեցությանը դիմակայելուն, հնարավորինս լուծել նրանց զբաղվածության հարցերը:

8. 2014թ. հունվարի 1-ի դրությամբ **հետախուզման մեջ է մնացել** 11710 անձ, որոնցից 11638-ը (2012թ.՝ 11240)՝ հանցագործներ են, իսկ 72-ը (2012թ.՝ 68)՝ անհայտ կորածներ:

2013թ. ընթացքում հայտնաբերվել է 1886 (2012թ.՝ 1902) հետախուզվող և 138 (2012թ.՝ 145) անհայտ կորած:

Կատարած աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների բացահայտման աշխատանքների վրա, մի շարք օբյեկտիվ պատճառներից զատ, լուրջ ազդեցություն ունեն նաև այնպիսի **սուբյեկտիվ պատճառներ**, ինչպիսիք են՝ դատախազի, քննիչի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող աշխատակիցների համագործակցության ցածր մակարդակը, կոնկրետ քրեական գործերով իրականացվող քննության ցածր որակը, քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը, քննության նկատմամբ իրականացվող անբավարար գերատեսչական վերահսկողությունն ու դատախազական հսկողությունը:

Շարունակում է անհանգստացնող մնալ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով հետաքննության մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցածր որակն ու անարդյունավետությունը:

Նախաքննության քաշքշուկն ու ձգձգումները մասամբ անդրադարձել են հանցագործությունների բացահայտման ցուցանիշների վրա: Որպես քննության կազմակերպված ընթացակարգ, **պլանավորումը՝** հարուցված քրեական գործերով ձեռք բերված տվյալների հիման վրա այն միջոցների և ուղիների ու դրանց իրականացման հաջորդականության որոշելն է, որի օգնությամբ, քիչ ժամանակ ու եռանդ ծախսելով, բացահայտվում են հանցագործությունները: Քրեական գործերի քննությունը չպլանավորելու հետևանքով էական բացթողումներ են թույլ տրվում քննության վարկածների ընտրության և ստուգման ժամանակ, անհետաձգելի քննչական գործողություններ կատարելիս կամ ոստիկանության բաժնի հետ համագործակցելիս, ինչն էլ հանգեցնում է ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասի խախտումների, այն է՝ քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալու քննությանը, ընդունելու անհրաժեշտ որոշումներ, նշված օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնելու քննչական և այլ դատավարական գործողություններ, սակայն չի կատարում:

Վարույթը կասեցված քրեական գործերի քննության լրիվության ապահովման ու հանցագործությունների բացահայտման ուղղությամբ աշխատանքները կատարվում են ոչ պատշաճ, և քննիչները հաճախ բավարարվում են միայն օպերատիվ-հետախուզական աշխատանքներն իրականացնող մարմնին համապատասխան հանձնարարություն ներկայացնելով: Բոլոր հնարավոր միջոցները չեն ձեռնարկվում հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ, արագ ու լիարժեք չի ստուգվում հանցագործության կատարման մեջ կասկածվողների այլուրեքությունը: Տուժողների հարցաքննությամբ հանգամանորեն չեն բացահայտվում հանցագործների արտաքին նկարագիրը, նրանց վարքագիծը, հափշտակված արժեքների և իրերի առանձնահատկությունները, այդ մասին քննիչները հաճախ գրավոր չեն կողմնորոշում

օպերատիվ անձնակազմին: Քրեական գործերի վարույթը կասեցնելուց հետո, որպես կանոն, դրանք մնում են անշարժ:

Վարույթը կասեցված քրեական գործերի ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ գրեթե վերացել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների վերաբերյալ համատեղ հաստատված պլաններ կազմելու պրակտիկան, որը դարձյալ խոսում է այն մասին, որ նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցությունը իրոք կրում է ձևական բնույթ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների չպլանավորման արդյունքում, կողոպուտի և գողության եղանակով հափշտակությունների վերաբերյալ հարուցված քրեական գործերով չի կատարվում դեպքերի և գործերի համադրում՝ հանցագործության կատարման եղանակ, տեղ, ժամանակ, մեխանիզմ և այլն:

Լուրջ անելիքներ կան հետախուզման մեջ գտնվող մեղադրյալների գտնվելու վայրը պարզելու, նախորդ տարիներին կատարված հանցագործությունները բացահայտելու, հանցավոր խմբերի բոլոր անդամներին և անչափահասներին հանցավոր գործունեության ներգրավողներին ի հայտ բերելու, հանցագործությունների կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները քննությամբ պարզելու և ներգործության համարժեք միջոցներ ձեռնարկելու գործում:

Ստեղծված իրավիճակը շտկելու և հանցագործությունների բացահայտման աշխատանքները ակտիվացնելու համար **առաջնահերթ խնդիր է** նախաքննության և օպերատիվ-հետախուզական աշխատանքների որակի կտրուկ բարելավումը, նախաքննական և հետաքննական մարմինների սերտ համագործակցությունը, քննության ճիշտ պլանավորումը, բոլոր հնարավոր վարկածների մշակումը և դրանց օպերատիվ ստուգումը: Իսկ վարչական շրջանի դատախազների համար առաջնահերթ խնդիր է հանցագործությունների բացահայտման գործընթացի նկատմամբ հսկողության ուժեղացումը և առանձնակի ուշադրությունը առանձնապես ծանր հանցագործությունների, այդ թվում՝ սպանությունների, սպանության փորձերի, ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու, ավազակային հարձակումների, հափշտակությունների, այդ թվում՝ կողոպուտների, բնակարանային գողությունների ու տարածված այլ հանցագործությունների բացահայտման հարցերին:

ՀՀ դատախազությունը, հանցագործության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության համակարգման առումով մեծ դեր ունենալով հանդերձ, ՀՀ Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում չի կարող անմիջական մասնակցություն ունենալ հանցավորության դեմ պայքարում: Դատախազությունը, այդ ոլորտում համակարգելով իրավապահ մարմինների աշխատանքները, վերջիններիս գործնական ցուցումներ և հանձնարարություններ տալով, չի կարող երաշխավորել դրանց կատարման արդյունավետությունը, ինչն իր ազդեցությունն է թողնում հանցավորության դեմ պայքարի արդյունավետության վրա: Ելնելով այդ

նկատառումներից, ՀՀ դատախազությունն առաջարկել է «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում» և դրանից բխող միջոցառումների ցանկում որպես միջոցառում ներառել **հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման կազմակերպաիրավական կառուցակարգերի ապահովումը**:

Ըստ այդմ, ՀՀ դատախազության կողմից նախապատրաստվել և շրջանառության մեջ է դրվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ, համաձայն որի՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների արդյունավետ համագործակցության կազմակերպման նպատակով առաջարկվում է դատախազությանը վերապահել իրավապահ մարմինների գործունեության համակարգումը, իսկ հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների գործունեության համակարգման կազմակերպաիրավական ձևերը կսահմանվեն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանով:

Իրավապահ մարմիններին իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող գործուն իրավական կառուցակարգեր սահմանելու առումով ուսումնասիրվել է Մերձբալթյան հանրապետությունների փորձը: Առաջարկվել է հանցագործությունների գործերով քննության հետ ակտիվ համագործակցող անձանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին դրույթը արտացոլել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մեջ՝ հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտի շրջանակներում:

ՀՀ դատախազությունն իրականացրել է բազմաթիվ միջոցառումներ քաղաքացիական հասարակության առանձին կառույցների, հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հեռուստատեսության ու զանգվածային լրատվության այլ միջոցներով կազմակերպել է քննարկումներ, հրապարակել ուսուցողական հոդվածներ:

Իրավախախտումների վերաբերյալ մամուլում առկա տեղեկություններն ուսումնասիրելու և արագ արձագանքման համակարգերը կատարելագործելու նպատակով ընդլայնվել է մշտադիտարկման ենթարկվող ԶԼՄ–ների շրջանակը:

Ինչ խոսք, իրավական և ժողովրդավարական երկրին համապատասխան մշակույթ ունեցող հասարակության համար հանցագործության կատարման մասին անհապաղ հայտնելու (հաղորդում ներկայացնելու) պահանջը բնական է և օրինաչափ: Հայաստանի Հանրապետությունն այդպիսի երկիր կառուցելու ճանապարհին է, որտեղ կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի համատարած սերմանումը գերագույն նպատակ է, իսկ ձևավորված արատավոր սովորույթներն ու օրենքի գերակայության վերաբերյալ թյուր պատկերացումները պետք է զիջեն իրականացվող բարեփոխումների ընթացքին:

2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

1) Մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի վերաբերյալ.

2013թ. ընթացքում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի** վերաբերյալ նախապատրաստված և ավարտված 29959 (2012թ.՝ 26008) նյութի նկատմամբ, որից 18931 նյութ նախապատրաստվել է նախաքննության, իսկ 11028 նյութ՝ հետաքննության մարմինների կողմից: Նշված նյութերից 13344-ը նախապատրաստվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով, որը 1232-ով ավելի է, քան 2012թ. ընթացքում, 8743-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով, որը 1201-ով ավելի է, քան 2012թ. ընթացքում և 7872-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով, որը 1518-ով ավել է քան 2012թ. ընթացքում:

2013թ. մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով նախապատրաստված 29959 (2012թ.՝ 26008) **նյութերից 9420-ով** (2012թ.՝ 6165) **կամ 31,4%-ով** (2012թ.՝ 23,7%) **հարուցվել է քրեական գործ:** Ընդ որում, **մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախապատրաստված** 13344 նյութից 1361-ով կամ 10,2%-ով է հարուցվել քրեական գործ, **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով** նախապատրաստված 8743 նյութից՝ 5075-ով կամ 58,0%-ով, իսկ **ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով նախապատրաստված** 7872 նյութից՝ 2984-ով կամ 37,9%-ով:

Քրեական գործի հարուցումը մերժված 19087 նյութից 14527-ով կամ 76,1%-ով (2012թ.՝ 73,9%) քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացնող հիմքով, իսկ 4560-ով կամ 23,9%-ով՝ ոչ արդարացնող հիմքով: Ընդ որում, **մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մերժված** 11465 նյութից 8933-ով կամ 77,9%-ով է քրեական գործի հարուցումը մերժվել արդարացնող հիմքով, **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մերժված** 3174 նյութից՝ 2344-ով կամ 73,8%-ով, իսկ **ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով մերժված** 4448 նյութից՝ 3250-ով կամ 73,1%-ով:

ՀՀ դատախազության կողմից ստուգվել է **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի՝** 19465 մերժված նյութերով կայացված որոշումների օրինականությունը: Ստուգման արդյունքում **քրեական գործի հարուցումը մերժելու մասին 228 (2012թ.՝ 125) որոշում է վերացվել**, որոնցից 90-ը (2012թ.՝ 53) **մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով,** 81-ը (2012թ.՝ 44)՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով**, 57-ը (2012թ.՝ 28)՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով**: Նշված 228 նյութից 139-ը նախապատրաստվել է նախաքննության, իսկ 89-ը հետաքննության մարմնի կողմից:

2013թ. հանձնարարականներին **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով նախապատրաստված նյութերի** նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս դատախազների կողմից տրվել է **339 ցուցում** (2012թ.՝ 621), որոնցից 139-ը (2012թ.՝ 325) **մարդու դեմ ուղղված** հանցագործությունների դեպքերով նախապատրաստված նյութերով, 127-ը (2012թ.՝ 111) **սեփականության և տնտեսական գործունեության** դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով, 73-ը (2012թ.՝ 185)՝ **ընդհանուր բնույթի** հանցագործությունների դեպքերով:

2013թ. ընթացքում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի** վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 4434 (2012թ.՝ 4174) քրեական գործի նկատմամբ, աճը կազմել է 260 քրեական գործ: Նշված 4434 քրեական գործից 1040-ը (2012թ.՝ 837) քննվել են **մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով,** 1372-ը (2012թ.՝ 1220)՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով**, 2022-ը (2012թ.՝ 2117)՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով**:

2013թ. ընթացքում ավարտված **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների վերաբերյալ** 4434 (2012թ.՝ 4174) քրեական գործից 1739-ը (2012թ.՝ 1826) կամ 39,2%-ը (2012թ.՝ 43,7%)՝ 2195 (2012թ.՝ 2404) անձանց վերաբերյալ ուղարկվել է դատարան, 2660-ը (2012թ.՝ 2315) կամ 60%-ը (2012թ.՝ 55,5%) կարճվել է, որից 1010-ը (2012թ.՝ 698)՝ արդարացնող, իսկ 1650-ը (2012թ.՝ 1617)՝ ոչ արդարացնող հիմքով, 35-ը (2012թ.՝ 33) կամ 0,8%-ն (2012թ.՝ 0,8%) ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված **կոռուպցիոն և տնտեսական բնույթի** 123 քրեական գործով 41 անձ գտնվել է նախնական կալանքի տակ (2012թ.՝ 149 գործով 39 անձ):

Դատախազության կողմից **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստուգվել է 5290 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների օրինականություն,** որոնցից 1827-ը՝ **մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 949-ը՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 2514-ը՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով:**

2013թ. ընթացքում **վերացվել է քրեական գործով վարույթը կարճելու մասին 139 (2012թ.՝ 106) որոշում**, որոնցից 48-ը (2012թ.՝ 23-ը)՝ **մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 61-ը (2012թ.՝ 39-ը)՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 30-ը (2012թ.՝ 44-ը)՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով**:

2013թ. ընթացքում **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների վերաբերյալ** 5216 (2012թ.՝ 3161)

քրեական գործի վարույթ կասեցվել է, որից՝ 3441-ը որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու, 1723-ը՝ մեղադրյալի հետախուզման, 52-ը՝ այլ հիմքով:

ՀՀ դատախազության կողմից **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների վերաբերյալ** ստուգվել է 7860 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականություն, որոնցից 1123-ը՝ **մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով,** 4163-ը՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 2574-ը՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով**:

2013թ. ընթացքում մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների վերաբերյալ վերացվել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 363 որոշում (2012թ.՝ 110), որոնցից 51-ը (2012թ.՝ 29-ը)՝ **մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով,** 237-ը (2012թ.՝ 51-ը)՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 75-ը (2012թ.՝ 30-ը)՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով**:

2013թ. ընթացքում **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով** քրեական գործերով դատախազների կողմից տրվել է **1308 գրավոր ցուցում (2012թ.՝ 1279),** որոնցից 414-ը (2012թ.՝ 400) մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, 621-ը (2012թ.՝ 665)՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, 273-ը (2012՝ 214)՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով:

Ցուցումների դեմ բերվել է 5 բողոք, որոնցից 2-ը բավարարվել է: Քրեական գործերով տրված ցուցումները հիմնականում վերաբերել են նախաքննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունը ապահովելուն ուղղված քննչական գործողություններ կատարելուն, մեղադրյալների արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալուն, ինչպես նաև նախաքննության և հետաքննության մարմինների արդյունավետ համագործակցությունն ապահովելուն:

2013թ. ընթացքում 29 (2012թ.՝ 26) քրեական գործ դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության, որոնցից 5-ը (2012թ՝ 8-ը)՝ **մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով,** 14-ը (2012թ. 9)՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**, 10-ը (2012թ՝ 9-ը)՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով**: Լրացուցիչ քննության արդյունքում 14-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 11-ը՝ ընթացքի մեջ է, 2-ը կարճվել է, 1՝ կասեցվել:

2013թ. ընթացքում քննված **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով** մինչդատական վարույթում ավարտված նյութերով, ընթացիկ և ավարտված քրեական գործերով պետությանը պատճառվել է 306.792.439 (2012թ.՝ 74.326.000 դրամ) դրամի նյութական վնաս, որից վերականգնվել է 106.948.710 դրամ:

2) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ.

2013թ. ընթացքում նախապատրաստվել է **կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված** հանցագործությունների դեպքերի վերաբերյալ 1698 (2012թ.՝ 830) նյութ կամ նախորդ տարվա համեմատությամբ 868-ով ավելի, որոնցից 502-ով (2012թ.՝ 310) հարուցվել է քրեական գործ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 192-ով:

Նախապատրաստված **կոռուպցիոն և տնտեսական բնույթի** նյութերի և հարուցված քրեական գործերի թվաքանակի ավելացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոռուպցիոն բնույթի նախապատրաստվող նյութերում բարձր տեսակարար կշիռ են կազմում ՀՀ քր. օր.-ի 193-րդ և 205-րդ հոդվածների հատկանիշներով նախապատրաստվող նյութերը:

2013թ. ընթացքում հարուցված 502 (2012թ.՝ 310) **կոռուպցիոն բնույթի քրեական գործերից** 71-ը (2012թ.՝ 60) վերաբերել է ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված հափշտակություններին (յուրացում կամ վատնում), 145-ը՝ (2012թ.՝ 86) ՀՀ քր. օր-ի 205-րդ հոդվածով նախատեսված հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն, 28 քրեական գործ՝ (2012թ.՝ 28) ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելուն, 57-ը (2012թ.՝ 36)՝ ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն, 23-ը (2012թ.՝ 18)՝ ՀՀ քր. օր.-ի 311-րդ հոդվածով՝ կաշառք ստանալուն, 5-ը՝ ՀՀ քր. օր.-ի 311[1]-րդ հոդվածով՝ հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալուն (2012թ.՝ 7), 26-ը (2012թ.՝ 13)՝ ՀՀ քր. օր.-ի 314-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական կեղծիքին և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է **կոռուպցիոն բնույթի** 348 քրեական գործ (2012թ.՝ 281), 225 քրեական գործի վարույթ կարճվել է (2012թ.՝ 132), 174-ը՝ արդարացման հիմքով (2012թ.՝ 63), 51-ը՝ ոչ արդարացման հիմքով (2012թ.՝ 69):

Հաշվետու ժամանակահատվածում **կոռուպցիոն և տնտեսական բնույթի** 1106 (2012թ.՝ 418) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 914-ը՝ արդարացման հիմքով (2012թ.՝ 307), իսկ 192-ը՝ ոչ արդարացման (2012թ.՝ 111)՝ գերակշռությամբ պատճառված նյութական վնասները հատուցելու հիմքով:

Ընթացք տրված **կոռուպցիոն և տնտեսական բնույթի** 24 (2012թ.՝ 44) քրեական գործով վարույթները կասեցվել են, որոնցից 4-ը (2012թ.՝ 5)՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու, 16-ը (2012թ.՝ 29)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, 4-ը (2012թ.՝ 10)՝ այլ հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակահատվածից փոխանցված գործերի հետ միասին անավարտ է մնացել **կոռուպցիոն և տնտեսական բնույթի** ընդհանուր 309 (2012թ.՝ 220) քրեական գործ, որոնցով 23 (2012թ.՝ 14) անձ գտնվում է կալանքի տակ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավարտված գործերի թվաքանակի որոշակի նվազումը պայմանավորված է անավարտ գործերի բազմադրվագ լինելով և դեռևս ծավալուն աշխատանքներ կատարելու անհրաժեշտությամբ:

Ոչ արդարացման հիմքով կարճված **կոռուպցիոն և տնտեսական բնույթի** քրեական գործերով հանցագործություններով պատճառված նյութական վնասը կազմել է 438.289.065 (2012թ.՝ 9.535.031.000) դրամ, որից վերականգնվել է 382.685.258 դրամ կամ վերականգնումը կազմել է 87,3% (2012թ.՝ կարճված գործերով վերականգնվել է 7.609.974.000 դրամ կամ վերականգնումը կազմել է 79,8%), իսկ մերժված նյութերով պատճառված նյութական վնասը կազմել է 6.866.513.503 դրամ, որից վերականգնվել է 6.512.460.266 դրամ կամ վերականգնումը կազմել է 94,8% (2012թ.՝ մերժված նյութերով վնասը կազմել է 3.203.396.000 դրամ, որից վերականգնվել է 2.656.067.000 դրամ կամ վերականգնումը կազմել է 82,9%)։

3) Հատկապես կարևոր գործերով քննության ոլորտում.

2013թ. ընթացքում **հատկապես կարևոր գործերով քննության ոլորտում** հսկողություն է իրականացվել նախապատրաստված 430 նյութի, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 40, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 179, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 73, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններով՝ 1, կոռուպցիոն հանցագործություններով՝ 137 նյութի նկատմամբ: 226 նյութով հարուցվել է քրեական գործ:

2013թ. ընթացքում **հատկապես կարևոր գործերով քննության մասով** ստուգվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 187 որոշման օրինականությունը: 157 նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, իսկ 30 նյութով՝ ոչ արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում **հատկապես կարևոր գործերով քննության մասով ավարտված նյութերի նախապատրաստման նկատմամբ** դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 430 քրեական գործի, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 40, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 179, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 73, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով՝ 1, կոռուպցիոն հանցագործություններով՝ 137 գործի նախաքննության նկատմամբ:

2013թ. ընթացքում **հատկապես կարևոր գործերով քննության մասով** ավարտվել է 150 քրեական գործ, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 13, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 82, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 24, կոռուպցիոն հանցագործություններով՝ 31 գործ:

2013թ. ընթացքում **հատկապես կարևոր գործերով քննության մասով** մինչդատական վարույթում ընթացիկ և ավարտված քրեական գործերով պետությանը պատճառվել է 546.599.000 դրամի վնաս, որից վերականգնվել է 16.149.000 դրամ:

ՀՀ դատախազությունը հսկողություն է իրականացրել **թրաֆիքինգի փաստերի վերաբերյալ** քննվող 21 քրեական գործի նախաքննության նկատմամբ, որոնցից 4-ը փոխանցվել է 2012թ.-ից, 10-ը հարուցվել է 2013թ.-ին, 3-ը վերսկսվել է 2013թ.-ին, 4-ը ավարտվել է:

2013 թվականին 5 քրեական գործ 10 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 2 քրեական գործի վարույթ կասեցվել է, 2 քրեական գործի վարույթ կարճվել է, 2 քրեական գործ միացվել է այլ քրեական գործերի, 7 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է: 5 քրեական գործով դատապարտվել է 14 անձ:

Հաշվետու ժամանակաշրջանում **հատկապես կարևոր գործերով քննության մասով** ստուգվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին 102 որոշման օրինականությունը, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 8, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 69, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 11, կոռուպցիոն հանցագործություններով՝ 14 գործի: Նշված քրեական գործերից 94-ը կարճվել է արդարացման, իսկ 8-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Հատկապես կարևոր գործերով քննության մասով վերացվել է ՀՀ քր. օր.-ի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը կարճելու մասին 1 որոշում, գործի նախաքննությունը շարունակվում է: Մինչդատական վարույթում ընդունված նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու և վարույթը կասեցնելու մասին որոշումներ դատարանի կողմից չեն վերացվել: ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քր. օր.-ի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված և վարույթը հանցակազմի բացակայության պատճառով կարճված 1 գործով դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել կարճման որոշումը: Նշված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Ինչպես քրեական գործերի վարույթը կարճելու, այնպես էլ վարույթը կասեցնելու մասին որոշումների վերացումը պայմանավորված է եղել նախաքննական մարմնի կողմից գործի քննության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը չապահովելու, քրեական գործով պարզաբանման ենթակա առանձին փաստական տվյալներ չստուգելու հանգամանքներով:

Հաշվետու ժամանակաշրջանում **հատկապես կարևոր գործերով քննության մասով** ստուգվել է քրեական գործի վարույթը կասեցնելու մասին 11 որոշման օրինականությունը, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 1, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 4, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 3, կոռուպցիոն հանցագործություններով՝ 3 գործի: Նշված քրեական գործերից 5-ը կասեցվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 6-ը՝ 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

4) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերի վերաբերյալ.

2013թ. **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչությունը** հսկողություն է իրականացրել ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում նախապատրաստված 186 նյութի (2012թ.՝ 171) նկատմամբ, որոնցից 144-ով (2012թ.՝ 113) հարուցվել են քրեական գործեր, 39-ով (2012թ.՝ 58) մերժվել է քրեական գործի հարուցումը,

այդ թվում՝ արդարացման հիմքով՝ 20-ը (2012թ.՝ 37), ոչ արդարացման հիմքով՝ 19-ը (2012թ.՝ 21):

2013թ. **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով** իրականացվել է 239 (2012թ.՝ 177) գործի նկատմամբ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, այդ թվում՝ 144-ը (2012թ.՝ 113) հարուցվել է հաշվետու տարում, այլ մարմիններից ստացվել է 38-ը (2012թ.՝ 18), վերսկսվել է նախկինում վարույթը կասեցված կամ կարճված 19 (2012թ.՝ 3), ավարտվել է 77 (2012թ.՝ 80) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 54-ը (2012թ.՝ 58) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 23 (2012թ.՝ 22) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ է ուղարկվել 10-ը (2012թ.՝ 6), 6 (2012թ.՝ 6) քրեական գործի վարույթ միացվել է, իսկ 64-ի վարույթը կասեցվել (2012թ.՝ 47), այդ թվում՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքով՝ 41-ը (2012թ.՝ 20), այլ հիմքերով՝ 5-ը (2012թ.՝ 11), իսկ հետախուզման մեջ գտնվելու հիմքով՝ 18-ը (2012թ.՝ 16): 2013թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ է մնացել 82 (2012թ.՝ 38) քրեական գործ:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) վերաբերյալ 2013թ. ընթացքում նախաքննական մարմինների վարույթում քննվել է 13 քրեական գործ 17 անձի նկատմամբ (2012թ.՝ 17 քրեական գործ, 16 անձ)՝ բոլորը թմրանյութերի ապօրինի շրջանառության և թմրանյութերի մաքսանենգության համակցության դեպքերով:

2014 թվականի հունիսի 16-ից 21-ը նախատեսվում է Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ-ի հանձնախմբի կողմից Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի իրականացման նպատակով գնահատողների այցը Հայաստան: ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից 4-րդ փուլի գնահատումները իրականացվում են Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖի) 40+9 հանձնարարականների հին խմբագրության հիման վրա: 4-րդ փուլի գնահատումների ընթացքում առավել ուշադրության են արժանանում ՖԱԹՖ-ի հանձնարարականների կիրառության արդյունավետության հետ կապված հարցերը: ՖԱԹՖ-ի հանձնարարականների արդյունավետ կիրառումը գնահատվում է ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման, միջազգային համագործակցության, ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածի նկատմամբ վերահսկողության, հաշվետվություն տրամադրող անձանց կողմից համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացման և այլ տեսանկյուններից: Գնահատման նախապատրաստման նպատակով ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին, այդ թվում՝ ՀՀ դատախազությանը, տրամադրվել են փոխադարձ գնահատման հարցաշարեր, որոնք պետք է լրացվեն և ներկայացվեն ՄԱՆԻՎԱԼ-ին ոչ ուշ, քան երկիր այցելելուց երկու ամիս առաջ:

ՀՀ դատախազությունն առաջնահերթ խնդիր է համարում պայքարը թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց համարժեքների ու պրեկուրսորների մաքսանենգ ճանապարհով փոխադրման, դրանց ձեռքբերման աղբյուրների ու փոխադրող անձանց, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ (փողերի լվացման):

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) վերաբերյալ 2013թ. ընթացքում հանրապետությունում ընդհանուր առմամբ նախաքննական մարմինների վարույթում քննվել է 18 քրեական գործ, որոնցից 14-ը հարուցվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում, 2-ը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում, 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչությունում և քննչական ենթակայության կարգով փոխանցվել ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչություն, 1-ը՝ ՀՀ Ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննչական վարչությունում:

Հիշյալ 18 քրեական գործից 2013թ. ընթացքում հարուցվել է 8-ը, 8-ը փոխանցվել է 2012թ.-ից, իսկ 2011-2012թթ. հարուցված 2 քրեական գործով 2013թ. ընթացքում համակցությամբ նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար 2013թ. ընթացքում փողերի լվացման մեղադրանքով դատավճիռ է կայացվել 2 քրեական գործով, որոնցով դատապարտվել է 2 անձ:

Այսպիսով, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու վերաբերյալ 2013թ. ընթացքում ընդհանուր առմամբ քննվել է 18 քրեական գործ, որոնցից 7-ը նախաքննության փուլում է, կասեցվել է 6 գործի վարույթ, 3 անձի նկատմամբ 2 քրեական գործի վարույթ կարճվել է, 2 անձի նկատմամբ 2 քրեական գործով կայացվել է մեղադրական դատավճիռ, իսկ 1 անձի նկատմամբ 1 քրեական գործ դատաքննության փուլում է:

ՀՀ Նախագահի 16.04.2012թ. N ՆԿ-52-Ա կարգադրությամբ հաստատված Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների միջոցառումների ցանկի 40-րդ կետով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող ներկայիս օրենսդրության կիրառության ընթացքում ի հայտ եկած խնդիրները, բացերը և հակասությունները վերացնելու նպատակով, ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնի և շահագրգիռ այլ գերատեսչությունների հետ համատեղ մշակվել են՝

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին,

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին,

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին,

5. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին,

6. Բանկային գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին,

7. Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին,

8. Աուդիտորական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին,

9. Փաստաբանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին,

10. Շահումով խաղերի և խաղատների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

11. Վիճակախաղերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

12. Նոտարիատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին,

13. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին,

14. Լիցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին,

15. Գովազդի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ուղարկվել են համապատասխան մարմիններին՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

5) Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ.

2013թ. ընթացքում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել **թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ** 927 (2012թ.՝ 783) նյութերի նախապատրաստման օրինականության նկատմամբ: Նշված նյութերից 738-ով հարուցվել են քրեական գործեր, իսկ 172 նյութերով կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ, 17 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

2013թ. ընթացքում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել **թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ** 927 (2012թ.՝ 764) քրեական գործի նկատմամբ: Նշված քրեական գործերից 414-ը (2012թ.՝ 432) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 146 (2012թ.՝ 164) քրեական գործի վարույթ կասեցվել է, 127-ը (2012թ.՝ 18)՝ կարճվել, 4-ը (2012թ.՝ 4)՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան, 86 (2012թ.՝ 29) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 20-ը (2012թ.՝ 39) միացվել է, անավարտ է մնացել 130-ը (2012թ.՝ 78):

2013թ. **թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող** հանցագործությունների վերաբերյալ քննված 1316 (2012թ.՝ 1288) քրեական գործից բացահայտվել է 945-ը (2012թ.՝ 1041), չի բացահայտվել 94-ը (2012թ.՝ 145): Բացահայտման տոկոսը նախորդ տարվա 87,8%-ի դիմաց կազմել է 89,3%, այսինքն՝ աճել է 1,5%-ով:

2012թ.-ից 2013թ. է փոխանցվել 102, իսկ 2013-ից 2014թ.՝ 185 քրեական գործ:

2013թ. **թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններ** կատարելու համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 686 (2012թ.՝ 686) անձ, որոնցից 104-ը (2012թ.՝ 26) եղել է կին, 7-ը (2012թ.՝ 5)՝ անչափահաս, 22-ը (2012թ.՝ 18)՝ օտարերկրացի, 68-ը (2012թ.՝ 93)՝ նախկինում դատված: ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ փորձաքննության ներկայացված անձանցից հաշվառման է վերցվել 1523-ը (2012թ.՝ 1009), որոնցից 26-ը (2012թ.՝ 11)՝ կին, 6-ը (2012թ.՝ 4)՝ անչափահաս, 29-ը (2012թ.՝ 11)՝ օտարերկրացի՝ (հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ):

2013թ. ընթացքում դատախազների կողմից կալանավորման, խուզարկության կատարման, փոստ-հեռագրական առաքումների, հեռախոսային խոսակցությունների սահմանափակման, ինչպես նաև դատավարական հարկադրանքի մյուս միջոցների կիրառման վերաբերյալ ներկայացվել է **61 միջնորդություն**, որոնցից 61-ը բավարարվել է: Բերվել է 2 վերաքննիչ բողոք, որոնք մերժվել են:

2013թ. ընթացքում դատախազների կողմից **վարույթից հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 57 անձ**, որոնցից 17-ը ենթարկվել է կարգապահական տույժի:

2013թ. ընթացքում արձանագրվել է նախաքննության և հետաքննության մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված **166 իրավախախտում**, որոնցից 43-ը կապված է եղել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու հետ, այդ թվում՝ 10-ը՝ նյութերով քրեական գործի հարուցումն անհիմն մերժելու, 4-ը՝ նյութերն անհիմն կարգագրին կցելու, 1-ը՝ դեպքը չգրանցելու համար, 28-ը՝ այլ եղանակով, 116-ը՝ հետաքննության և նախաքննության ընթացքի հետ կապված, այդ թվում՝ 49-ը՝ հետաքննության և նախաքննության կատարման ժամկետները խախտելու համար, 2-ը՝ անչափահասների վերաբերյալ նյութերով և քրեական գործերով, 7-ը՝ այլ գործընթացներ իրականացնելու:

2013թ.-ին ավարտված 5331 քրեական գործերով **մինչև 2 ամիս ժամկետում քննվել է** 3155 քրեական գործ, 2-4 ամսում՝ 1296 քրեական գործ, 4-6 ամսում՝ 490 քրեական գործ, 6 ամսից 1 տարում՝ 322 քրեական գործ, 1 տարուց ավելի ժամկետում՝ 68 քրեական գործ: Հաշվետու տարում անավարտ է մնացել 2906 քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում քննիչներն անավարտ քրեական գործերով յուրաքանչյուր ամիս վարույթում ունեցել են միջինը 2,7 քրեական գործ, հետաքննիչները՝ 0,2: Քննիչները հաշվետու ժամանակում ավարտել են 0,9 քրեական գործի նախաքննություն, որի արդյունքում քննիչները թեև հիմնականում կատարել են իրենց առջև դրված խնդիրները, սակայն անհրաժեշտ է մեկ անգամ ևս նշել, որ քննիչների գերակշիռ մասի անփորձության պայմաններում դրանց ճնշող մեծամասնության մասնագիտական որակը չի համապատասխանում ներկայացվող պահանջներին, թեև, ՀՀ դատախազությունն ամեն ինչ

արել է քննչական բաժնի քննիչներին մասնագիտական խորհուրդներով նախապատրաստելու համար, այդուհանդերձ, վերջիններս դժվարությամբ են ընկալում քննության մեթոդիկան և այդ գործերով առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկական հնարքներն ու առանձնահատկությունները, որի կապակցությամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից քրեական գործերով պարբերաբար տրվել են գրավոր ցուցումներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ողջամիտ ժամկետներում նախաքննության և դատական քննության կատարմանը խոչընդոտող հանգամանք է հանդիսանում ներքոնշյալը.

Բազմաթիվ մեղադրյալներ, նախաքննության ընթացքում տալով խոստովանական ցուցմունքներ իրենց մեղսագրվող արարքների վերաբերյալ, անգամ ներկայացնելով հետաքննական և քննչական մարմիններին մինչ այդ անհայտ փաստական հանգամանքներ, նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, քրեական պատասխանատվությունից խուսափելու, ավելի մեղմ պատժի դատապարտվելու ակնկալիքով, հրաժարվում են իրենց նախաքննական ցուցմունքներից՝ ակնհայտ մտացածին պատճառաբանություններ ներկայացնելով այն մասին, որ դրանք տվել են իրենց նկատմամբ կիրառված բռնության արդյունքում:

Նման դեպքերում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստվում են նյութեր կամ քննվում քրեական գործեր, որոնց արդյունքում միաժամանակ ծանրաբեռնվում են ծառայության քննիչները, իսկ մեղադրյալների վերաբերյալ քրեական գործերի ընթացքը արհեստականորեն ձգձգվում է՝ մինչև բռնության փաստարկների վերաբերյալ վերջնական որոշման կայացումն ու դրանով պայմանավորված ապացույցների թույլատրելիության հարցի պարզումը: Ուստի ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և մեղադրյալների վերաբերյալ քննվող քրեական գործերի քննության ձգձգում թույլ չտալու համար նպատակահարմար է բռնության վերաբերյալ տեղեկություն հայտնած անձից հաղորդում ընդունել՝ նախազգուշացնելով ՀՀ քր. օր.-ի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հաղորդումն ուղարկել ըստ ենթակայության:

Քրեական հետապնդման հարուցման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և այդ կապակցությամբ վերահսկողության ապահովման, այդ ոլորտներում դատախազական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման, միասնական քրեական քաղաքականության իրականացման, ինչպես նաև նշված ոլորտներին առնչվող՝ ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամանների, հանձնարարականների, կարգադրությունների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների կատարումն ապահովելու նպատակով **2013 թվականի ընթացքում մշակվել և ներդրման փուլում են գտնվում ՀՀ գլխավոր դատախազի մի շարք հրամանների նախագծեր, ըստ որոնց.**

Դեպքերի, պատահարների, հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացք տալու ոլորտում, ըստ առանձին

բնագավառների սահմանվում են ինչպես հետաքննությանն ու նախաքննությանն ընդհանրապես, այնպես էլ դրանց նկատմամբ դատախազական հսկողությանը (դրա շրջանակներում խափանման միջոցների (հատկապես կալանավորման) ընտրությանը, փոփոխմանը, վերացմանը, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողությանը) և վերջինիս նկատմամբ իրականացվող գերատեսչական վերահսկողությանը ներկայացվող հիմնական և ընդհանրական պահանջներն ու չափորոշիչները,

- գործնականում հակասական իրավիճակներ ու տարակարծություններ առաջացնող, ինչպես նաև տարաբնույթ մեկնաբանությունների տեղի տվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածների կիրառման միասնական չափորոշիչները, պահանջները, ինչն էլ կապահովի դրանց կիրառման միասնական պրակտիկան այս ոլորտում, դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման լիազորություններից բխող գործառույթների իրականացմանը վերաբերող իրավակազմակերպական բնույթի միասնական չափորոշիչներն ու պահանջները,

- հստակեցվում են ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության և մյուս բոլոր դատախազությունների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից դատախազական լիազորությունների անմիջական և հնարավոր վերահսկողական գործառույթների իրականացման սահմանները և այլն…:

Վերը նշված իրավակարգավորումների պայմաններում, ուժը կորցրած են ճանաչվելու, փոփոխվելու կամ լրացվելու, ինչպես նաև ինկորպորացվելու են ՀՀ դատախազության համակարգում նախկինում ընդունված բազմաթիվ իրավական ակտեր (այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հրամաններ, կարգադրություններ, հանձնարարականներ, ՀՀ դատախազության կոլեգիաների որոշումներ, դատախազության աշխատակազմի ղեկավարի հրամաններ և այլն), որն էլ, իր հերթին, նպաստելու է դատախազության սահմանադրական լիազորությունների և գործունեության կազմակերպման իրավակարգավորման հարցերի համախմբմանը, համակարգմանը, միասնական և միատեսակ գործելակերպի սահմանմանը: Բնականաբար, վերջիններս այս ոլորտում առաջացնելու են դատախազական գործառույթներին բնորոշ միջոցառումների և դրանց արդյունքների գնահատման նոր որակական չափանիշների սահմանման անհրաժեշտություն:

Վերոգրյալը, ինչպես նաև նախորդ նշվածները, նույնպես ենթադրում է դրանց ներդրման, կայացման և արդյունքների բացահայտման ու դրանց արդյունավետության գնահատման ժամանակատար գործընթացների իրականացում, որից հետո միայն, ինչպես և նախորդ դեպքերում, հնարավոր կլինի լիարժեք պատկերացում կազմելու և սահմանելու դատախազության սահմանադրական լիազորություններից բխող գործառույթներին բնորոշ միջոցառումները և դրանց արդյունքների գնահատման որակական չափանիշները:

2013 թվականին սկսվել և 2014 թվականին շարունակվելու են հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ անմիջական դատախազական հսկողության

և դատավարական ղեկավարման, ինչպես նաև դրանց կապակցությամբ վերադասության կարգով գերատեսչական վերահսկողության իրավակազմակերպական կառուցակարգերի կանխորոշման և սահմանման աշխատանքները, այդ թվում՝ համապատասխան իրավական ակտերի մշակման, լրամշակման, ինկորպորացման, կոնսալիդացման և մյուս անհրաժեշտ գործընթացները, որի նպատակն է ապահովելու նշված ոլորտում լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման միասնականությունը, միատեսակությունը, կայունությունն ու աշխատանքի համաչափ բաշխումն ու ծանրաբեռնվածությունը:

ՀՀ դատախազությունը ՀՀ Նախագահի 18.02.2013թ.-ի ընտրության գործընթացի ընտրական իրավունքի խախտումների առնչությամբ կատարել է բավականին աշխատանք: Մասնավորապես՝

ՀՀ Նախագահի 18.02.2013թ.-ին ընտրության ընթացքում ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ հաղորդումների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ընդունման, գրանցման, քննարկման աշխատանքները համակարգելու, այդ ոլորտում դատախազական հսկողության արդյունավետությունը և միասնական պրակտիկա ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի 14.01.2013թ. N 3 հրամանի համաձայն, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում ստեղծվել է աշխատանքային խումբ:

Նշված հրամանի համաձայն՝ ՀՀ գլխավոր և զինվորական կենտրոնական դատախազությունների կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, ՀՀ գլխավոր և զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին հանձնարարվել է նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի, դրանց ընթացքի մասին հաղորդումներ ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, իսկ աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ օրը, մինչև ժամը 11:00-ն, ամփոփ տեղեկանք ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների, դրանց քննարկման ընթացքի և արդյունքների մասին:

Հրամանի 4-րդ կետով ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականին հանձնարարվել է ուսումնասիրել զանգվածային լրատվության միջոցներում ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ հրապարակումները և դրանց մասին անմիջապես իրազեկել աշխատանքային խմբին՝ սահմանված կարգով քննարկելու և արդյունքների մասին համապատասխան լրատվության միջոցներին հաղորդումներ ուղարկելու համար:

Կատարված աշխատանքների մասին կազմվել է համապատասխան տեղեկանք, որում արտացոլվել են ՀՀ գլխավոր և զինվորական կենտրոնական, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազություններում մուտք եղած՝ ՀՀ Նախագահի ընտրությանն առնչվող ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ ստացված հաղորդումներն ու դիմումները, ինչպես

նաև դրանց վերաբերյալ դատախազության կողմից ուսումնասիրված՝ լրատվության միջոցներում տպագրված նյութերը, դրանց քննարկման արդյունքները և այլն:

Նշված տեղեկությունը տրամադրվել է ԵԱՀԿ և ԱՊՀ դիտորդական առաքելություններին, անկախ դիտորդներին, ինչպես նաև տեղադրվել է ՀՀ դատախազության համացանցային կայք-էջում՝ հանրությանն իրազեկելու համար:

ՀՀ դատախազության ստորաբաժանումներում մուտք եղած ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ հաղորդումների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներում զետեղված հրապարակումների քննարկման ընթացքի վերաբերյալ **ստացվել է**.

ՀՀ Նախագահի նախընտրական փուլում.

88 հաղորդում, այդ թվում՝ 71 հաղորդում՝ ԶԼՄ-ներում զետեղված հրապարակումներից:

Ստացված 88 հաղորդումից՝

7-ին տրվել է պարզաբանում,

1-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին,

80-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

ՀՀ Նախագահի ընտրության օրը և դրանից հետո.

178 հաղորդում, այդ թվում՝ 121 հաղորդում՝ ԶԼՄ-ներում զետեղված հրապարակումներից, 5-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով:

Ստացված 178 հաղորդումից՝

6-ին տրվել է պարզաբանում,

12-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին,

160-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Այսպիսով, ՀՀ Նախագահի ընտրության կապակցությամբ ընդհանուր ստացվել է.

266 հաղորդում, այդ թվում՝ 192 հաղորդում՝ ԶԼՄ-ներում զետեղված հրապարակումներից, 5-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով:

Ստացված 266 հաղորդումից՝

13-ին տրվել է պարզաբանում,

13-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին,

240-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

ՀՀ Նախագահի ընտրության կապակցությամբ ընդհանուր հարուցվել է 13 քրեական գործ 11 անձի նկատմամբ, որոնցից՝

7 քրեական գործ 11 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, որոնց դատական քննությունն ավարտվել է և կայացվել է մեղադրական դատավճիռ,

6 գործ (0 անձ) կարճվել է:

3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

1. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ.

2013թ. ընթացքում դատախազների կողմից հաստատված մեղադրական եզրակացություններով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 2330 քրեական գործ 2963 անձի նկատմամբ (2012թ.՝ 2467 գործ, 3314 անձ):

Մեղադրական եզրակացություններով դատարան ուղարկված բոլոր քրեական գործերը դատարանների կողմից վարույթ են ընդունվել:

2013թ. ընթացքում դատարաններում քննվել է 2335 քրեական գործ՝ 3073 անձի նկատմամբ (2012թ.՝ 2371 գործ, 3118 անձ):

Նշված քրեական գործերից 1954 գործով 2594 անձի նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ (2012թ.՝ 2178 գործ, 2863 անձ), 48 գործով 48 անձի (2012թ.՝ 28 գործ, 28 անձ) նկատմամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, 47 գործով 63 անձ արդարացվել է (2012թ.՝ 26 գործ, 40 անձ), իսկ 284 գործով 363 անձի նկատմամբ (2012թ.՝ 134 գործ, 173 անձ) գործի վարույթը կարճվել է, որից 196-ը՝ համաներման, 132-ը՝ հաշտության, 8-ը՝ վաղեմության ժամկետն անցնելու, 3-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդված 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 2-րդ մասով նախատեսված, իսկ 15-ը՝ այլ հիմքերով:

Դատապարտված անձանցից 72-ը (2012թ.՝ 92 անձ) եղել են անչափահաս, 227-ը (2012թ.՝ 250)՝ կին, 424-ը (2012թ.՝ 510)՝ նախկինում դատված, 49-ը (2012թ.՝ 47)՝ օտարերկրացի:

Դատարան ուղարկված և հաշվետու ժամանակաշրջանում դատարաններում քննված գործերից 663-ը 821 անձի նկատմամբ եղել է ոչ մեծ ծանրության, 944-ը 1255 անձի նկատմամբ՝ միջին ծանրության, 663-ը 891 անձի նկատմամբ՝ ծանր և 65-ը 106 անձի նկատմամբ՝ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ:

Դատապարտված 2594 (2012թ.՝ 2863) անձից 1425-ի կամ 54,9%-ի (2012թ.՝ 1549-ի կամ 54,1%-ի) նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ, որից 4-ը (2012թ.՝ 2) ցմահ: Այսինքն, հաշվետու ժամանակաշրջանում ազատազրկման դատապարտված անձանց թիվը նվազել է 124-ով կամ 8,0%-ով:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 75 անձ կամ 2,9%-ը (2012թ.՝ 105-ը կամ 3,7%), տուգանքի՝ 605-ը կամ 23,3%-ը (2012թ.՝ 748-ը կամ 26,1%), իսկ 489-ի կամ 18,8%-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածը (2012թ.՝ 461 կամ 16,1%):

Հաշվետու ժամանակաշրջանում դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների են դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 47 անձ, որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից:

Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 370 անձի նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ:

Դատարանները 8 անձի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել են օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2013թ. ընթացքում 792 գործով 966 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ (2012թ.՝ 943 գործ, 1196 անձ):

Դատարաններում քննված մնացած գործերով հիմնականում մեղադրողները առարկել են դատական քննության արագացված կարգի դեմ, որը պայմանավորված է եղել

մեղադրյալների կողմից իրենց առաջադրված մեղադրանքում մեղավոր չճանաչելու, հանցագործությամբ պատճառված գույքային վնասը չվերականգնելու, մեղադրյալների անչափահաս լինելու և այլ հանգամանքներով:

Դատարաններում քննված քրեական գործերով պատճառված վնասը կազմել է 4.218.852.365 դրամ, որից 1.928.524.884-ը՝ պետական, 824.778.286-ը՝ իրավաբանական անձանց, իսկ 1.465.549.195-ը՝ ֆիզիկական անձանց:

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 746.587.196 դրամ, որից 316.708.398-ը՝ պետական, 160.422.663-ը՝ իրավաբանական անձանց, 269.456.135-ը՝ ֆիզիկական անձանց:

1) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ.

2013թ. ընթացքում դատարաններում քննվել է **կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված** ընդամենը 128 քրեական գործ՝ 206 անձի նկատմամբ (2012թ.՝ 125 քրեական գործ՝ 187 անձի նկատմամբ) կամ 3 գործով և 19 անձով ավելի, որոնցից 109 քրեական գործով դատապարտվել է 176 անձ (2012թ.՝ 118 քրեական գործով 180 անձ), կամ 9 գործով և 4 անձով պակաս:

Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով դատապարտված 176 անձից 65-ը կամ դատապարտված անձանց 36,9%-ը եղել է պաշտոնատար անձ (2012թ.՝ 180-ից 68-ը կամ 37,8%-ը):

Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով դատապարտված անձանցից 92-ը ենթարկվել է ազատազրկման ձևով պատժի (2012թ.՝ 84), 66-ը՝ տուգանքի (2012թ.՝ 75), մյուսները՝ այլ պատիժների: Ազատազրկումը կազմում է 52,3% (2012թ.՝ 46,7%):

Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով դատաքննության արդյունքներով 57 անձ պատժից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ (2012թ.՝ 41), իսկ 8 գործով 10 անձի նկատմամբ արձակվել է արդարացման դատավճիռ (2012թ.՝ 3 գործով 3 անձի նկատմամբ), 1 անձի պատիժը կրճատվել է համաներման ակտի կիրառմամբ:

2013թ. ընթացքում 3 քրեական գործով 3 անձ նախնական կալանքից ազատվել է՝ դատապարտվելով ազատազրկման հետ կապ չունեցող պատժի (2012թ.՝ 1 քրեական գործով 1 անձ), իսկ նախնական կալանքի տակ չգտնվող 50 անձ դատապարտվել է ազատազրկման (2012թ.՝ 30):

Կոռուպցիոն և տնտեսական բնույթի հանցագործությունների վերաբերյալ դատական քննության արագացված կարգի կիրառմամբ քննվել է 60 գործ 96 անձի նկատմամբ:

Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով դատարաններում քննված բոլոր քրեական գործերով պատճառվել է ընդհանուր 2.161.275.212 դրամի (2012թ.՝ 2.856.565.107) վնաս, որից պետությանը պատճառված վնասը կազմել է

1.756.924.002 (2012թ.՝ 1.815. 639.521) դրամ: Պետությանը պատճառված նյութական վնասից վերականգնվել է 190.574.853 դրամ կամ 10,8%-ը (2012թ.՝ 484.538.855 դրամ կամ 26,7%):

2) Հատկապես կարևոր գործերով քննության ոլորտում.

Մեղադրական եզրակացությամբ **հատկապես կարևոր գործերով քննության մասով** դատարան է ուղարկվել 47 քրեական գործ 56 մարդու նկատմամբ, որոնցից մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 5 գործ 7 մարդ, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 13 գործ 15 մարդ, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 12 գործ 15 մարդ, կոռուպցիոն հանցագործություններով՝ 17 գործ 19 մարդ: Նշված քրեական գործերն ընդունվել են վարույթ: Ավարտվել է 28 գործի դատաքննություն 45 մարդու նկատմամբ, այդ թվում՝ ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածով՝ 1 գործ 2 մարդ, 133-րդ հոդվածով՝ 1 գործ 2 մարդ, 177-րդ հոդվածով՝ 1 գործ 1 մարդ, 179-րդ հոդվածով՝ 2 գործ 2 մարդ, 188-րդ հոդվածով՝ 1 գործ 1 մարդ, 242-րդ հոդվածով՝ 4 գործ 4 մարդ, 308-309-րդ հոդվածներով՝ 4 գործ 11 մարդ, 311-313-րդ հոդվածներով՝ 5 գործ 8 մարդ, 314-րդ հոդվածով՝ 2 գործ 2 մարդ, 315-րդ հոդվածով՝ 2 գործ 3 մարդ, 316-րդ հոդվածով՝ 2 գործ 3 մարդ և այլն:

2013թ. ընթացքում 22 մարդ **հատկապես կարևոր գործերով քննության մասով** դատապարտվել է ազատազրկման, որոնցից 3-ը պատժից ազատվել է համաներման ակտի կիրառման հիմքով, 8-ը տուգանքի, 10-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 1-ի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, 3-ն արդարացվել է, 1-ի նկատմամբ գործի վարույթը կարճվել է համաներման ակտի կիրառման հիմքով:

3) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերի վերաբերյալ.

2013թ. ընթացքում **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչությունը** 53 գործով 75 անձի նկատմամբ (2012թ.՝ 63 գործ, 105 անձ) պաշտպանել է մեղադրանքը դատարանում և նշված գործերով ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 36 անձի (2012թ.՝ 72) նկատմամբ, 31-ի նկատմամբ՝ տուգանք (2012թ.՝ 20), ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն պատիժ չի կիրառվել 3-ի նկատմամբ (2012թ.՝ 7), համաներման կիրառմամբ նշանակված պատիժներից ազատվել է 10-ը (2012թ.՝ 20), 5 անձի նկատմամբ 3 գործի վարույթ կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով (համաներման ակտի կիրառմամբ) (2012թ.՝ 4 գործ, 4 անձ):

2013թ. ընթացքում **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության կողմից դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացրած գործերով** պետությանն ընդհանուր առմամբ պատճառվել է 78.510.961 (2012թ.՝ 1.040.293.900) դրամի

գույքային վնաս (յուրացում կամ վատնում, խարդախություն, մաքսանենգության առարկաների արժեք), որից վերականգնվել է 78.510.961 (2012թ.՝ 765.693.900) դրամը:

4) Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ.

2013թ. **թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ** դատարաններ է ուղարկվել 414 (2012թ.՝ 432) քրեական գործ: Քրեական գործերի քանակը նվազել է 18-ով կամ 4,2%-ով, որոնցից և նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված քրեական գործերից դատարաններում քննվել է 429-ը՝ 573 անձի նկատմամբ: Նշված գործերից 367-ով արձակվել են մեղադրական դատավճիռներ, որոնցով դատապարտվել է 497 անձ, 6 գործով՝ 6 անձի նկատմամբ, ՀՀ քր. դատ. օր.-ի 464-րդ հոդվածի կարգով, կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, 1 գործով 1 անձ արդարացվել է, իսկ 55-ի վարույթը 69 անձի նկատմամբ՝ կարճվել է:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ դատարաններում քննված քրեական գործերով դատապարտված 497 անձից ազատազրկման է դատապարտվել 336-ը (որից 1-ը ցմահ ազատազրկման), կալանքի՝ 55-ը, տուգանքի՝ 5-ը: ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել 101 անձի նկատմամբ: 1-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը: Դատապարտված անձանցից 4-ը եղել է անչափահաս, 30-ը՝ կին, 137-ը՝ նախկինում դատված, 28-ը՝ օտարերկրացի:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ դատական քննության արագացված կարգի կիրառմամբ քննվել է 164 գործ 176 անձի նկատմամբ:

2. Մեղադրական եզրակացություններով դատարան ուղարկված բոլոր քրեական գործերը դատարանների կողմից ընդունվել են վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում դատական քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը խստացնելու, մեղմացնելու, լրացնելու կամ փոփոխելու նպատակով **մեղադրողների միջնորդություններով դատական քննությունը հետաձգվել է** 39 գործով 51 անձի նկատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում դատարանների կողմից 284 քրեական գործով 363 անձի նկատմամբ (2012թ.՝ 134 գործ, 173 անձ) որոշումներ են կայացվել քրեական գործի **վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին**, որոնցից 196 անձի նկատմամբ՝ համաներման ակտի հիման վրա, 132 անձի նկատմամբ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի (տուժողի հետ հաշտվելու) հիմքով, 8 անձի նկատմամբ՝ նույն հոդվածի նույն մասի 6-րդ կետի (վաղեմության ժամկետը անցնելու) հիմքով, իսկ 27 անձի նկատմամբ՝ այլ հիմքերով:

2013թ. ընթացքում դատարաններում քննված գործերով 489 (2012թ.՝ 461 անձ) անձի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված **պատիժը պայմանականորեն չի կիրառվել և նշանակվել է փորձաշրջան**: Նշված գործերով

դատարանները և մեղադրողները հիմնականում հաշվի են առել կատարած հանցագործության բնույթը, վտանգավորության աստիճանը, մեղմացուցիչ հանգամանքները, հանցանք կատարողի անձը, հանցագործությամբ պատճառված վնասի չափը և դրա վերականգնված լինելու հանգամանքը, հանցանք կատարած անձի խնամքին 1 և ավելի՝ մինչև 14 տարեկան երեխաներ ունենալու հանգամանքը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ մեղմացուցիչ և բացառիկ հանգամանքներ:

3. 2013թ. ընթացքում դատարանների կայացրած **դատավճիռների դեմ** մեղադրողները **բերել են** 227 **վերաքննիչ բողոք**, որոնցից 1-ը վերադաս դատախազի կողմից հետ է վերցվել: Բերված բողոքներից 130-ը կամ 57,5%-ը եղել է պատժի մեղմության, 45-ը կամ 19,8%-ը՝ արդարացման, 17-ը կամ 7,5%-ը՝ մեղադրանքի վերաորակման, 11-ը կամ 4,9%-ը՝ պատժի խստության դեմ, 4-ը՝ քաղաքացիական հայցի մասով, իսկ 19-ը՝ այլ հիմքերով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 28-ը կամ 12,4%-ը բավարարվել է, 163-ը կամ 72,4%-ը՝ մերժվել, 6-ով կայացվել է այլ որոշում, 28-ը՝ ընթացքում է, իսկ 1-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը:

4. 2013թ. ընթացքում մեղադրողների կողմից բերվել է 80 **վճռաբեկ բողոք**, որոնցից 41-ը կամ 51,2%-ը դատարանի կողմից հետ է վերադարձվել, 8-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ է ընդունվել 31 բողոք, որոնցից 7-ը կամ 22,6%-ը բավարարվել է, 13-ը կամ 41,9%-ը՝ մերժվել, 7-ով կայացվել է այլ որոշում, 4-ը ընթացքում է:

ՀՀ դատախազության կողմից մեղադրանքի պաշտպանության ոլորտում, հանցավորության և այլ իրավախախտումների դեմ պայքարի և դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման, օրինականության պահպանման, ճիշտ և արդարացի քրեական և պատժողական քաղաքականություն իրականացնելու և այդ ոլորտում միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով 2013 թվականի ընթացքում մշակվել և ներդրման փուլում են ՀՀ գլխավոր դատախազի մի շարք հրամանների նախագծեր, որոնցով նախատեսվում է սահմանել.

- Դատարաններում մեղադրանքի որակյալ պաշտպանության ապահովումը, մեղադրողների անձնական պատասխանատվության բարձրացումը՝ դատական նիստերին քրեական գործերի նյութերի պատշաճ իմացությամբ ներկայանալու համար,
- դատաքննությանը նախապես պատրաստվելը, դատարանում ապացույցների հետազոտման հաջորդականության պլանավորումը,
- դատակոչված անձանց կամ այլ վկաների հարցաքննության հարցաշարի պլանավորումը,
- դատաքննության ընթացքում հայտարարություններին կամ միջնորդություններին պատշաճ արձագանքելը,

- դատաքննությանն ակտիվ մասնակցությամբ և պատշաճ հիմնավորումներով պաշտպանության կողմի արված միջնորդությունների արձագանքումը,

- դատական պրակտիկայի նյութերի լիարժեք օգտագործումը համանման գործերով դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատավճիռների ու որոշումների բողոքարկման աշխատանքները կազմակերպելիս և այլն:

4. Պետական շահերի պաշտպանության բնագավառ

Պետական շահերի պաշտպանության բնագավառում 2013թ. ՀՀ դատախազության կողմից կատարվել է 224 (2012թ.՝ 434) ուսումնասիրություն (ստուգում), հայտնաբերվել է 362 (2012թ.՝ 586) իրավախախտում, պետության շահերին հասցված վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 257 (2012թ.՝ 250) անձ, պետական շահերի պաշտպանության նպատակով հարուցվել է 196 (2012թ.՝ 201) հայց, նախապատրաստվել է 66 (2012թ.՝ 245) նյութ, որոնցից 34-ով (2012թ.՝ 61) հարուցվել է քրեական գործ, կամովին պետ. - բյուջե է վերականգնվել 87.128.324 (2012թ.՝ 488.252.292) դրամ:

2013թ. պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով իրականացված ուսումնասիրությունների (ստուգումների) արդյունքներով, պետական շահերի խախտման վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցված, ինչպես նաև այդ ոլորտում հարուցված և ավարտված՝ անմիջական դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացրած 48 (2012թ.՝ 91) քրեական գործից ավարտվել է 32 (2012թ.՝ 60) գործի քննությունը, դատարան է ուղարկվել 21 (2012թ.՝ 43), կարճվել է 11 (2012թ.՝ 17) քրեական գործ, մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է 153.801.896 (2012թ.՝ 134.473.433) դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 1.100.105.555 (2012թ.՝ 16.614.330) դրամ:

2013թ. դատարան է հարուցվել 271 (2012թ.՝ 329) հայց՝ 2.300.225.767 (2012թ.՝ 4.483.705.132) դրամի բռնագանձման պահանջով:

2013թ. ընդհանուր առմամբ դատարաններում քննվել և ավարտվել է ինչպես հաշվետու ժամանակաշրջանում հարուցած, այնպես էլ՝ նախորդ տարվանից փոխանցված 297 հայց, որոնցից բավարարվել է 239 (2012թ.՝ 165) հայց՝ 3.472.431.135 (2012թ.՝ 2.091.640.868) դրամի հայցապահանջով, մերժվել է 34-ը (2012թ.՝ 45), կարճվել է 24 (2012թ.՝ 26) գործի վարույթ: Դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 94.876.806 (2012թ.՝ 63.890.030) դրամ:

2013թ. պետական մարմիններից ստացվել է ստորադաս դատարանների դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ 21 (2012թ.՝ 35) միջնորդություն, որոնց ուսումնասիրության արդյունքներով բերվել է 46 վճռաբեկ բողոք (2012թ.՝ 59), մերժվել է վճռաբեկ բողոք բերելու 2 (2012թ.՝ 4) միջնորդություն: Վճռաբեկ բողոքները բերվել են ինչպես ներկայացված միջնորդությունների քննարկման, այնպես էլ նախապատրաստված հայցերի դատաքննության արդյունքներով կայացված դատական ակտերի հիման վրա:

ՀՀ դատախազությունը բերել է 34 (2012թ.՝ 42) վերաքննիչ բողոք, որոնցից բավարարվել է 12-ը (2012թ.՝ 9), 11 (2012թ.՝ 15) բողոք մերժվել է, 11-ը (2012թ.՝ 17) դեռևս չի քննարկվել:

2013թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված 46 (2012թ.՝ 59) վճռաբեկ բողոքից բավարարվել է 13-ը (2012թ.՝ 1), վերադարձվել՝ 26-ը (2012թ.՝ 45), իսկ 7 (2012թ.՝ 13) վճռաբեկ բողոք դեռևս չի քննարկվել:

2013թ. ընթացքում պետական շահերին վնաս պատճառելու վերաբերյալ գործերով ՀՀ դատախազության կողմից բերած վճռաբեկ բողոքների գումարը կազմել է 388.831.983 դրամ:

Պետական շահերի պաշտպանության բնագավառում կատարված աշխատանքների վերլուծությունները և ամփոփումները ցույց են տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում դրանք ընդհանուր առմամբ բարելավվել են: Սակայն, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է էլ ավելի ակտիվացնել աշխատանքների կատարումը, մասնավորապես՝ ՀՀ դատախազության տարածքային դատախազությունների կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում դրանց արդյունավետությունը բարձրացնելու առումով:

ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով» և դրանից բխող միջոցառումների ցանկի 7.2. կետով (Ուսումնասիրել քրեաիրավական ոլորտից դուրս պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազության գործառույթները) նախապատրաստված միջոցառման կապակցությամբ սկսվել են աշխատանքները պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման ոլորտում՝ ինչպես դատախազական նշված լիազորության անմիջական իրականացման, այնպես էլ դրա կապակցությամբ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից գերատեսչական վերահսկողության իրականացման, իրավակազմակերպական կառուցակարգերի մշակման ուղղությամբ՝ կապված համապատասխան իրավական ակտերի մշակման և լրամշակման, համապատասխան տեղեկությունների ստացման, ստուգման (ուսումնասիրությունների) իրականացման, իրավակարգավորումների հայտնաբերման և դրանց ընթացք տալու, տնտեսվարող սուբյեկտներին նախազգուշացնելու, հայց հարուցելու, դատարանում հայցը պաշտպանելու, դատական ատյաններում բողոքարկելու, վերահսկողական-տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների հետ համագործակցելու, նշված լիազորությունից վերոհիշյալ գործառույթները կենտրոնական ապարատի և տեղերի միջև տարանջատելու, գործունեության չափորոշիչներ և պահանջներ սահմանելու հետ:

Պետական շահերի պաշտպանության ոլորտի՝ վերը նշված գործառույթների իրականացման խիստ բևեռացումը և կենտրոնացվածությունը դրսևորվում էր հետևյալում: Օրինակ՝ տեսչական-վերահսկողական մարմիններից բոլոր տեղեկությունները ստացվում էին ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում, որն էլ, իր հերթին, 13 հաստիքային միավորից բաղկացած կազմով, կենտրոնացված կարգով իրականացնում էր այս ոլորտի լիազորություններից բխող գործառույթները, այդ թվում՝ ուսումնասիրություններ, ստուգումներ, տալիս նախազգուշացումներ, հայց հարուցում,

բողոքարկում դատական ակտերը, ըստ անհրաժեշտության հարուցում քրեական գործեր և այլն, մինչդեռ, տարածքային դատախազությունները փաստացի «մեկուսացված» և զրկված էին նշված գործառույթները լիարժեք իրականացնելու հնարավորությունից՝ տեղեկացվածության պակասի և նախաձեռնողականության սահմանափակված լինելու պատճառով և միայն առավելագույնը, լիազորված լինելով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից, նրա փոխարեն տարածքներում փաստացի մասնակցում էին հարուցված հայցերով կամ բերված բողոքներով դատական նիստերին:

Նշված պայմաններում, առավել ևս Օրենքի 27-րդ հոդվածի իրավակարգավորման անկատարության իրավիճակում, ակնհայտ էր, որ տարածքային դատախազություններում կարծես թե կորսվում և անկում էր ապրում դատախազությանը սահմանադրությամբ վերապահված կարևորագույն լիազորություններից մեկը:

Հաշվի առնելով պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման ոլորտում առկա իրավակարգավորումների հետ կապված անհստակություններն ու դրանցով պայմանավորված՝ հիշյալ լիազորության գործնականում իրականացման ընթացքում ծագած խոչընդոտներն ու հիմնախնդիրները, ՀՀ գլխավոր դատախազությունը ժամանակին առաջարկել է ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակաուղղված են նշված ոլորտում դատախազության գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորումն առավել հստակեցնելուն, ինչպես նաև այս ոլորտում դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելուն:

Խնդիրը կայանում է նրանում, որ վերոհիշյալ գործունեության թերի օրենսդրական կարգավորումը վտանգում է դատախազության նշված լիազորության պատշաճ իրականացման ընթացքը, որը կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ պետական շահերի և հանրության համար: Օրենսդրական բացթողումները շտկելու համար առաջարկվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքը լրացնել 6^1-րդ հոդվածով, իսկ 27-րդ, 28-րդ և 30-րդ հոդվածներում կատարել փոփոխություններ ու լրացումներ, որոնք նպատակաուղղված են հետևյալին.

- օրենքում ամրագրել դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելու ինչպես նաև դրանց չկատարման համար պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ համապատասխան դրույթ, ինչը հնարավորություն կընձեռի առանց ձգձգումների և խոչընդոտների ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն՝ օրենքով սահմանված ժամկետներում հայցեր հարուցելու և դատական ակտերը բողոքարկելու համար,

- օրենքից հանել այն իմպերատիվ պահանջը, համաձայն որի պետական շահերի պաշտպանության հայց կարող է հարուցվել սոսկ հոդվածում նախատեսված դեպքերի առկայության պայմաններում, այնինչ, պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը չի ընդգրկվում 27-րդ հոդվածի 2-րդ

մասում թվարկված դեպքերը, ինչը խոչընդոտում է դատախազության մարմինների կողմից համապատասխան հայց հարուցելը,

- օրենքում ամրագրել համապատասխան դրույթ, որով դատախազին իրավունք կտրվի ներգրավվելու դատական քննությանը՝ պետական շահերին վերաբերող գործի քննության ցանկացած փուլում հայցվոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հետ միաժամանակ, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի դատախազությանը պետական մարմնի հետ համատեղ արդյունավետ պաշտպանելու պետության շահերը, կնվազեցնի պետական մարմնի պաշտոնատար անձանց կողմից դատաքննության ընթացքում թերություններ թույլ տալու կամ չարաշահումներ կատարելու ռիսկերը,

- օրենքում հստակ սահմանվի պետական շահերի պաշտպանության վիճակը ստուգելու, ինչպես նաև հայց հարուցելու նպատակով նյութեր նախապատրաստելիս դատախազի կողմից կատարման ենթակա անհրաժեշտ գործողությունների շրջանակը, որոնք օրենքի 27-րդ հոդվածի իմաստով քննչական գործողություններ չպետք է համարվեն,

- օրենքում հստակեցվի դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության վիճակը ստուգելու, ինչպես նաև հայց հարուցելու նպատակով նախապատրաստված նյութերի ընթացքը լուծելու կառուցակարգերը,

- օրենքում նախատեսել դրույթ, համաձայն որի պետական շահերի պաշտպանության խախտումներ հայտնաբերելու դեպքում խախտումներ ծնող պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով դատախազը միջնորդագիր է ներկայացնում դրանք վերացնելու լիազորություն ունեցող մարմնին կամ պաշտոնատար անձին, ինչը պայմանավորված է պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բարձրացնելու և պետական շահերի խախտումները կանխարգելելու անհրաժեշտությամբ,

- օրենքով գլխավոր դատախազին ու նրա տեղակալներին՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ կայացված պետական շահերի պաշտպանությանը վերաբերող դատական ակտերը, անկախ տվյալ գործի քննությանը դատախազի մասնակցությունից, բողոքարկման իրավունք վերապահել, ինչը կնպաստի Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով ամրագրված դատախազության լիազորությունների արդյունավետ և լիարժեք իրականացմանը,

- օրենքով սահմանված դատախազական ակտերում ավելացնել «նախազգուշացում» տեսակի ակտը, որը կնպաստի և նպաստում է պետությանը պատճառված վնասն արտադատական կարգով վերականգնելուն և ավելորդ դատական ծախսեր չկատարելուն, ինչպես նաև դրա մասին հիշատակված է օրենքի 27-րդ հոդվածում և այն գործնականում կիրառվում է, սակայն որպես դատախազական ակտ օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված չէ:

5. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում՝ 2013թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կատարվել է 91 հանցագործություն 104 անձի (2012թ.՝ 99 հանցագործություն, 114 անձ) կողմից, այդ թվում՝ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 47 (2012թ.՝ 65) դեպք, որոնցից 32-ը (2012թ.՝ 47) թմրամիջոցների իրացման, 15-ը (2012թ.՝ 18)՝ առանց իրացնելու նպատակի, 2-ը (2012թ.՝ 3)՝ ինքնասպանության հասցնելու և 17-ը (2012թ.՝ 10)՝ ինքնասպանության փորձի, 10-ը (2012թ.՝ 4)՝ ծեծի, 5-ը (2012թ.՝ 2)՝ խարդախության, 1-ը (2012թ.՝ 1)՝ շորթման, 1-ը (2012թ.՝ 0)՝ ՔԿՀ-ից փախուստի փորձի, 1-ը (2012թ.՝ 0)՝ փաստաթղթեր հափշտակելու, 1-ը (2012թ.՝ 0)՝ փաստաթղթեր կեղծելու, 1-ը (2012թ.՝ 0)՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու և 7-ը՝ (2012թ.՝ 2)՝ առողջության կարճատև քայքայումով մարմնական վնասվածք հասցնելու դեպքերը:

Հանցագործությունների դեպքերի քանակի նվազման պայմաններում նվազել են նաև թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեպքերը: Մասնավորապես, նախորդ տարվա ընթացքում արձանագրված 65 դեպքի դիմաց 2013թ. գրանցվել է այդ բնույթի 47 դեպք, այսինքն՝ դրանք նվազել են 18-ով կամ 72,3%-ով: Ընդ որում, նվազել են ինչպես թմրամիջոցների և հոգեմետ նյութերի իրացման, այնպես էլ դրանք առանց իրացնելու նպատակի ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և առաքելու դեպքերը:

Այսպես, 2012թ. ընթացքում արձանագրված թմրամիջոցների իրացման 47 դեպքի դիմաց 2013թ. նույն ժամանակաշրջանում գրանցվել է 32 դեպք, այսինքն՝ դրանք նվազել են 15-ով կամ 68%-ով: Նվազել են նաև առանց իրացման նպատակի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 18 դեպքի դիմաց արձանագրվել է 15 դեպք, դեպքերը նվազել են 3-ով:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեպքերի զգալի նվազման պայմաններում պահպանվել է նշված դեպքերի տեսակարար մեծ կշիռը քրեակատարողական հիմնարկներում ձևավորված հանցավորության ընդհանուր հաշվեկշռում: Վերոգրյալի վկայությունն այն է, որ 2013թ. ընթացքում գրանցված այդ բնույթի 47 դեպքը կազմում է գրանցված 91 դեպքի 51,6%-ը:

Ինչ վերաբերում է հոգեբուժական հաստատություններին, ապա այստեղ դեպքերը նվազել են 1-ով (2012թ.՝ 6, 2013թ.՝ 5):

2013թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգում ձևավորված հանցավորության արդյունքների վերլուծությունը և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի արդյունքների հետ դրանց համադրումը վկայում են, որ որոշ ՔԿՀ-ներում չեն կատարվում բավարար աշխատանքներ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, դեռևս ցածր է ու անբավարար արձանագրված դեպքերի բացահայտման վիճակն ու այդ բնագավառում նախաքննական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության արդյունավետությունը, որի արդյունքում արձանագրված այդ բնույթի բազմաթիվ դեպքեր մնում են չբացահայտված:

Դրա վկայությունն է այն հանգամանքը, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, արձանագրված թմրամիջոցների ապօրինի

շրջանառության, առավելապես՝ դրանց իրացման բազմաթիվ դեպքեր մնում են չբացահայտված և դրանցով ակտիվ քննություն չի կատարվում ու օպերատիվ-հետախուզական միջոցներ չեն ձեռնարկվում՝ հանցագործության բոլոր մասնակիցներին բացահայտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Մասնավորապես, միայն հաշվետու ժամանակաշրջանում հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու հիմքով կասեցվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով հարուցված 32 քրեական գործի վարույթ, որոնցից միայն 29-ը եղել է դրանց իրացման վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ՔԿՀ-ները, որպես հետաքննության մարմիններ, իրականացնում են նաև **օպերատիվ-հետախուզական գործունեություն**, որը սահմանափակվում է ՔԿՀ-ի տարածքում, մինչդեռ կատարված հանցագործությունների բացահայտման պարտականությունը և դրա պատասխանատվությունը կրում է ոստիկանության տարածքային բաժինը: Հանցագործության բացահայտման տոկոսը, որպես կատարված դրական աշխատանքի ցուցանիշ, ՔԿՀ-ների աշխատանքները գնահատելիս համապատասխան վերաբերմունքի չի արժանանում, որպիսի հարցը այլ կերպ է քննարկվում ոստիկանության տարածքային բաժինների աշխատանքները գնահատելիս:

Այդպիսի իրավիճակում **հետաքննության երկու մարմինները համագործակցված չեն գործում,** որի հետևանքով չեն ձեռնարկվում համատեղ օպերատիվ-հետախուզական լիարժեք միջոցառումներ, անհրաժեշտ տեղեկության փոխանակում չի կատարվում: Արդյունքում, բազմաթիվ դեպքեր չեն բացահայտվում, չեն ձեռնարկվում անհետաձգելի քննչական, օպերատիվ-հետախուզական միջոցներ և դատավարական գործողություններ (խուզարկություններ, առգրավումներ և այլն), որից օգտվելով հանցագործություն կատարած անձինք կամ մնում են չբացահայտված կամ էլ շեղելով քննությունը՝ կարողանում են խուսափել քրեական պատասխանատվությունից: Նշվածը մեծամասամբ վերաբերում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված դեպքերով կատարված հետաքննությանն ու նախաքննությանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես քրեակատարողական հիմնարկներում կատարվող հետաքննությունը առնչվում է մի շարք հիմնախնդիրների, այն առանձին դեպքերում նաև իրականացվում է թերություններով ու բացթողումներով, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

Արձանագրված դեպքերով կատարված հետաքննությունը սովորաբար սահմանափակվում է ՔԿՀ-ի տարածքում և դեպքին առնչվող դատապարտյալների և ՔԿՀ-ի աշխատակիցների մասնակցությամբ գործողություններ կատարելով: Ընդ որում, բավականին ցածր է դատապարտյալների մասնակցությամբ կատարված գործողությունների արդյունավետությունը, քանի որ վերջիններս սովորաբար կամ հրաժարվում են դրանց մասնակցելուց կամ էլ ուղղակի բացատրություններ չեն տալիս, հաստատ իմանալով, որ չեն կարող ենթարկվել որևէ պատասխանատվության:

Որպես կանոն, նույն դատապարտյալները հրաժարվում են որպես ընթերակա մասնակցել առանձին քննչական գործողությունների կատարմանը, որի հետևանքով հետաքննիչների կողմից այդպիսի առանձին գործողությունները կատարվում են ՀՀ Կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշմամբ հաստատված պահանջների համաձայն: Արդյունքում, առանձին գործողություններ (զննություն, քննում, նմուշներ ստանալ և այլն) և դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցները վիճարկվում են պաշտպանական կողմի կողմից:

ՔԿՀ-ների հետաքննիչների կողմից իրականացվող հետաքննության ընթացքում, որպես, կանոն առանձին գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու մասին հանձնարարականներ չեն տրվում՝ ինչպես քրեակատարողական հիմնարկների ղեկավարությանը, այնպես էլ ոստիկանության տարածքային մարմիններին: Արդյունքում, նվազում են հանցագործությունների դեպքերի բացահայտման հնարավորությունները:

Միաժամանակ, ուսումնասիրությունները վկայում են, որ ՔԿՀ-ների պետերը, որպես կանոն, չեն մասնակցում հետաքննությանը, հետաքննիչներին չեն տալիս ցուցումներ:

Որպես ՔԿՀ-ների հետաքննիչների կողմից կատարված հետաքննությանը բնորոշ բացթողում անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ վերջիններիս կողմից նախապատրաստված ոչ մի նյութով չեն բերվել միջնորդագրեր ՔԿՀ-ների ղեկավարությանը՝ հանցանքների և այլ իրավախախտումների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու պահանջով:

Քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության բնագավառում տեղ գտած, վերը նշված բացթողումների մասին դեռևս 2011թ. փետրվարի 18-ին հաղորդում է ուղարկվել ՀՀ ԱՆ նախարարին և ՀՀ ոստիկանապետին՝ դրանք քննարկելու, առկա հիմնախնդիրները վերացնելու և համագործակցված աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու պահանջով:

Չնայած դրան, 2013թ. ընթացքում արձանագրված արդյունքները վկայում են, որ այդ բնագավառում իրավիճակը գրեթե չի փոխվել: Մասնավորապես, չի բարձրացել օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետությունը՝ հատկապես լատենտային հանցագործությունների բացահայտման ուղղությամբ: Դրա վկայությունն է հատկապես թմրամիջոցների իրացման արձանագրված դեպքերի բացահայտման ցածր մակարդակը: Այս առումով, անբավարար է ինչպես արդեն իսկ արձանագրված այդ բնույթի դեպքերի, այնպես էլ նախորդ տարիներին արձանագրված դեպքերի բացահայտման վիճակը: Ասվածի վկայությունն է այն, որ նախկինում կատարված թմրամիջոցների իրացման դեպքերի առթիվ հարուցված և հետագայում կասեցված որևէ քրեական գործ, հետագայում, որպես կանոն, չի բացահայտվում:

2013թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել է այս ոլորտում կատարված հանցագործությունների վերաբերյալ 34 քրեական գործ 49 անձի վերաբերյալ, որոնցից 35-ը պատիժը կրող դատապարտյալներ են, 14-ը՝ քաղաքացիներ: Կրկնահանցագործություն կատարած 35 դատապարտյալից 26-ը կատարել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված, իսկ 10-ը՝ այլ բնույթի հանցագործություններ:

Կրկնահանցագործությունների կատարման պատճառների վերլուծությամբ պարզվել է, որ դատապարտյալների կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցագործությունների կատարմանը նպաստում են տարիներ շարունակ առկա մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացման բնագավառում ՔԿՀ-ներում տեղ գտած թերությունները և բացթողումները, դատապարտյալների գերակշիռ մասի՝ աշխատանքներում ներգրավված չլինելու հանգամանքը և, հատկապես, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ցածր արդյունավետությունը:

Ուսումնասիրությամբ դրական է գնահատվում այն հանգամանքը, որ նվազել են ՔԿՀ-ներում արձանագրված մահվան դեպքերը, որի վկայությունն է այն, որ նախորդ տարվա 28 դեպքի դիմաց արձանագրվել է 19-ը, այսինքն՝ դրանք նվազել են 9-ով կամ 32,2%-ով:

2013թ. անչափահասների կողմից կամ անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում հանցագործությունների դեպքեր չեն արձանագրվել (2012թ.՝ 0):

2013թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել վարույթում ավարտված 250 (2012թ.՝ 326) նյութի նկատմամբ, որոնցից 60-ը նախապատրաստվել են քննիչների, 190-ը՝ հետաքննիչների կողմից: Նյութերի նախապատրաստումն ու դրանց ընթացքի լուծումը մեծամասամբ հետաքննիչների կողմից նախապատրաստելու հանգամանքը պայմանավորված է եղել հաշվետու շրջանում արձանագրված դեպքերի բնույթով, առավելապես նրանով, որ դրանք մեծամասամբ եղել են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների դեպքեր:

Հաշվետու շրջանում ավարտված 250 նյութից 88-ով հարուցվել է քրեական գործ, 135-ով մերժվել է քրեական գործի հարուցումը, ըստ ենթակայության ուղարկվել է 27 հաղորդում:

Քրեական գործի հարուցումը մերժված 135 (2012թ.՝ 189) նյութից 127-ը մերժվել է արդարացման, իսկ 8-ը՝ ոչ արդարացման հիմքով: Նյութերով կայացված որոշումների օրինականությունը ստուգվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացրած դատախազների կողմից, որոնց արդյունքներով կայացված որոշումներից 1-ը (2012թ.՝ 2 որոշում) վերացվել է, ՀՀ քր. օր.-ի 110-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և այն ուղարկվել է նախաքննություն կատարելու:

2013թ. ընթացք տրված 119 (2012թ.՝ 134) քրեական գործի նախաքննության նկատմամբ իրականացվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն: Նշված գործերից 34-ը կամ 28,5%-ը ուղարկվել է դատարան՝ 46 անձի դատի տալու և 3 անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ, 32-ը

կասեցվել է, 18-ը կարճվել է, որոնցից մեկը ոչ արդարացման հիմքով, 35-ն ուղարկվել է այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու համար:

Գործի վարույթը կասեցնելու 32 և կարճելու 18 որոշման օրինականությունը ստուգվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացրած դատախազների կողմից:

2012թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել 34 (2012թ.՝ 64) քրեական գործ և ՀՀ քր. դատ. օր.-ի 464-րդ հոդվածի կարգով՝ 3 քրեական գործ՝ 52 (2012թ.՝ 90) անձի նկատմամբ, որոնք բոլորն էլ դատարանների կողմից ընդունվել են վարույթ:

Դատարաններում քննված 34 (2012թ.՝ 44) գործից 10-ով՝ 13 (2012թ.՝ 2) անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ: 2013թ. ընթացքում դատական քննության արագացված կարգ է կիրառվել՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունով՝ 3 գործով 3 անձի, միջին ծանրության հանցագործությունով՝ 4 գործով 4 անձի, ծանր հանցագործությունով՝ 3 գործով 6 անձի նկատմամբ:

2013թ. ընթացքում դատարանների կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներ են կայացվել անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 34 (2012թ.՝ 20) անձի նկատմամբ:

Դատարանների որոշումներով 2 (2012թ.՝ 2) անձի նկատմամբ նշանակվել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում, 19 (2012թ.՝ 11) անձի նկատմամբ՝ հարկադիր բուժում ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում, իսկ 13 (2012թ.՝ 7) անձի նկատմամբ՝ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

2013թ. քննված 34 գործից 2-ով հանցագործությամբ ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասը համապատասխանաբար կազմել է 601.000 ՀՀ դրամ և 894.000 ՀՀ դրամ, որը չի վերականգնվել:

ՀՀ ԱԺ 03.10.2013թ. N ԱԺՌ-080-Ն որոշմամբ կիրառված համաներման արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից 28.12.2013թ.-ի դրությամբ պատժի կրումից ազատվել է 642 դատապարտյալ, իսկ պատժաչափի չկրած մասը կրճատվել է 915 դատապարտյալի նկատմամբ, որի արդյունքում 60-ն ազատվել է պատժի կրումից: Ընդհանուր առմամբ պատժի կրումից ազատվել է 702 դատապարտյալ:

Այլընտրանքային պատիժների մասով համաներմամբ պատժի կրումից ազատվել է 1212 դատապարտյալ, որոնցից 694-ը դատարանի, իսկ 518-ը՝ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի բաժանմունքների պետերի որոշումներով:

Նույն ոլորտում պատժաչափի չկրած մասը կրճատվել է 148 դատապարտյալի նկատմամբ, որոնցից 138-ը դատարանի, իսկ 10-ը՝ բաժանմունքների պետերի որոշումներով:

01.01.2014թ.-ի դրությամբ կալանավորված և ազատազրկման վայրերում պատիժ կրող դատապարտյալների թիվը կազմել է 4756 կամ 224-ով ավելի, քան 01.01.2013թ.-ի դրությամբ:

01.01.2014թ.-ի դրությամբ ազատազրկման վայրում գտնվել են 198 կին (01.01.2013թ.-ի դրությամբ՝ 198), 19 անչափահաս (01.01.2013թ.-ի դրությամբ՝ 23):

2013թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 2491 անձ, որոնցից 992-ը՝ պատիժը լրիվ կրելու, 289-ը՝ պայմանական վաղաժամկետ, 186-ը՝ խափանման միջոց

կալանքը փոխելու, 7-ը՝ հիվանդության պատճառով, 648-ը՝ համաներմամբ, 359-ը՝ դատարանի դահլիճից, 10-ը՝ ներման կարգով:

2013թ. ընթացքում պատիժը կրելու համար այլ երկրներից Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել 2 դատապարտյալ (2012թ.՝ 1):

2013թ. ընթացքում այլ պետությունների է հանձնվել 20 (2012թ.՝ 31) դատապարտյալ և կալանավորված անձ, որոնցից 11-ը՝ ՌԴ-ին, 5-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը, 1-ը՝ Վրաստանի Հանրապետությանը, 1-ը՝ Իսպանիայի թագավորությանը, 1-ը՝ Ուկրաինայի Հանրապետությանը, 1-ը՝ Հունաստանի Հանրապետությանը, իսկ ընդհանուր առմամբ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվել են 126 օտարերկրյա քաղաքացիներ:

2013թ. ընթացքում ՀՀ դատարանների կողմից ազատազրկման հետ կապ չունեցող պատիժների՝ տուգանք պատժատեսակի են դատապարտվել 2 անչափահաս, իսկ ազատազրկման դատապարտված 37 անչափահասի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածով պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան:

Պատիժը պայմանականորեն չկիրառված 37 անչափահասից 24-ը դատապարտվել է գողություն կատարելու համար:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանները հաշվի են առել նրանց անձը, անչափահաս լինելու հանգամանքը, կատարած հանցագործության բնույթը և այն, որ նրանք ընդունել են մեղքը, զղջացել կատարած արարքի համար, վերականգնել են հանցագործությամբ պատճառված նյութական վնասը և բնութագրվել են դրական:

2013թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության մասով պետական մարմիններում կատարվել է 14 (2012թ.՝ 13) ուսումնասիրություն: Ուսումնասիրությունները կատարվել են դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում: Հայտնաբերվել է 14 իրավախախտում, ներկայացվել է 14 հայցադիմում: Հայցադիմումներից 3-ը վերաբերել է ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջին, 11-ը՝ պատասխանողին սնանկ ճանաչելու պահանջին: Հայցադիմումներից 10-ը բավարարվել է, 4-ն ընթացքի մեջ է:

Ձերբակալվածներին պահելու վայրերում (այդ թվում՝ ոստիկանության մարմիններում), քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև մյուս համապատասխան հիմնարկներում ու կազմակերպություններում կատարվել է 1104 ստուգում և ուսումնասիրություն, որից 1016-ը՝ ՁՊՎ-ներում, 27-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, 61-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում, որոնց արդյունքներով հաղորդումներ և միջնորդագրեր են ներկայացվել պատկան մարմիններին, ինչպես նաև 6 որոշումով կասեցվել է օրենսդրությանը հակասող ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր է ներկայացվել:

Դատական ակտերի կատարման ոլորտում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում դատարանների կողմից նշանակված պատիժներն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ի կատար չեն ածվել: ՀՀ քր. դատ. օր.-ի 427-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն օրինական ուժի մեջ մտած դատական

որոշումն ի կատար է ածվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձնելուց հետո եռօրյա ժամկետում, սակայն ուսումնասիրությամբ հայտնաբերվել են օրենքի պահանջի խախտման դեպքեր: Այդ ոլորտում կատարված 17 ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 5 խախտում:

Դատական ակտերի կատարման ձգձգումների վերաբերյալ կիրառված դատախազական ներգործության արդյունքում դատական ակտերն ի կատար են ածվել:

Կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ տույժի միջոցների կիրառման գործընթացում նույնպես առկա են հիմնախնդիրներ, որոնց մի մասը պայմանավորված է այդ գործընթացում ծագող հարաբերությունների թերի իրավական կարգավորմամբ, իսկ մյուս մասը՝ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումներով:

Այսպես, թերի իրավական կարգավորման հետևանքով լուրջ խնդիրներ են առաջացել ազատազրկման դատապարտված անձի կողմից պատիժը կատարելու սահմանված կարգի չարամիտ խախտող ճանաչելու գործընթացում: Նշված խնդրի կարգավորումը կրում է ոչ միայն տեսական բանավեճի բնույթ, այլ ունի նաև պրակտիկ կիրառական նշանակություն, ինչն, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից ինչպես նախկինում ընդունված, այնպես էլ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013թ. հոկտեմբերի 3-ին ընդունված որոշման 9-րդ կետի 1-ին ենթակետով ամրագրվել է իմպերատիվ պահանջ այն մասին, որ համաներում չի կիրառվում նշված որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ պատիժը կրելու սահմանված կարգը չարամիտ խախտողների նկատմամբ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասում նշվել են պատժի կրման սահմանված կարգի այն խախտումները, որոնք համարվում են չարամիտ: Հոդվածի բովանդակության վերլուծությամբ ակնհայտ է, որ դրանք այն խախտումներն են, որոնք խիստ բացասաբար են ազդում ուղղիչ հիմնարկի անվտանգության ապահովման վիճակի վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնականում նշված բնույթի խախտումներ կատարում են ծանր հանցագործություններ կատարելու համար դատապարտված անձինք, որոնց հատուկ է դաժանությունը, ագրեսիվությունը: Նշված չարամիտ խախտումների թվին են դասվել՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչներին ուղղված սպառնալիքը, անհնազանդությունը, խմբակային անհնազանդություններ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը, նշված խախտումները կատարելու համար խմբեր կազմակերպելը և այլն:

Օրենսդիրը որպես չարամիտ խախտում է գնահատել նաև մեկ տարվա ընթացքում պատժի կրման սահմանված կարգի երկու կամ ավելի խախտումները, եթե դրանցից յուրաքանչյուրի համար դատապարտյալը ենթարկվել է տույժի: Այսպիսով, խախտումը չարամիտ գնահատելու համար օրենսդիրը ճանաչում է երկու չափանիշ՝ կատարված

արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը և կատարված խախտումների կրկնակիությունը:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը չարամիտ խախտում ճանաչելու գործընթացը որևէ կերպ չի պայմանավորում նշված խախտումները կատարելու համար նշանակված տույժը մարելով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվել է, որ դատապարտյալը համարվում է տույժ չունեցող, եթե տույժը կրելուց հետո վեց ամսվա ընթացքում, չի ենթարկվել նոր տույժի, կամ նախկինում նշանակված տույժը հանվել է:

Անմիջական պրակտիկ գործունեության ընթացքում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ դատապարտված անձը մեկ տարվա ընթացքում պատժի կրման սահմանված կարգի երկու խախտում է կատարել, որոնցից յուրաքանչյուրի համար ենթարկվել է տույժի, սակայն 1-ին և 2-րդ տույժի միջև ընկած ժամանակահատվածը գերազանցել է օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետը, հետևաբար, 2-րդ տույժի ենթարկվելու օրվա դրությամբ այլևս 1 տույժը եղել է մարված, **ուստի հարց է ծագել՝ այս դեպքում առկա՞ է չարամիտ խախտում, թե՝ ոչ:**

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 96-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը **չարամիտ խախտում** ճանաչելու հանգամանքը պայմանավորում է երկու հանգամանքով, նախ՝ 1 տարվա ընթացքում տույժի ենթարկված լինելու փաստով և երկրորդը՝ 2 կամ ավելի տույժի ենթարկվելու փաստով և որևէ ձևով չարամիտ խախտում ճանաչելու հանգամանքը չի պայմանավորում տույժը մարված լինելով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 96-րդ հոդվածի կիրառման գործում առկա է ևս մեկ հիմնախնդիր, այն է՝ նորմատիվ ակտերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները կարող են առաջացնել իրավական հետևանքներ՝ առանձին անձանց մոտ առաջացնել սուբյեկտիվ իրավունքներ ու պարտականություններ միայն այն դեպքում, երբ իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների սահմաններում տվյալ անձի վերաբերյալ, նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ կընդունվի անհատական իրավական ակտ: Այսինքն, անձը կարող է ճանաչվել պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտող միայն այն դեպքում, **երբ այդպիսին կճանաչվի ՔԿՀ-ի պետի որոշմամբ:**

Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ ՔԿՀ-ների պետերի կողմից նման որոշումներ չեն կայացվել, իսկ անձին չարամիտ խախտող ճանաչելու հարցը քննարկվում և լուծվում է միայն համաներման ակտը կիրառելու ընթացքում, սակայն այդ դեպքում նույնպես համապատասխան որոշում չի կայացվել: Այս հանգամանքը նկատի ունենալով, **անհրաժեշտ է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 96-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, որը կամրագրի քրեակատարողական հիմնարկի պետի պարտականությունը՝** համապատասխան դեպքերում դատապարտյալին պատժի կրման սահմանված կարգի չարամիտ խախտող ճանաչելու համար: Հարկ է նկատել, որ Ռուսաստանի Դաշնության քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրվել է ՔԿՀ-ի պետի նման պարտականությունը: Եվս մեկ դիտարկում՝ Ռուսաստանի Դաշնության քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ մոտավորապես նույն

ձևակերպումն է տրված պատժի սահմանված կարգի չարամիտ խախտման մասով, մեկ էական տարբերությամբ՝ կրկնակիության դեպքում չարամիտ խախտող ճանաչվելու համար անհրաժեշտ է, որ մեկ տարվա ընթացքում կատարված խախտումներից յուրաքանչյուրի համար անձը տեղափոխված լինի կամ պատժախուց կամ կարգապահական մեկուսարան:

Նման իրավական կարգավորում անհրաժեշտ է իրականացնել և համապատասխան փոփոխություն կատարել նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, ինչը հնարավորություն կընձեռի հանրության համար ոչ այնքան վտանգավոր խախտումներ կատարելու դեպքում, երբ դատապարտյալը ենթարկվել է ավելի մեղմ տույժի (նկատողության կամ խիստ նկատողության), նրան սահմանված կարգի չարամիտ խախտող չճանաչել՝ նշված հանգամանքից բխող իրավական հետևանքներով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է, որ պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտման դեպքում դատապարտյալը կարող է ներկայացվել տեղափոխման՝ մեկուսացվածության առավել բարձր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ: Հարկ է նկատել, որ նշված տեղափոխությունը՝ որպես պատժի միջոց, գործող քրեակատարողական օրենսդրությամբ չի սահմանվել: Սակայն, ակնհայտ է, որ նշված տեղափոխությունը կարող է իրականացվել միայն կարգապահական խախտում կատարելու դեպքում և իր բնույթով, ըստ էության, հանդիսանում է տույժի միջոց, ընդ որում, առավել խիստ տույժի միջոց, քանի որ կապված է պատժի կրման պայմանների խստացման հետ: Սակայն, քանի որ նշված միջոցը որպես տույժ չի հաշվառվել, ուստի և, որպես կանոն, չարամիտ խախտում կատարելու դեպքում դատապարտյալի նկատմամբ կիրառվել է տույժի միջոց, հիմնականում տեղափոխում պատժախուց, որից հետո վարչակազմի կողմից ներկայացվում է միջնորդություն ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողով՝ իրավախախտողին մեկուսացվածության առավել բարձր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու մասին, որի հիման վրա էլ տեղաբաշխման հանձնաժողովը կայացնում է համապատասխան որոշում: Այսպիսով, իրականության մեջ ստացվում է մի իրավիճակ, որի պայմաններում կատարված չարամիտ խախտման համար դատապարտյալը, ըստ էության, կրկին ենթարկվում է տույժի, որը սակայն, որպես այդպիսին, չի հաշվառվում: Նշված հանգամանքներում խախտվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն **մեկ խախտման համար արգելվում է նշանակել մեկից ավելի տույժ:**

ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ չի կարգավորվում կարգապահական խախտումների համակցության դեպքում տույժի նշանակման կարգը: Մինչդեռ, պրակտիկայում շատ են դեպքերը, երբ կալանավորված անձը կամ դատապարտյալը միաժամանակ կատարել է երկու և ավելի կարգապահական խախտում, կամ երբ անձը կատարել է երկու և ավելի խախտում, որոնք թեև ժամանակային առումով առանձնացված են, սակայն այդ խախտումների վերաբերյալ նյութերը ՔԿՀ-ի պետի կողմից քննարկվում են միաժամանակ: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում կարգապահական խախտումներ կատարած անձինք օրենքով սահմանված կարգով չեն ենթարկվել կարգապահական պատասխանատվության և նրանց նկատմամբ տույժի

միջոցներ չեն կիրառվել: Նշված դեպքերում ՔԿՀ-ի վարչակազմի կողմից կազմվել է տեղեկանք այն մասին, որ դատապարտյալի հետ անցկացվել է զրույց, և վարչակազմը բավարարվել է զրույցով՝ դաստիարակչական ներգործությամբ: Հարկ է նկատել, որ գործող քրեակատարողական օրենսդրությամբ խնդրի նման լուծում չի նախատեսվում: Հետևաբար, նշված դեպքերում ՔԿՀ-ների պետերը դուրս են եկել իրենց լիազորությունների սահմաններից: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ կարգապահական տույժի ենթարկելու մասին որոշումները, որպես կանոն, հայտարարվել են դատապարտյալներին, սակայն նրանց չի պարզաբանվել այն բողոքարկելու իրավունքը և նշված իրավունքի իրականացման կարգը: Պատահական չէ, որ 2011-2012թթ. և 2013թ. 1-ին կիսամյակում արձանագրվել է դատապարտյալներին և կալանավորված անձանց տույժի ենթարկելու 2732 դեպք, սակայն տույժի ենթարկվածներից և ոչ մեկը բողոքով չի դիմել հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմիններին: Ստացվել է մի իրավիճակ, երբ իրավունքը առկա է, սակայն այն իրականացնելու երաշխիքը վարչակազմի կողմից չի ապահովվել: Այդ իսկ պատճառով, Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններին եվրոպական բանտային կանոնների մասին հանձնարարականի 61-րդ կետով հատուկ նշվել է. «Կարգապահական խախտման համար մեղավոր ճանաչված բանտարկյալը պետք է իրավասու և անկախ, ավելի բարձր աստիճանի մարմնի բողոքարկելու հնարավորություն ունենա», այլ ոչ միայն դեկլարատիվ բնույթ կրող իրավունք:

Ուսումնասիրությունների ընթացքում էական խախտումներ են արձանագրվել կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ տույժի միջոցներ կիրառելու գործընթացում:

Բազմաթիվ դեպքերում, կարգապահական խախտում կատարելու փաստի առթիվ կազմված փաստաթղթերը՝ արձանագրությունները և տույժի ենթարկելու մասին որոշումները, եղել են թերի, դրանցում լիարժեք չի արտահայտվել իրավախախտման օբյեկտիվ կողմը:

Բազմաթիվ դեպքերում, կարգապահական խախտումների կապակցությամբ կազմված արձանագրությունում և որոշումներում տեղ են գտել ընդհանուր բնույթի միօրինակ արտահայտություններ, որոնք զուրկ են կոնկրետ բովանդակությունից: Հաճախակի գործածվել են նման բնույթի ձևակերպումներ՝ «դրսևորել է անհարգալից վերաբերմունք», «չի ենթարկվել օրինական պահանջներին», առանց նշելու, թե կոնկրետ իրավախախտողի որ գործողություններն են, որոնք թույլ են տալիս հանգելու նման եզրակացության:

Բազմաթիվ դեպքերում դատապարտյալները և կալանավորված անձինք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ ոգելից խմիչք օգտագործելու համար:

Առանձին դեպքերում նշված փաստը հիմնավորելու համար անձը ներկայացվել է բժշկի հետազոտմանը: Սակայն, հիմնականում նման դեպքերում նյութեր նախապատրաստող

պաշտոնատար անձինք գործել են՝ հիմք ընդունելով իրենց սեփական սուբյեկտիվ ընկալումը: Նման կասկածելի յուրաքանչյուր դեպքում, առավելապես, երբ դատապարտյալները և կալանավորված անձինք ժխտում են ոգելից խմիչք օգտագործելու հանգամանքը և ձեռք չեն բերվել նշված փաստը հիմնավորող այլ ապացույցներ, **անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն**, որի եզրակացության հիման վրա և լուծել նյութերի ընթացքը:

Բազմաթիվ դեպքերում դատապարտյալների և կալանավորված անձանց մոտ խուզարկություններով հայտնաբերվել են բջջային հեռախոսներ և խախտում կատարած անձինք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Սակայն, խախտման փաստի առթիվ նյութեր նախապատրաստելու ընթացքում չեն ձեռնարկվել միջոցներ, հեռահաղորդակցության սարքերի հնարավորությունները օգտագործելով, իրավախախտողների մեղքը հիմնավորելու համար ապացույցներ ձեռք բերելու և դատապարտյալների և կալանավորված անձանց օգտագործման համար արգելված իրերի **ներթափանցման ուղիները հայտնաբերելու համար**:

Արձանագրվել են դեպքեր, որ նույն քրեակատարողական հիմնարկում նույն բնույթի խախտում կատարելու համար **մի դեպքում կարող է նշանակվել օրենքով սահմանված ամենախիստ տույժի միջոցը, իսկ մեկ այլ դեպքում վարչակազմը կարող է բավարարվել բացատրական բնույթի զրույցով՝ առանց տույժի միջոց կիրառելու**: Այդ դեպքերում խախտվել է օրենքի առջև դատապարտյալների հավասարության սկզբունքը, որն ամրագրվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 8-րդ հոդվածով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 93-րդ հոդվածով նախատեսված են այն խրախուսանքի միջոցները, որոնք կարող են կիրառվել դատապարտյալների նկատմամբ: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված են այն խրախուսանքի միջոցները, որոնք կարող են կիրառվել կալանավորված անձանց նկատմամբ: Բացի օրենքով նախատեսված խրախուսանքի միջոցներից, կալանավորված անձանց նկատմամբ կարող են կիրառվել նաև ներքին կանոնակարգով նախատեսված խրախուսանքի միջոցներ: Համաձայն գործող օրենսդրության՝ կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառման հիմնական չափանիշն է **նրանց օրինապահ վարքագիծը:** Սակայն, ի տարբերություն կալանավորված անձանց, որոնք կարող են խրախուսվել միայն նշված հիմքով, դատապարտյալները կարող են խրախուսվել նաև աշխատանքի և ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, ինքնագործ միավորումների աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու, ինչպես նաև դրական վարքագիծ դրսևորելու համար:

Հարկ է նկատել, որ նշված խրախուսանքի միջոցի կիրառման համար անհրաժեշտ է 2 պայման՝ դատապարտյալը պետք է **դրսևորի դրական վարքագիծ և պետք է կրած լինի օրենքով սահմանված պատժի նվազագույն չափը**: Եթե երկրորդ պայմանը կրում է օբյեկտիվ բնույթ և կապված չէ որևէ անձի սուբյեկտիվ ընկալումից, ապա առաջին պայմանը սուբյեկտիվ է և այստեղ կարևոր է, թե ով է գնահատում դատապարտյալի վարքագիծը:

Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ առանձին դեպքերում **կիրառվել են խրախուսանքի միջոցներ, որոնք նախատեսված չեն օրենսդրությամբ**:

Առանձին դեպքերում խրախուսանքի միջոցները կիրառվել են օրենքով չնախատեսված հիմքերով:

2013թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «Գորիս», «Վանաձոր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում ուսումնասիրվել է պահվող անձանց բավարար սնունդ հատկացնելու և նյութակենցաղային ապահովման ոլորտում օրինականության պահպանման վիճակը: «Գորիս» քրեակատարողական հիմնարկում կատարված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ նյութերով ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից 11.12.2013թ.-ին ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, իսկ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հայտնաբերված խախտումների վերաբերյալ հաղորդումը ներկայացվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին, որի կապակցությամբ կատարվել է ծառայողական քննություն:

24.12.2013թ.-ին միաժամանակյա հանկարծակի այցելություններ են կատարվել ՀՀ ԱՆ թվով 10 քրեակատարողական հիմնարկներ՝ ստուգելու բաց տիպում պատիժ կրող դատապարտյալների պատժի կրման կարգի և պայմանների համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Ստուգման արդյունքներով հայտնաբերված խախտումները և բացթողումները ներկայացվել է ՔԿՀ վարչությանը՝ դրանք շտկելու համար:

2013թ. ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում իրականացվել է 3 ուսումնասիրություն, որոնց արդյունքում որպես հիմնախնդիր արձանագրվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ոլորտում ՀՀ քր. օր.-ի 52-րդ հոդվածով սահմանված որոշակի գործունեությամբ՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու վերաբերյալ պատժատեսակի կատարումը:

ՀՀ ԱՆ ՔԿՎ ԱՊԿԲ Արարատի բաժանմունքում հաշվառման վերցված դատապարտյալներից մեկը՝ Գագիկ Գրիգորյանը, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանի 26.02.2013թ. դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամ և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկման՝ 1 տարի ժամկետով:

Տուգանքը վճարելուց հետո լրացուցիչ պատիժը հնարավոր չէ ի կատար ածել, քանի որ վերջինս բացակայում է ՀՀ տարածքից և գտնվում է ՌԴ-ում:

Վերը նշված լրացուցիչ պատիժն ի կատար ածելու անհնարինության փաստեր նույն հիմքով արձանագրվել են նաև 2012 թվականի ընթացքում և դատարանի դատավճռով սահմանված ժամկետը լրանալու պատճառով դատապարտյալները հանվել են հաշվառումից: Փաստացի նրանց նկատմամբ նշանակված լրացուցիչ պատիժն ի կատար չի ածվել, որովհետև վերջիններս գտնվել են Հայաստանի Հանրապետությունից դուրս:

Այդ կապակցությամբ նպատակահարմար է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարել՝ ապահովելու համար տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում պատժատեսակի կատարումը: Մասնավորապես՝ հնարավորություն ընձեռել ՀՀ ճանապարհային ոստիկանությանը դատապարտյալին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու վերաբերյալ կատարված դատավճիռների մասին

տեղեկացնել ոչ միայն ՀՀ տարածքում, այլև դրա սահմաններից դուրս՝ բացառելով այլ պետություններում տրանսպորտի միջոց վարելու հնարավորությունը:

ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից» բխող միջոցառումների ցանկի 7.6 կետով նախատեսված է ուսումնասիրել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառույթի բնագավառում միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ և նշված լիազորության իրականացման համար պետք է օժտված լինի համապատասխան պետաիշխանական լծակներով: Մինչդեռ, ՀՀ գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դատախազության հսկողության այս բնագավառում դատախազությունը բավարար լծակներ չունի:

Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ընթացքում դատախազը կարող է վերացնել հետաքննության մարմնի, քննիչի ցանկացած որոշում՝ օրենսգրքով նախատեսված դեպքերում: Մինչդեռ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ նույն հսկողական գործառույթն իրականացնելիս, մասնավորապես՝ պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը ստուգելիս, դատախազը միայն միջնորդում է վերանայել օրենսդրությանը հակասող ակտը, իսկ այն դեպքերում, երբ դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը, և այն վերացնելու միջնորդություն ներկայացնել, որի պայմաններում այն վերացնելու լիազորություն չունի, ինչը խոչընդոտում է նշված գործառույթի արդյունավետ իրականացմանը և միաժամանակ խախտվում է հսկողության որպես դատախազական բացառիկ լիազորության էության դերը:

Օրենսդրությանը հակասող ակտը վերանայելու պահանջը, ըստ էության, չի համապատասխանում հսկողական գործունեության բնույթին և բովանդակությանը, որի հետևանքով նման իրավական կարգավորումը տեսականորեն հիմնավորված չէ, իսկ գործնականում՝ անարդյունավետ:

Բացի այդ, օրենքի 4-րդ մասի 3-րդ կետի ներկայիս խմբագրությամբ՝ հսկողական գործառույթներ կարող են իրականացվել միայն պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների նկատմամբ,

որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին: Նշված ձևակերպմամբ էականորեն սահմանափակվում են դատախազական հսկողության իրավասությունները նշված բնագավառում: Իրականում դատախազական հսկողությունը պետք է իրականացվի ոչ միայն պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց հիմնական իրավունքներին վերաբերող իրավական ակտերի նկատմամբ, **այլ նաև նշված անձանց վերաբերող այլ, ոչ հիմնական իրավունքներին, ինչպես նաև ազատություններին և պարտականություններին վերաբերող իրավական ակտերի նկատմամբ**: Այդ պատճառով, նշված հոդվածի նոր խմբագրությամբ առաջարկվում է որպես դատախազական հսկողության օբյեկտ ճանաչել պատիժը կատարող մարմինների այն իրավական ակտերը, որոնք վերաբերում են պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկման օրենքով սահմանված **կարգին և պայմաններին**:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի նոր խմբագրությամբ առաջարկվում է որպես դատախազական հսկողության օբյեկտ դիտարկել պատժի կրման և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ամբողջ գործընթացը, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:

Հարկ է նկատել նաև, որ առաջարկվող ձևակերպմամբ դատախազական հսկողության օբյեկտ է նաև այն մարմինների գործունեությունը, որոնք անմիջականորեն չեն առնչվում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարմանը, սակայն որոնց որոշումներն այս կամ այն կերպ անդրադառնում են պատիժների կամ հարկադրանքի այլ միջոցների կատարման օրենքով սահմանված կարգին և պայմաններին, մասնավորապես՝ խոսքը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի մասին է:

Այս ոլորտում տարվող քաղաքականության նպատակն է բարձրացնել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը:

Նախագծով առաջարկվող կարգավորման նպատակն է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, որը կարող է իրականացվել միայն պատշաճ դատախազական հսկողության պայմաններում:

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ՀՀ դատախազությանը արդյունավետ իրականացնելու պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորությունը:

6. Դատախազական աշխատանքի ամփոփ տվյալներ

2013թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 32742 (2012թ.՝ 27735) նյութի նախապատրաստման, 15830 (2012թ.՝ 11233) քրեական գործի հետաքննության և նախաքննության նկատմամբ: Դատախազների կողմից վերացվել է հետաքննության և

նախաքննության մարմինների կողմից կայացված 808 (2012թ.՝ 385) որոշում: Քրեական գործերով և նյութերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2253 (2012թ.՝ 2286) գրավոր ցուցում: Մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել, ինչպես նաև դատախազների մասնակցությամբ քննվել է 148 (2012թ.՝ 127) միջնորդություն (որպես խափանման միջոց կիրառվել են կալանքը, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ): Դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 2232 (2012թ.՝ 2337) քրեական գործով: Դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 227 (2012թ.՝ 154) վերաքննիչ և 80 (2012թ.՝ 53) վճռաբեկ բողոք: Ընդ որում, 227 (2012թ.՝ 154) վերաքննիչ բողոքից բավարարվել է 28-ը (2012թ.՝ 24), իսկ 80 (2012թ.՝ 53) վճռաբեկ բողոքից՝ 7-ը (2012թ.՝ 5): ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 471 (2012թ.՝ 329) հայց, որոնցից պետական շահերի պաշտպանության մասով դատարանի կողմից քննության է առնվել 297-ը (2012թ.՝ 236), բավարարվել է 239-ը (2012թ.՝ 165): Կատարվել է 1986 (2012թ.՝ 2303) ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել է 686 (2012թ.՝ 71354) նախազգուշացում, հաղորդում, միջնորդագիր և միջնորդություններ: Ընթացք է տրվել 12041 (2012թ.՝ 11333) դիմումի, բողոքի, առաջարկության:

7. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ

ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտում՝ 2013թ. ՀՀ ԶՈՒ-ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 4032 (2012թ.՝ 4341) դեպք: Արձանագրվել է նվազում 307 դեպքով կամ 7,1%-ով: Արձանագրված դեպքերից 2883-ը (2012թ.՝ 3119) կամ 71,5%-ը (2012թ.՝ 71,8%) եղել են պատահարներ, 1134-ը (2012թ.՝ 1193) կամ 28,1%-ը (2012թ.՝ 27,5%)՝ հանցագործություններ, այդ թվում՝ 766-ը (2012թ.՝ 859) կամ 67,5%-ը (2012թ.՝ 72%)՝ զինվորական, 368-ը (2012թ.՝ 334) կամ 32,5%-ը (2012թ.՝ 28%)՝ այլ ընդհանուր, 15 (2012թ.՝ 29) դեպքի կամ 0,7%-ի (2012թ.՝ 0,7%) հանգամանքները դեռևս չեն պարզվել:

Նախորդ տարվա համեմատ պատահարները նվազել են 236 դեպքով կամ 7,6%-ով, հանցագործությունները նվազել՝ 59-ով կամ 4,9%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 93-ով կամ 10,8%-ով, իսկ այլ հանցագործություններն աճել՝ 34-ով, կամ 10,2%-ով: Եթե 2012թ. ընթացքում արձանագրված 1193 հանցագործություններից 111-ը կամ 9,3%-ը է եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 74-ը՝ ծանր, իսկ 37-ը՝ առանձնապես ծանր, ապա 2013թ. արձանագրված 1134 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 114-ը կամ 10,0%-ը, որոնցից 83-ը՝ ծանր, 31-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն, նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործություններն աճել են 9-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել 6 դեպքով:

2013թ. արձանագրվել է զինծառայության հետ կապված մահվան 29 (2012թ.՝ 29) դեպք, որի հետևանքով մահացել է 30 (2012թ.՝ 36) զինծառայող, որոնցից հակառակորդի կողմից սպանության՝ 6 (2012թ.՝ 13), սպանության՝ 3 (2012թ.՝ 2), ականի պայթյունից՝ 1 (2012թ.՝ 1),

ԶՕԿ-ի խախտման հետևանքով՝ 1 (2012թ.՝ 1), ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու 8 (2012թ.՝ 9), հիվանդություններից՝ 4 (2012թ.՝ 3) և ավտովթարից՝ 4 (2012թ.՝ 7), դժբախտ պատահարից՝ 3:

2013թ. ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1346 (2012թ.՝ 1439) զինծառայող, այսինքն՝ նվազում է արձանագրվել 93-ով կամ 6,5%-ով: 52 (2012թ.՝ 55) զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք, 1281-ը (2012թ.՝ 1371)՝ միջին ծանրության և թեթև, 13-ի (2012թ.՝ 13) մարմնական վնասվածքների ծանրության աստիճանը ամփոփումների պահին դեռևս պարզված չի եղել:

2013թ. ընթացքում արձանագրված 1134 հանցագործությունից 26-ով կամ 2,3%-ով հնարավոր չի եղել պարզելու քրեական պատասխանատվության ենթակա անձի (անձանց) ով լինելը, բացահայտումը կազմել է 97,7% (2012թ.՝ 97,6%):

2013թ. նախապատրաստվել է 4696 նյութ (2012թ.՝ 4682), որոնցից 1230-ը (2012թ.՝ 1585)՝ քննչական, 3466-ը (2012թ.՝ 3097)՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից: Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 1230 (2012թ.՝ 1585) նյութից 806-ով (2012թ.՝ 1093) հարուցվել է քրեական գործ, 352-ը (2012թ.՝ 435) մերժվել է, 17 (2012թ.՝ 6) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, 47 (2012թ.՝ 49) նյութ միացվել է այլ նյութերի և քրեական գործերի, իսկ 8 (2012թ.՝ 2) նյութ փոխանցվել է 2014թ.: Մերժված 352 (2012թ.՝ 435) նյութի օրինականությունը ստուգվել, վերստուգվել և հաստատվել է, իսկ 1 (2012թ.՝ 1) նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացվել է:

2013թ. ՀՀ ՊՆ ՌՈ մարմինների և զորամասերի կողմից նախապատրաստված և ընթացք տրված 3466 (2012թ.՝ 3097) նյութից 2414-ով (2012թ.՝ 2615) մերժվել է քրեական գործի հարուցումը, 1022-ը (2012թ.՝ 465) ուղարկվել է ըստ ենթակայության, 21 (2012թ.՝ 17) նյութ փոխանցվել է 2014թ., բացի այդ, 2013թ. նախապատրաստված 9 (2012թ.՝ 24) նյութ միացվել է այլ նյութերի:

2013թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել ՀՀ ՊՆ ՔԾ բաժինների վարույթում քննվող 1898 (2012թ.՝ 2032) քրեական գործի նկատմամբ, այդ թվում՝ 5-ը (2012թ.՝ 15)՝ կրկնակի: Դրանցից 330-ը (2012թ.՝ 351) փոխանցվել է նախորդ տարվանից, 1001-ը (2012թ.՝ 1096) հարուցվել է հաշվետու տարում, որոնցից 999-ը (2012թ.՝ 1091)՝ քննչական մարմնի, 2-ը՝ հետաքննչական մարմնի (2012թ.՝ 5), 255-ը (2012թ.՝ 277)՝ կայազորների զինվորական դատախազների կողմից, 150-ը (2012թ.՝ 153) ստացվել է այլ մարմիններից, 19-ը (2012թ.՝ 33) անջատվել է այլ քրեական գործերից, 139-ով (2012թ.՝ 116) վերսկսվել է նախաքննությունը, 5-ը (2012թ.՝ 11) դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

2013թ. 1267 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, որոնցից 729-ը՝ 1030 անձի (2012թ.՝ 857 գործ, 1213 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 քրեական գործ 1 անձի նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ: 538 (2012թ.՝ 489) քրեական գործով վարույթը կարճվել է:

2013թ. 125 (2012թ.՝ 131) քրեական գործով վարույթը կասեցվել է: 87 (2012թ.՝ 131) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 112-ը (2012թ.՝ 75) միացվել է այլ գործի, 299-ը (2012թ.՝ 330) փոխանցվել 2014թ.:

2013թ. ընթացքում քրեական գործի վարույթը կարճելու՝ 4 (2012թ.՝ 15) որոշում է վերացվել դատախազների կողմից: Դրանցից 3-ի վարույթը կրկին կարճվել է, 1-ն՝ ուղարկվել ըստ ենթակայության:

2013թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 244.593.454 (2012թ.՝ 127.717.038) դրամի վնաս պատճառելու փաստերը, որից մինչդատական վարույթում վերականգնվել է 30.338.630 (2012թ.՝ 99.577.039) դրամը:

2013թ. զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 763 քրեական գործ՝ 1141 անձի (2012թ.՝ 838 գործ, 1120 անձ) վերաբերյալ: Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ ընդհանուր առմամբ 763 քրեական գործ 1041 անձի վերաբերյալ քննվել է դատարանում, որից 689 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 1011 անձ (2012թ.՝ 810 գործ, 1076 անձ):

Դատարանների որոշումներով 72 քրեական գործ 122 անձի (2012թ.՝ 22 գործ, 35 անձ) վերաբերյալ կարճվել է: 137 (2012թ.՝ 13) անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ: 2 գործով 6 անձի վերաբերյալ և 1 առանձին գործով 1 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2012թ.՝ 5 գործ, 8 անձ), իսկ 2 անձի նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Դատապարտված 1011 անձից 957-ը եղել է զինծառայող (2012թ.՝ 1024): Դատապարտված զինծառայողներից 195-ը եղել է սպա (2012թ.՝ 153), 764-ը՝ պայմանագրային և ժամկետային զինծառայող (2012թ.՝ 872): Նախորդ տարվա համեմատությամբ 67-ով պակասել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 54 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 10 կին, 2 անչափահաս (2012թ.՝ 52, որից 5-ը՝ կին, 1-ը՝ անչափահաս):

Դատապարտված 1011 (2012թ.՝ 1076) անձից 216-ը (2012թ.՝ 240) դատապարտվել է ազատազրկման, 229-ը (2012թ.՝ 312)՝ կալանքի, 128-ը (2012թ.՝ 163)՝ կարգապահական գումարտակում պահելու, 75-ը (2012թ.՝ 51)՝ տուգանքի, պատիժը պայմանականորեն չի կիրառվել ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ 324 (2012թ.՝ 309) անձի նկատմամբ: Դատապարտվածներից 21 անձ նախնական կալանքից ազատվել է այլ պատժի նշանակմամբ, այդ թվում 9-ը համաներման կիրառմամբ (2012թ.՝ 19), իսկ ազատազրկման է դատապարտվել նախնական կալանքի տակ չգտնվող 43 անձ (2012թ.՝ 56):

Դատավճռի կայացմամբ ավարտված 1011 անձի վերաբերյալ 689 քրեական գործից 539-ով կամ 78,2%-ով 773 անձի նկատմամբ կիրառվել է դատաքննության արագացված կարգ (2012թ.՝ 574 գործով 760 անձ):

Դատարանների որոշումներով 72 քրեական գործ 122 անձի (2012թ.՝ 22 գործ, 35 անձ) վերաբերյալ կարճվել է, այդ թվում՝ 8 գործ 8 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 56 գործ 93 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 4 գործ 8 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի, 4 գործ 8 անձի վերաբերյալ՝ այլ հիմքով, 1 գործ 1 անձի վերաբերյալ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, 1 գործ 2 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով, 2 գործ 2 անձի վերաբերյալ՝ դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով: Նշված որոշումները չեն բողոքարկվել:

2013թ. իրականացվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 523 (2012թ.՝ 577) ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է պետության գույքային շահերի 470 (2012թ.՝ 450) խախտում, պետությանը պատճառվել է 1.668.362.239 (2012թ.՝ 1.538.903.674) դրամի վնաս: Փաստացի վերականգնվել է պետությանը պատճառված 609.000.977 (2012թ.՝ 545.893.905) դրամի վնասը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել և քննչական մարմիններին է փոխանցվել 148 (2012թ.՝ 107) նյութ, դատարան է հարուցվել պետական շահերի պաշտպանության 5 (2012թ.՝ 3) հայց՝ ընդհանուր առմամբ 23.766.041 (2012թ.՝ 1.694.588) դրամ բռնագանձելու պահանջով:

Նախապատրաստված նյութերով քննչական մարմինների կողմից հարուցվել է 60 (2012թ.՝ 52) քրեական գործ:

Նախապատրաստված նյութերով և հարուցված քրեական գործերով արձանագրվել է պետությանը պատճառված 1.162.374.476 (2012թ.՝ 1.422.262.517) դրամի վնաս, որից 18.768.716 (2012թ.՝ 58.314.210) դրամը մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է:

2013թ. դատարանների կողմից քննության է առնվել 2 հայց (2012թ.՝ 1)՝ 1.124.225 դրամ (2012թ.՝ 570.367) բռնագանձելու պահանջով, որոնք ամբողջությամբ բավարարվել են: 3-ը գտնվում են դատաքննության փուլում:

2013թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից իրականացվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 523 (2012թ.՝ 577) ուսումնասիրություն:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է պետության գույքային շահերի 470 (2012թ.՝ 450) խախտում, պետությանը պատճառված վնասը կամովին հատուցելու անհրաժեշտության մասին 311 (2012թ.՝ 252) նախազգուշացում է արվել, ուղարկվել է 180 (2012թ.՝ 194) հաղորդում:

Իրականացված ուսումնասիրություններով արձանագրվել է պետությանը պատճառված 1.668.362.239 (2012թ.՝ 1.538.903.674) դրամի վնաս, որից փաստացի վերականգնվել է պետությանը պատճառված 608.738.477 (2012թ.՝ 545.593.905) դրամի վնաս, որից 607.614.252

դրամը՝ արտադատական կարգով, իսկ 1.124.225 դրամը՝ դատարանի կողմից բավարարված հայցերով:

2013թ. ընթացքում վերականգնվել է նաև 262.500 դրամի նյութական վնաս, որն առաջացել է 2012թ. ընթացքում դատարանի կողմից բավարարված հայցերով:

2013թ. ընթացքում կայազորային կարգապահական մեկուսարաններում կատարվել են 117 (2012թ.՝ 186) ստուգում և ուսումնասիրություն՝ անձանց պահելու պայմանների ու կարգի, զբոսանքի կազմակերպման գործընթացի, բուժօգնության կազմակերպման, տեսակցությունների տրամադրման հիմքերի ու կարգի, նյութակենցաղային ապահովման վիճակի վերաբերյալ, որոնց արդյունքում արձանագրվել է 3 (2012թ.՝ 19) խախտում և կարգավորման ենթակա հարց, ներկայացվել է 3 (2012թ.՝ 4) հաղորդում:

2013թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում կատարվել է 10 (2012թ.՝ 6) ուսումնասիրություն, որոնց ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների պատճառներ են հանդիսացել՝

- զինծառայողների մոտ տարբեր բնույթի ընտանեկան, անձնական, կենցաղային խնդիրների առկայությունը,

- ծառայության պայմաններին չհարմարվելն ու անտարբեր վերաբերմունքը ծառայության նկատմամբ,

- զինծառայողների նկատմամբ համածառայակիցների, կրտսեր ու ավագ սպայական կազմի ներկայացուցիչների կողմից դրսևորվող ոչ կանոնադրային վարքագծի դրսևորումները, որոնք հաճախ հանգեցնում են, իբրև բողոքի նշան, զորամասը կամ ծառայության վայրը լքելուն և այլն:

Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների վերլուծությունները և հարուցված քրեական գործերի, նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս հանցատեսակի կատարման պատճառներ են հանդիսացել՝

- զինծառայողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքներում առկա բացթողումները, զինվորական կանոնագրքերի պահանջների վատ իմացությունը, ծառայությունը դրանց համապատասխան կազմակերպելու մշակույթի բացակայությունը, հատկապես զորակոչին հաջորդած ժամանակաշրջանում զորակոչիկների միջանձնային հարաբերություններում վտանգավոր ու անխուսափելի դրսևորումների կանխարգելմանն ուղղված անբավարար աշխատանքը,

- զորամասերում առանձին հեղինակությունների առկայությունը և կրտսեր հրամանատարական կազմի կողմից նրանց հակակշռելու և սեփական հեղինակությամբ նրանց ազդեցությունը չեզոքացնելու անկարողությունը,

- համածառայակիցների և կրտսեր ու ավագ սպայական կազմի հետ փոխհարաբերություններում զինծառայողների կողմից սադրիչ վարքագծի տարաբնույթ դրսևորումները,

- առանձին զինծառայողների ինքնահաստատվելու, սեփական անձի ենթադրյալ առավելություններն ընդգծելու ցանկությունն ու դրանով պայմանավորված՝ շրջապատի անխուսափելի հակազդեցությունը և այլն:

8. Վերահսկողական-տեսչական գործունեության ոլորտ

Վերահսկողական-տեսչական գործունեության ոլորտում 2013թ. ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ընդունվել է 123 (2012թ.՝ 57) հրաման, կազմվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 7 (2012թ.՝ 3) կարգադրություն և 7 (2012թ.՝ 5) հանձնարարական:

Ամփոփվել, վերլուծվել և ընդհանրացվել է դատախազական լիազորությունների և գործունեության իրականացման աշխատանքային փորձը (պրակտիկան) և դատախազություններին, կառուցվածքային ստորաբաժանումներին ու ավագ դատախազներին ուղարկվել է 9 (2012թ.՝ 6) տեղեկատվական նամակ:

Ամփոփվել են դատախազություններից և կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված՝ դատախազների միջև պարտականությունների բաշխման 47 (2012թ.՝ 54) կարգադրություն և համապատասխան կարգադրություններում կատարված փոփոխություններ և լրացումներ, որոնք, անհրաժեշտության դեպքում, վերադարձվել են հասցեատերերին, լրամշակվել, համապատասխանեցվել մշակված տիպային ձևին և կրկին ներկայացվելուց հետո ամփոփվել:

Ուսումնասիրվել, վերլուծվել և ամփոփվել է դատախազություններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և առանձին դատախազներից ստացված՝ 2012 թվականի տարեկան և 2013 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքների արդյունքների հաշվետվության վերաբերյալ 65 (2012թ.՝ 32) զեկուցագիր, որի արդյունքում կազմվել և դատախազություններ ու կառուցվածքային ստորաբաժանումներ է ուղարկվել տեղեկատվական նամակ:

Քննարկվել են դատախազությունների և կառուցվածքային ստորաբաժանումների 2012թ. տարեկան աշխատանքների արդյունքների հաշվետվության վերաբերյալ զեկուցագրերում առկա առաջարկություններն ու հիմնախնդիրները և սահմանված կարգով դրանց ընթացք է տրվել:

Վերլուծվել են ՀՀ գլխավոր դատախազության 2013 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների աշխատանքի ծրագրով նախատեսված, ընդհանուր առմամբ, 25 կետի (2012թ.՝ 21) պահանջների կատարման վերաբերյալ կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ զինվորական դատախազության կողմից տրված տեղեկանքները (զեկուցագրերը) և ապահովվել է դրանց հետագա քննարկումը ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալներին առընթեր օպերատիվ խորհրդակցություններում կամ ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերում, այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացվել են համապատասխան եզրակացություններ:

Վերլուծվել և ամփոփվել են ՀՀ գլխավոր դատախազության 2013 թվականի 2-րդ և 2014 թվականի 1-ին կիսամյակների աշխատանքի ծրագրերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված 18 (2012թ.՝ 22) կարծիք և առաջարկություն, որոնք, ինչպես նաև ՀՀ դատախազության համապատասխան կոլեգիայի քննարկման արդյունքները հաշվի առնելով, մշակվել են ՀՀ գլխավոր դատախազության 2013թ. 2-րդ կիսամյակի աշխատանքի ծրագիրը՝ բաղկացած 11 և 2014թ. 1-ին կիսամյակի աշխատանքի ծրագիրը՝ 7 կետերից:

Ուսումնասիրվել, ամփոփվել և վերլուծվել է 2012թ. տարեկան և 2013թ. 1-ին կիսամյակի աշխատանքների վերաբերյալ դատախազությունների կողմից ներկայացված օպերատիվ խորհրդակցության 38 (2012թ.՝ 46) արձանագրություն, որոնց հիման վրա կազմվել և դատախազություններ ու կառուցվածքային ստորաբաժանումներ է ուղարկվել համապատասխան տեղեկատվական նամակ, որում նշվել են արձանագրություններում տեղ գտած թերություններն ու բացթողումները՝ հետագայում դրանք բացառելու համար, ինչպես նաև դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման ընթացքում ծագած հիմնախնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները: Իրականացված աշխատանքի արդյունքում զգալիորեն բարելավվել է կատարված աշխատանքների վիճակը:

Անցկացվել է ՀՀ դատախազության 5 (2012թ.՝ 6) կոլեգիայի նիստ, որոնց առնչությամբ կատարվել են համապատասխան կազմակերպական աշխատանքներ՝ հավաքվել են ամփոփիչ տեղեկանքները, նյութերը, որոշումների նախագծերը, դրանք բազմացվել ու տրամադրվել են կոլեգիայի մասնակիցներին, կազմվել են կոլեգիայի արձանագրություններն ու որոշումները, որոնցից յուրաքանչյուրը կրկնակի լրամշակվել է, դրվել շրջանառության մեջ, կրկին կազմվել են արձանագրություններ ու որոշման նախագծեր և ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազի հաստատմանը:

ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները, որպես դատախազության կողմից մշակվող և իրականացվող քրեական պետական քաղաքականության առանձնահատուկ իրավակազմակերպական դրսևորումներ, ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով շարունակվել են կենսագործվել տարածքային դատախազություններում և կառուցվածքային ստորաբաժանումներում, իսկ դրանց միջոցով նաև նախաքննության և հետաքննության մարմիններում: ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները վերաբերել են այնպիսի հիմնարար հարցերի, ինչպիսիք են 2012թ. աշնանային զորակոչի կազմակերպման և անցկացման ընթացքում թույլ տրված խախտումների առթիվ ձեռնարկված դատախազական ներգործության արդյունքները, 2012թ. աշնանային զորակոչի ընթացքում «Զինապարտության մասին», «Այլընտրանքային ծառայության մասին» և «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքների պահանջների կատարման և այդ բնագավառում կատարված դատախազական աշխատանքների վիճակի մասին և 2012թ. աշնանային զորակոչի անցկացման ընթացքում օրինականության ապահովման ուղղությամբ կատարված դատախազական աշխատանքները, 2012թ. ընթացքում արձանագրված՝ կանխամտածված և կեղծ սնանկության

դեպքերի գրանցման, հաշվառման, բացահայտման և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը, 2012թ.-ին գրանցված՝ դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք պատճառելու (ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդված) վերաբերյալ քրեական գործերով հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության պրակտիկայի վիճակը, 2012թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2013թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ ստացված իրազեկումներով ՀՀ դատախազության կոլեգիայի 2012թ. օգոստոսի 10-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջների կատարման վիճակը, 2012 թվականի ընթացքում տրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը և այլն:

Դատախազների կողմից ծառայողական պարտականությունների կատարման և վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հանձնարարությամբ և նախաձեռնությամբ իրականացվել է 13 կարգապահական վարույթ՝ 18 դատախազի նկատմամբ, որոնցից 9 կարգապահական վարույթ՝ 14 դատախազի նկատմամբ ավարտվել է, 3 կարգապահական վարույթ՝ 3 դատախազի նկատմամբ դադարեցվել է, 1 կարգապահական վարույթ՝ 1 դատախազի նկատմամբ ընթացքում է և տեղափոխվել է 2014 թվական, որը կազմում է հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված 337 հաստիքով դատախազների 4,2%-ը:

Ավարտված կարգապահական վարույթների արդյունքներով 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «դիտողություն» տեսակի կարգապահական տույժ, 5 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «խիստ նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, 1 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթի նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով, որի եզրակացության համաձայն նրա նկատմամբ նշանակվել է «զբաղեցրած պաշտոնից ազատում» տեսակի կարգապահական տույժ, 4 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթը դադարեցվել է, 3 դատախազ ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ ազատվել է կարգապահական տույժից, 1 դատախազի նկատմամբ կիրառվել է դասային աստիճանի իջեցում տեսակի կարգապահական տույժը:

2013թ. ընթացքում քաղաքացիների դիմում-բողոքների և առանձին ստուգումների արդյունքներով իրականացվել է 33 ծառայողական ուսումնասիրություն՝ 47 դատախազի, որից հաշվարկային՝ 44 դատախազի նկատմամբ, որոնցից՝ 30 ծառայողական ուսումնասիրություն՝ 44 դատախազի, որից հաշվարկային՝ 41 դատախազի նկատմամբ ավարտվել է, 2 ծառայողական ուսումնասիրություն՝ 2 դատախազի նկատմամբ դադարեցվել է, 1 ծառայողական քննություն՝ 1 դատախազի նկատմամբ ընթացքում է և տեղափոխվել է

2014 թվական, որը կազմում է հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված 337 հաստիքով դատախազների 13,1%-ը:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ կարգապահական վարույթի և ծառայողական ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցություններում, որոնց ընթացքում ընդունված որոշումներով դատախազները խիստ նախազգուշացվել են և միաժամանակ նրանց ուշադրությունը հրավիրվել է արձանագրված թերությունների, բացթողումների ու խախտումների վրա՝ անհրաժեշտ հետևություններ անելու և այսուհետ դրանք բացառելու համար:

2013թ. վերահսկողության է վերցվել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված 2830 (2012թ.՝ 2170) դիմում-բողոքով և այլ գրագրություններով տրված հանձնարարական, որոնց արդյունքներով կազմվել է 2 (2012թ.՝ 2) տեղեկատվական նամակ:

Այդ բնագավառում միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացվել է 23 (2012թ.՝ 108) դիմում, որոնց տրվել են պատասխաններ:

Ամփոփվել, վերլուծվել և ընդհանրացվել է ՀՀ դատախազության կոլեգիայի 07.07.2010թ. նիստի (Արձանագրություն N 3) օրակարգի 5-րդ հարցի որոշման 4-րդ կետի (ԱՄՆ-ի ՄԶԳ-ի հիմնած՝ շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) հետ համագործակցության) պահանջների կատարման վերաբերյալ դատախազություններից ու կառուցվածքային ստորաբաժանումներից 2012թ. ընթացքում ստացված 24 (2012թ.՝ 12) զեկուցագրերն ու հաղորդումները, որոնց արդյունքներով կազմվել է 2 (2012թ՝ 2) տեղեկատվական նամակ:

Կազմվել է ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներից, պետական մարմիններից, միջազգային ու ներպետական կազմակերպություններից ստացված իրավական ակտերի, տեղեկատվական նամակների, ծրագրերի և այլ փաստաթղթերի վերաբերյալ 15 (2012թ.՝ 5) կարծիք (առաջարկություն, նկատառում): Այդ թվում՝ «ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 13-ի N 292-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի, ՀՀ մարդու իրավունքների վերաբերյալ տարեկան զեկույցը նախապատրաստելու նպատակով ԱՄՆ դեսպանության կողմից պատրաստած հարցաշարի, «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» նախագծի, ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների խորհրդի բարձրագույն հանձնակատարի գրասենյակից ստացված ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին բանաձևի, 2012 թվականի ՀՀ-ՆԱՏՕ ԱԳԳԾ ինքնագնահատման զեկույցը կազմելու համար ՀՀ դատախազությանը վերաբերող պատասխանների ընդգրկմամբ անհրաժեշտ տեղեկությունների ու վիճակագրական տվյալների, ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների շրջանակներում կազմված՝ ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և կից հիմնավորվող փաստաթղթերի, ԱՄՆ-ի պետքարտուղարության 2013թ. Մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցի պատրաստման

նպատակով ՀՀ գերատեսչություններին դիմած՝ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանությանն անհրաժեշտ տեղեկությունների ու վիճակագրական տվյալների վերաբերյալ և այլն:

2013թ.-ին ՀՀ դատախազությունը շարունակել է իրականացնել.

1. ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածներով,

2. ՀՀ Կառավարության 2008թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» N 1039-Ն որոշմամբ հաստատված հավելվածով,

3. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի «Ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին» N 324-Ն հրամանով,

4. ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-52-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածով,

5. ՀՀ Կառավարության 2012թ. ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 533-Ն որոշմամբ հաստատված հավելվածով.

6. ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի «ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» N ՆԿ-51-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածով,

7. ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 15-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշմամբ հաստատված հաստատված հավելվածով՝ ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները:

ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով» և դրանից բխող միջոցառումների ցանկի 7.5.1 և 7.5.2 կետերի պահանջների, ՀՀ գլխավոր դատախազության համակարգում իրականացված համապատասխան գործընթացների շրջանակում, մշակման և ներդրման փուլում են ՀՀ դատախազության համակարգում վիճակագրության և արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգերը (ծրագրերը), որոնց սկզբնական՝

նախապատրաստական փուլի համապատասխան աշխատանքների իրականացման համար բանակցություններ են վարվում համաշխարհային բանկի հետ՝ ծրագրին նրա հնարավոր մասնակցության և օժանդակության առումով:

Նշված համակարգի ներդրմամբ ՀՀ դատախազության աշխատանքի ոչ ֆինանսական ցուցանիշները (լիազորություններից բխող գործառույթներին բնորոշ միջոցառումներ) ներկայացվելու են ամենօրյա կարգով վարվող աճողական էլեկտրոնային վիճակագրության և դրանց համապատասխան՝ դրանց հիմքում ընկած բովանդակային՝ փաստաթղթային հիմքերի տեսքով և այլևս դրանք առանձին՝ ըստ տարբեր հաշվետու ժամանակահատվածների ներկայացնելու և տրամադրելու անհրաժեշտություն չի լինելու, այլ ցանկացած պահի հասանելի է լինելու այն մարմնին, որին տրվել են իրեն անհրաժեշտ հասանելիության սահմանները: Հիշյալ համակարգը նաև դատախազության սահմանադրական լիազորությունների, դրանցից բխող գործառույթների և, ընդհանրապես, դատախազության գործունեության կազմակերպման իրականացման արդյունքների մասին փաստող ընդարձակ և տեսանելի տվյալների բազա է, որն, իր հերթին, տեղեկություններ է պարունակելու դատախազի աշխատանքի ոչ ֆինանսական ցուցանիշների արդյունքների մասին, որի կապակցությամբ էլ հենց կիրառվելու են գրությունում նշված չափորոշիչները:

9. Միջազգային-իրավական օգնության բնագավառ

Միջազգային-իրավական օգնության բնագավառում 2013թ. աշխատանք է կատարվել քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման, ներառյալ՝ քրեական հետապնդման կամ դատավճիռն ի կատար ածելու նպատակով հետախուզվող անձանց հանձնման, երկկողմ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցության և այլ ոլորտներում:

2013թ. ԱՊՀ մասնակից պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու 55 (2012թ.՝ 72), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 61 (2012թ.՝ 41) միջնորդություն, ընդամենը՝ 113 (2012թ.՝ 97) միջնորդություն:

2013թ. քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 46 (2012թ.՝ 49) միջնորդություն, այլ օտարերկրյա պետություններից 43 (2012թ.՝ 32) միջնորդություն, ընդհանուր առմամբ ստացվել է 89 (2012թ.՝ 81) միջնորդություն:

Կատարված աշխատանքների ամփոփումը ցույց է տալիս, որ ՀՀ դատախազության միջազգային-իրավական գործունեությունը ակտիվ կերպով ծավալվում է նաև ԱՊՀ մասնակից-պետությունների տարածքից դուրս, ընդգրկելով եվրոպական բազմաթիվ երկրներ, որոնց հետ մինչ այդ համագործակցություն չի տրամադրվել և չի հայցվել:

Այսպիսով՝ ստացված և ուղարկված միջնորդությունների թիվը 2013 ընթացքում կազմել է 205 (2012թ.՝ 194):

Հանցագործություն կատարած անձանց հանձնման և դատապարտյալների փոխանցման մասին հարցումների նախապատրաստման և ուղարկման ուղղությամբ կատարված

աշխատանքների ոլորտում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում քննվող քրեական գործերով հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ 77 (2012թ.՝ 69) միջնորդության նախապատրաստում և ուղարկում, որոնցից 65-ը (2012թ.՝ 60) ուղարկվել է ԱՊՀ մասնակից պետությունների, իսկ 12-ը (2012թ.՝ 9) այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը: ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձանց այլ պետությունների տարածքում հայտնաբերելու մասին ստացված հեռագրերի հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները հանգամանալից ուսումնասիրվել են, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ, անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ: Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում բացառվել են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները: Ներկայացված հանձնման 77 միջնորդությունից 40-ը (2012թ.՝ 24) բավարարվել է, 10-ը (2012թ.՝ 2) մերժվել է, 27-ը (2012թ.՝ 42) քննարկման փուլում է:

Նույն ժամանակահատվածում այլ պետությունների իրավասու մարմինների կողմից քննարկվել է ներկայացված 32 միջնորդություն, բավարարվել է նաև նախկինում ներկայացված ևս 26 (2012թ.՝ 23) միջնորդություն, իսկ 5 միջնորդություն մերժվել է, 1-ը քննարկման փուլում է:

Ստացված 27 (2012թ.՝ 22) միջնորդությունից բավարարվել է 10-ը, հիմնականում քաղաքացիության հիմքով մերժվել է 4 միջնորդություն, 10-ը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 3-ը քննարկման փուլում է:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից բավարարվել է նախորդ հաշվետու ժամանակահատվածում ստացված 2 միջնորդություն, մերժվել է 2 միջնորդություն: Հանձնումը թույլատրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 3 որոշում բողոքարկվել է դատական կարգով, որից՝ 2 որոշում թողնվել է անփոփոխ և անձինք հանձնվել են, իսկ ներկայացված 1 բողոքը քննարկման փուլում է:

ՀՀ դատախազությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարան է ներկայացրել 30 միջնորդություն օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորման ժամկետները երկարացնելու մասին և մասնակցել դրանց քննության դատական նիստերին:

2013թ. հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 128 (2012թ.՝ 115) անձի վերաբերյալ: Հայտնաբերված հետախուզվողների քաղաքացիությունը պարզելու նպատակով հարցումներ են կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, անմիջապես տեղեկացվել է հետախուզման նախաձեռնողը, պահանջվել են հանձնման փաստաթղթեր, իսկ ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով պահանջվել են հարուցված քրեական գործերը:

Քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարությամբ այլ պետությունների իրավապահ մարմիններին ուղարկվել են 30 (2012թ.՝ 34) քրեական գործ և նյութեր, որոնցից 22-ն ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 8-ը այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին: Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդության հիման վրա ստացվել են 17 (2012թ.՝ 11) քրեական գործ և նախապատրաստված նյութեր:

2013թ. Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող 222 անձ:

2013թ. ՀՀ է տեղափոխվել ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող 61 անձ:

Հատկանշական է ԱՄՆ իրավապահ մարմինների հետ իրավական օգնության բնագավառում պայմանագրի բացակայության պայմաններում իրականացվող մշտական արդյունավետ համագործակցությունը, որն ընթանում է ԱՄՆ-ում հանցագործություն կատարած և Հայաստանում թաքնվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց քրեական հետապնդման նպատակով ԱՄՆ իրավասու մարմիններին հանձնելու, ԱՄՆ-ում հարուցված քրեական գործերը Հայաստանի Հանրապետությունում քննելու համար տրամադրելու, ինչպես նաև համագործակցության այլ ձևերով:

2013թ. կազմակերպվել է այլ պետությունների դատախազությունների, իրավապահ այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակությունների շուրջ 45 հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների հետ, այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազի հրավերով 2013թ. ապրիլի 30-ից մայիսի 2-ը Հայաստան է այցելել Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր դատախազ Մոհսենի Էժեիի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում 2013թ. ապրիլի 30-ին ստորագրվել է երկու պետությունների դատախազությունների միջև համագործակցության հուշագիր: ՀՀ գլխավոր դատախազի հետ համաձայնեցվել է 2014թ. գարնանը ՀՀ գլխավոր դատախազի փոխադարձ այցի ժամկետը:

ՀՀ դատախազությունը ներգրավված լինելով Մոնտենեգրոյի կողմից ՄԱԿ-ի՝ կոռուպցիայի դեմ պայքարի Կոնվենցիայի կատարման ապահովման մակարդակը գնահատելու համար ստեղծված աշխատանքային խմբում, հայկական կողմն ուսումնասիրել է Մոնտենեգրոյի ինքնագնահատման զեկույցը, վերջինիս կողմից ՄԱԿ-ի՝ Կոնվենցիայի իմպլեմենտացիայի հիմնահարցերը և տվել եզրակացություն, որից հետո որպես փորձագետ մասնակցել նշված զեկույցի դիտարկման աշխատանքային խմբի կազմում զեկույցի արդյունքներն ամփոփելու և ՄԱԿ-ի գրասենյակ ներկայացնելու նպատակով Մոնտենեգրո կատարված այցին: 2013 թվականի 1-ին կիսամյակում զեկույցն ընդունվել և հրապարակվել է:

Ի կատարումն 2012թ. հունվարի 29-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ու Մոլդովայի Հանրապետության գլխավոր դատախազության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի, 2013թ. հուլիսի 1-ին Մոլդովայի և ՀՀ գլխավոր դատախազները ստորագրել են 2013-2015թթ. դատախազությունների միջև համագործակցության ծրագիր: ՀՀ և Կիպրոսի գլխավոր դատախազների միջև ստորագրվել է

երկու դատախազությունների միջև համագործակցության ակտիվացման հուշագիր: Այս ժամանակահատվածում Հայաստան են ժամանել նաև Դատախազների միջազգային Ասոցիացիայի գլխավոր քարտուղար պարոն Դերկ Կուիպերսը և ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի գործադիր քարտուղարը: Դատախազների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղարի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գլխավորած պատվիրակությունը 2013թ. սեպտեմբերի 8-ից 12-ը մասնակցել է Մոսկվայում կայացած Դատախազների Միջազգային Ասոցիացիայի 18-րդ ամենամյա կոնֆերանսին:

2013թ. ապահովվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գլխավորած պատվիրակության մասնակցությունը Ղրղզստանում սեպտեմբերի 26-ին կայացած ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նիստին:

Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդատվական խորհրդի 8-րդ համաժողովի նախապատրաստման նպատակով Ստրասբուրգում տեղի է ունեցել աշխատանքային խմբի հանդիպում: Այդ ընթացքում քննարկվել է ԵԽ անդամ-պետությունների կողմից «Դատախազության և զանգվածային լրատվության միջոցների փոխհարաբերությունների մասին» ԵԴԽԽ կարծիք 8-ի նախագիծը, որի լրամշակված տարբերակն ընդունվել է 2013թ. հոկտեմբերի 8-ից 9-ը Երևանում՝ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում կազմակերպված նիստի ընթացքում:

Մի շարք դրական ձեռքբերումներ են արձանագրվել 2008թ. դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտ քաղաքում երկու պետությունների գլխավոր դատախազների կողմից կնքված «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին» համաձայնագիր-հուշագրի շրջանակներում, որի իրացման նպատակով լրամշակվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության ծրագիրը:

Ի կատարումն 1998թ. ՉԺՀ և ՀՀ գլխավոր դատախազների կողմից կնքված համագործակցության ակտիվացման հուշագրի, 2012թ. հունիսի 11-ին կնքվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունների միջև համագործակցության ծրագիր 2012-2014թթ. համար: Ծրագիրը նախատեսում է փոխադարձ այցեր, տեղեկատվության փոխանակում, կլոր սեղաններ և խորհրդաժողովներ: Այդ ծրագրի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գլխավորած պատվիրակությունը 2013թ. օգոստոսի 14-ից 19-ը մասնակցել է Պեկինում կայացած՝ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում փորձի փոխանակման, ինչպես նաև առաջավոր պրակտիկայի վերաբերյալ քննարկումներին:

2013թ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել իր համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարի մշտական ներկայացուցչի գրասենյակի, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի, ԵԱՀԿ-ի, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Կոորդինացիոն խորհրդի

քարտուղարության, Դատախազների Միջազգային Ասոցիացիայի, Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Կոորդինացիոն Խորհրդից ՀՀ դատախազությունում ստացվել է 61 (2012թ.՝ 45) փաստաթուղթ: Ստացված փաստաթղթերը ուսումնասիրվել են, ներկայացվել են կարծիքներ և առաջարկություններ, կազմվել են տեղեկատվական նամակներ և կատարման ուղարկվել դատախազության այլ ստորաբաժանումներ: ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Կոորդինացիոն խորհրդի գործադիր քարտուղարի խնդրանքով, տեղեկատվության փոխանակման կարգով, տրամադրվել են մի շարք տեղեկանքներ:

ՀՀ դատախազությունը մասնակցել է միջազգային-իրավական համագործակցության հարցերով Հայաստանի Հանրապետության միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի ու համաձայնագրերի, ներպետական իրավական ակտերի մշակմանը և կնքմանը: Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում կարևորագույն ձեռքբերումը վերջին տարիներին մի շարք դատախազությունների միջև երկկողմ համագործակցության ակտիվացմանն ուղղված համաձայնագրերի և նորմերի կնքման համաձայնության ձեռքբերումն է: Նման համաձայնություն է քննարկվում նաև Ֆրանսիայի դատախազության հետ, ինչպես նաև Հուշագրերի կնքման նպատակով փաստաթղթերի նախագծերը դիվանագիտական ուղիներով փոխանցվել են ԱՄԷ-ի և Քաթարի դատախազներին:

ՀՀ Վարչապետի որոշմամբ ՀՀ դատախազությունը ներգրավվել է ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի համաձայն Հայաստանի համատեղ զեկույցները նախապատրաստող աշխատանքային խմբում:

ՀՀ դատախազությունը շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանն է ուղարկել «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև թմրանյութերի վերահսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրի թվով 15-րդ լրացման տեքստը: Արձանագրությամբ նախատեսվում է 2.241.000 ԱՄՆ դոլարի աջակցություն ԱՄՆ դեսպանության մշտական իրավախորհրդատուի գրասենյակի, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի, իրավական սոցիալիզացիայի ծրագրի, ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի բարեփոխումների ծրագրի, իրավապահ ոլորտի զարգացման ծրագրի, ֆինանսական դիտարկումների կենտրոնի զարգացման ծրագրի, քրեափորձագիտական ինստիտուտի զարգացման ծրագրի իրականացման նպատակով:

Արձանագրության 15-րդ լրացումը 13.09.2013թ. ստորագրվել է ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի կողմից:

10. Իրավական ապահովման ոլորտ

ՀՀ դատախազության կողմից իրավական ապահովման ոլորտում 2013թ. ընթացքում մշակվել կամ լրամշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող մի շարք

իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործելու ՀՀ օրենսդրությունը և բարելավելու ՀՀ դատախազության գործունեությունը: Մասնավորապես, մշակվել է 26 (2012թ.՝ 25) օրենսդրական ակտի նախագիծ և դրվել է շրջանառության մեջ:

ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով» և դրանից բխող միջոցառումների ցանկի 7.1.1, 7.1.2, 7.1.3., 7.4.1, 7.8 կետերով նախապատրաստվել և մշակվել են իրավական ակտերի նախագծեր:

ՀՀ դատախազության մասով նախատեսված վերը նշված մի շարք միջոցառումներ ներկայումս իրականացման փուլում են, որոնք վերաբերում են գործող օրենսդրության կատարելագործմանը և դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման արդյունավետ կառուցակարգեր սահմանելուն, մասնավորապես՝ նախատեսված է կանոնակարգել և հստակեցնել **վերադաս-ստորադաս դատախազ փոխհարաբերությունը**, սահմանել հանցավորության դեմ պայքարում իրավական մարմինների գործողությունների՝ դատախազության կողմից **համակարգման գործառույթը**, դատախազի կողմից իր լիազորությունների շրջանակներում տրված **օրինական պահանջների պարտադիր կատարման վերաբերյալ դրույթը,** միևնույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման շրջանակներում **մեկ դատախազի վարույթից մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելու** հստակ և կանխատեսելի հիմքերը, ներդնել **դատախազի օգնականի ինստիտուտը, դատախազությունում պետական ծառայությունը կարգավորող իրավական ակտի ընդունումը** և այլն:

Նույն խնդրի համատեքստում են դիտարկվում նաև նշված ցանկով նախատեսված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հստակեցման, այդ թվում՝ դատախազության հսկողական լիազորությանը բնորոշ պետաիշխանական լծակների ու ներգործության միջոցների վերապահման, այս ոլորտում հսկողության և վերահսկողության մեթոդների ու եղանակների սահմանման հարցերը, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման ոլորտում դատախազական գործառույթի հստակեցման՝ ՀՀ գլխավոր և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունների կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային դատախազությունների միջև այս լիազորություններից բխող գործառույթների իրականացման շրջանակները հստակեցնելու չափորոշիչները սահմանելու հարցերը և այլն:

Նշված գործառույթների մեծ մասի վերաբերյալ օրենսդրական փաթեթները, սահմանված ժամանակացույցի համաձայն, կազմվել և ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն՝ սահմանված կարգով ընթացքը լուծելու համար և քննարկման, իսկ մյուս մասը մշակման փուլում են:

Հայաստանի Հանրապետության նախագահի 30.06.2012թ. ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թ.թ. ռազմավարական ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության կողմից կազմվել, ներքին շրջանառության մեջ են դրվել և ՀՀ արդարադատության նախարարություն են ուղարկվել մի շարք օրենքների նախագծեր մասնավորապես՝

«Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25, 26, 31, 31.1 հոդվածներ)՝ ի կատարումն Ծրագրի 7.1.2.-րդ և 7.1.3.-րդ կետերի, «Դատախազության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը («Դատախազության մասին» ՀՀ օրենքում «Դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելը» վերնագրով 4.1 հոդվածի լրացում)՝ ի կատարումն Ծրագրի 7.8 կետի, «ՀՀ Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ՀՀ Քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածը 2.1 մասով լրացնելու վերաբերյալ)՝ ի կատարումն Ծրագրի 7.8 կետի, «Դատախազության մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում նոր պարբերություն լրացնելու մասին)՝ ի կատարումն Ծրագրի 7.9 կետի, «Դատախազության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված)՝ ի կատարումն ծրագրի 7.6-րդ կետի, և այլն:

2013թ. ստացվել են 31 (2012թ.՝ 87) օրենքի, ՀՀ Կառավարության որոշման 22 (2012թ.՝ 17) և ՀՀ Վարչապետի որոշման 2 նախագիծ, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան կարծիքներ:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ընդունվել է ՀՀ գլխավոր դատախազի 10 հիմնարար իրավական ակտ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» N ԱԺՈ-080-Ն որոշման հնարավոր խնդրահարույց մի շարք դրույթների մեկնաբանության և կիրառման վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ վերակազմակերպելու, լուծարելու, անվանափոխելու և նոր կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի հրամանները և այլն:

ՀՀ գլխավոր դատախազությունում և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում կատարվել են արմատական փոփոխություններ և ՀՀ գլխավոր դատախազությունում նախկինում լուծարված վարչությունների փոխարեն ստեղծվել են նոր վարչություններ: Մասնավորապես՝ հատկապես կարևոր գործերով քննության վարչություն, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչություն, մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչություն, ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչություն, պետական շահերի պաշտպանության վարչություն, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն, վերահսկողական-տեսչական վարչություն:

ՀՀ գլխավոր դատախազության բաժինների մի մասը կրճատվելուց հետո մնացել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժինը, իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժինը, միջազգային-իրավական կապերի բաժինը:

Նշված կառուցվածքային փոփոխությունները համապատասխանեցվել են ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ դատախազությանը վերապահված լիազորություններին:

Բավականին աշխատանք է տարվել ՀՀ դատախազության գործունեության միասնական չափորոշիչների սահմանման, ներդրման և կիրառման ուղղությամբ, որն ուղղված է դատախազական գործունեության կազմակերպման և դատախազական լիազորությունների իրականացման միասնականության, միատեսակության և արդյունավետության ապահովմանը, ինչպես նաև հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացառմանը: Ներկայումս շրջանառվում են նույն նպատակին ուղղված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածների միասնական կիրառումն ապահովելու մասին, Քրեական հետապնդման հարուցման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և վերահսկողության արդյունավետության բարձրացմանը ներկայացվող ընդհանուր պահանջների մասին ՀՀ գլխավոր դատախազի հրամանների նախագծերը:

ՀՀ դատախազությունը հաշվետու ժամանակահատվածում ՀՀ օրենսդրության կատարելագործման հարցերով ակտիվորեն համագործակցել է այլ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ ոստիկանության համապատասխան վարչությունների ու բաժինների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի:

11. ՀՀ դատախազության պետական ծառայության ոլորտ

2013թ.-ին **ՀՀ աշխատակազմը** իր համապատասխան կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պետական ծառայողների միջոցով, իրենց պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառույթների շրջանակներում, իրականացրել է իր գործառույթներից բխող, իրեն վերապահված պարտականությունները. այն է՝ իրականացրել է փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը, դատախազության ստորաբաժանումներում ստացվող փաստաթղթերի ներքին մուտքի և ելքի աշխատանքների կազմակերպումը, կատարել է գլխավոր դատախազի և նրա տեղակալների ստորագրմանը ներկայացվող փաստաթղթերի, հրամանների նախագծերի խմբագրում և սրբագրում, միասնական իրավաբանական լեզվի եզրույթների մշակում, վարել է գերատեսչական մարմիններից ստացված միջնորդությունների, քաղաքացիների դիմումների, քաղաքացիական գործերի և նյութերի, գրագրությունների, հսկողության տակ վերցված փաստաթղթերի, հարուցված քրեական գործերի գործավարությունը, հետևել է հսկողության վերցված փաստաթղթերի ժամանակին կատարմանը, կազմակերպել է ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հաշվառումը և

դասակարգումը, կազմել է տեղեկանքներ և վերլուծություններ՝ հանձնման վերաբերյալ քրեական գործերով և իրավական օգնության միջնորդությունների ու քաղաքացիների դիմումներով, օժանդակել է ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերի նախապատրաստական ու կազմակերպական աշխատանքների իրականացմանը, «Օրինականություն» գիտագործնական հանդեսի ժամանակին լույսընծայման և դատախազության տեղեկատվական թերթիկի նախապատրաստման ու հրապարակման աշխատանքներին:

2013թ. աշխատանքներ են կատարվել **ՀՀ դատախազությունում ստացված դիմումներն ու բողոքները** սահմանված ժամկետում քննարկելու, դիմումների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու, տեղ գտած թերություններն ու խախտումները վերացնելու, ինչպես նաև քաղաքացիների ընդունելությունը բարելավելու ուղղությամբ:

2013թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 12041 (2012թ.՝ 11333) դիմում-բողոք, որոնցից 3077-ը (2012թ.՝ 3084) եղել է կրկնակի, 663-ը (2012թ.՝ 510) բավարարվել է, 1093-ը (2012թ.՝ 788) մերժվել է, 3775-ը (2012թ.՝ 3637) ուղարկվել է այլ մարմին, 10 (2012թ.՝ 15) անանուն դիմում թողնվել է առանց քննարկման, 188-ը (2012թ.՝ 158) մնացել է անավարտ, 9-ը (2012թ.՝ 5) վերադարձվել է հեղինակներին, 97-ը (2012թ.՝ 54) թողնվել է առանց պատասխանի, 49-ը (2012թ.՝ 26) թողնվել է առանց լուծման, 55-ի (2012թ.՝ 85) թղթակցությունը դադարեցվել է, 2547-ի (2012թ.՝ 1983) տրվել է պարզաբանում, 3470-ը (2012թ.՝ 4023) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում, 82-ի (2012թ.՝ 49) քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է 637 (2012թ.՝ 757) քաղաքացու ընդունելություն, որոնցից ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների մոտ ընդունելության է ներկայացել 64 (2012թ.՝ 122) քաղաքացի: Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 13.07.2004թ. N 277 հրամանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պահանջի՝ ընթացք է տրվել նաև բռնադատվածների վերաբերյալ դիմումներին, որի կապակցությամբ ընդհանուր հաշվով 19 (2012թ.՝ 42) քաղաքացուց ստացվել է 25 (2012թ.՝ 46) դիմում, որոնցից 3-ը կրկնակի և 2-ը կրկնօրինակ (2012թ.՝ 4): 14-ի (2012թ.՝ 28) խնդրանքը բավարարվել է, նրանց տրվել է բռնադատված կամ բռնադատվածի առաջին հերթի ժառանգ լինելու մասին տեղեկանք, 2 (2012թ.՝ 1) դիմումով խնդրանքը մերժվել է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, 9-ով (2012թ.՝ 16) տրվել է պարզաբանում:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

2013թ. շարունակվել է համագործակցությունը ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից ստեղծված շահերի պաշտպանության և աջակցության

կենտրոնների հետ (ՇՊԱԿ), որի շրջանակներում 2013թ. ընթացքում ստացվել է 62 (2012թ.՝ 49) դիմում, որոնց ընթացքը լուծվել է սահմանված կարգով:

2013 թվականի ընթացքում պետական ծառայողները կազմակերպել են ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների մոտ իրականացված **թվով 27 արարողակարգային միջոցառումներ:**

2013թ. ընթացքում պետական ծառայողների կողմից կատարվել են մի շարք փաստաթղթերի թարգմանչական աշխատանքներ:

2013թ. ընթացքում աշխատակիցներն իրականացրել են դատախազության աշխատողի օրվան և դատախազության 95-ամյակին նվիրված տոնական միջոցառումների արարողակարգային աշխատանքները, որին հրավիրվել են եղել և մասնակցել են 10 պատվիրակություններ՝ ԱՊՀ-ի, Եվրոպական երկրների և Վրաստանի դատախազություններից:

2013թ. հոկտեմբերի 7-9-ը պետական ծառայողները նախապատրաստել և կազմակերպել են Հայաստանում անցկացվող՝ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի 8-րդ լիագումար նիստի արարողակարգային աշխատանքները, որին մասնակցել են 14 երկրների պատվիրակություններ:

2013թ. կազմակերպվել են դատախազների՝ օտարերկրյա պետություններ գործուղելու հետ կապված նյութատեխնիկական բնույթի աշխատանքները, մասնավորապես՝ մուտքի արտոնագիր ստանալու և դրանց վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի (ուղետոմսերի, ապահովագրական, հյուրանոցային, փաստաթղթերի և այլն) ձևակերպումը:

2013թ. ընթացքում պետական ծառայողները մասնակցել են ՀՀ դատախազության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը կառավարող ծրագրի արդիականացման աշխատանքներին: Կատարվել են ամենօրյա աշխատանքներ՝ **համակարգչային ծրագրային ապահովման**, համակարգչային ցանցի, սերվերների և տեխնիկական միջոցների սարքին և անխափան աշխատանքն, ինչպես նաև ներքին համակարգչային ցանցից դեպի համացանց անխափան կապն ապահովելու ուղղությամբ: Հնարավորինս սեղմ ժամկետներում լուծվել են նաև ՀՀ դատախազությունում առաջացող տեխնիկական և ծրագրային բոլոր խնդիրները՝ կապված համակարգիչների ծրագրային ապահովման և համակարգչային ցանցի տեխնիկական սպասարկման հետ:

2013թ. կատարվել են ցանցային և այլ համակարգչային սարքավորումների, մալուխների թերությունների վերացման ու դրանց փոխարինման աշխատանքներ, ինչպես նաև նոր համակարգիչների տեղադրման, օժանդակ բոլոր սարքավորումների և ներքին ցանցին նոր համակարգիչների միացման աշխատանքներ:

2013թ. ընթացքում ՀՀ դատախազության աշխատակազմը համագործակցել է մրցույթներում (համացանցային կապի, ՀՀ դատախազության ներքին ցանցի սպասարկման, համակարգչային ոլորտի այլ ծառայությունների իրականացման) հաղթող կազմակերպությունների հետ, ինչպես նաև իրականացրել է կատարվող աշխատանքների վերահսկողություն:

2013թ. ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 2012 թվականի տարեկան և 2013 թվականի եռամսյակային, կիսամյակային և 9 ամսվա **ֆինանսական և ոչ ֆինանսական**, ՀՀ ՊԵԿ «Կենտրոն» հարկային տեսչություն՝ 2012 թվականի տարեկան և 2013 թվականի ամսական եկամտային հարկի անհատական հաշվետվությունները, պատրաստել է 2013 թվականի բյուջետային տարվա պահպանման ծախսերի նախահաշիվը, 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Օրենքով սահմանված կարգով կատարել է դատախազների, պետական ծառայողների վարձատրության դրույքաչափերի հաշվարկումը, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող և պայմանագրային աշխատողների հիմնական աշխատավարձերի հաշվարկները և վճարումը, անհրաժեշտության դեպքում տրամադրել է տեղեկանք՝ աշխատավարձի չափի վերաբերյալ:

Կենսաթոշակային ապահովության օրենսդրական փոփոխությունների հետ կապված՝ համակարգի երկարամյա ծառայության բոլոր թոշակառուների համար կնքվել են «ՎՏԲ բանկ Հայաստանի» հետ նոր պայմանագրեր և բանկի կողմից տրամադրված նոր հաշվեհամարներով թարմացվել է կենսաթոշակառուների թոշակների վճարման բազան ու կատարվել թոշակների ամսական վճարումները: Կատարվել են թոշակային ֆոնդի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի հաշվարկները:

Գնումների մասին օրենսդրության համապատասխան անցկացվել են ապրանքների, աշխատանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման մրցույթներ, կազմվել համապատասխան պայմանագրեր և իրականացվել դրանց վճարումը:

2013թ. ընթացքում ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոնների հետ կապված ստացվել է 106 դիմում, կազմակերպվել է 52 մրցույթ, որոնցից 2-ը՝ փակ, 50-ը՝ բաց, մշակվել են թեստային առաջադրանքներ:

Հաշվետու տարում գործունեության գնահատման է ենթարկվել 7 պետական ծառայող:

2013թ. կատարվել են ՀՀ գլխավոր դատախազության, մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին ամրակցված ծառայողական **հաշվեցուցակային զենքերի թույլտվության** ժամկետների երկարացման աշխատանքներ:

Կատարվել են ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներին ամրակցված զենքերի, զենք կրելու թույլտվությունների հաշվառման և գույքագրման, ՀՀ ոստիկանության գնդակապարկուճադարանում նմուշառումներ վերցնելու աշխատանքները:

2013թ. ընթացքում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային (եռամսյակային) և տարեկան **վիճակագրական հաշվետվության** ձևերում (2-4-րդ և 7-14-րդ բաժիններում) և «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային (եռամսյակային) և տարեկան վիճակագրական հաշվետվության ձևի լրացման ու ներկայացման կարգում կատարվել են 2013 թվականի 1-ին կիսամյակի և տարեկան վիճակագրական հաշվետվությունների համար նախատեսված համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Համակարգչային համապատասխան ծրագրի միջոցով մշակվել և կազմվել են «Հայաստանի Հանրապետությունում հանցավորության վիճակի մասին», «Քննչական

աշխատանքի մասին» (Ձև 1Մ) և (Ձև 1.1Մ) և «Դատախազի աշխատանքի մասին» (1-15 բաժիններ) ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվության ձևերը: Կազմվել են «Դատախազի աշխատանքի մասին» և «Քննչական աշխատանքի մասին» 2013 թվականի 1-ին կիսամյակի և տարեկան հաշվետվության ձևերի փաթեթներն՝ ըստ տարածքային պատկանելության, ինչպես նաև դրանց թղթային ու էլեկտրոնային տարբերակների ստացման մասին ցուցակները:

2013թ. ընդունվել, ստուգվել, համադրվել և ամփոփվել են «Հայաստանի Հանրապետությունում հանցավորության վիճակի մասին», «Քննչական աշխատանքի մասին» (Ձև 1Մ) և (Ձև 1.1Մ), «Դատախազի աշխատանքի մասին» (1-15 բաժիններ) 2012 թվականի տարեկան, 2013 թվականի 1-ին եռամսյակի, 1-ին կիսամյակի և ինը ամսվա վիճակագրական հաշվետվությունները, որը կատարվել է համակարգչային համապատասխան ծրագրի և այդ ծրագրում հաշվետվությունների ամփոփման աշխատանքների արդյունավետ իրականացման համար բաժնի կողմից հատուկ մշակված բանաձև-ծրագրի միջոցով:

Կազմվել են 2012 թվականի տարվա և 2013 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում քննիչների վարույթում եղած, ավարտված և կասեցված քրեական գործերով միջին ծանրաբեռնվածության, ինչպես նաև քրեական գործերի ավարտման ժամկետների մասին վերլուծական տեղեկանքները, 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կատարած աշխատանքների մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրի ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքը, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդից ստացված՝ «Հանցավորության վիճակի մասին», «Քննչական աշխատանքի մասին», «Դատախազական գործունեության մասին», «Հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային պայմանագրերի կատարման պրակտիկայի մասին» հաշվետվության տիպային միասնական ձևերում և դրանց լրացման կարգում ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազությունների առաջարկությունների և նկատառումների հիման վրա կատարված լրամշակումների ուսումնասիրության արդյունքների մասին զեկուցագիրը:

Կատարվել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդից ստացված 2012 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների և 2012 թվականի տարվա ընթացքում հանցավորության վիճակի վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել են համապատասխան վերլուծական ամփոփ-զեկուցագրեր, կազմվել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդից ստացված գրության հիման վրա կազմված՝ 2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում հանցավորության վիճակի վերաբերյալ տեղեկությունը:

2013թ. ամփոփվել է 2012 թվականի ընթացքում ՀՀ քր. օր.-ի 164-րդ հոդվածով նախատեսված՝ լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաև լրագրողների նկատմամբ կատարված այլ ոտնձգությունների դեպքերով նախապատրաստված նյութերի և քրեական գործերի ընթացքը:

Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի գլխավոր մասնագետի հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման նպատակով, կատարվել է մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի ուսումնասիրում, մշակում և ցուցակագրում՝ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ հանձնելու նպատակով:

ՀՀ դատախազության աշխատակազմը որոշակի աշխատանք է կատարել նաև **հրապարակայնության և հանրային իրազեկման ապահովման ոլորտում,**_մասնավորապես՝ 2013թ. ընթացքում աշխատանքներն ուղղված են եղել ՀՀ դատախազության գործունեության պատշաճ լուսաբանմանը, հանրության իրազեկմանը, հանրության լայն շրջանակներում ՀՀ իրավապահ մարմինների նկատմամբ վստահության բարձրացմանը և փոխադարձ համագործակցության խրախուսմանը:

2013թ. հասարակական կազմակերպությունների սեկտորի ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպվել է 11 (2012թ.՝ 81) քննարկում, խորհրդակցություն և միջոցառում:

Կազմակերպվել է նաև «Հայ պետական ծառայողների միություն» հասարակական կազմակերպության, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ գլխավոր դատախազության համատեղ կոնֆերանսը՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, որի նպատակը եղել է «Ամբողջականությունը պետական ծառայության համակարգում» ծրագրի արդյունքները ներկայացնելը:

2013թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պետական ծառայողները մասնակցել են մի շարք սեմինար-քննարկումների, այդ թվում՝ «Հետազոտական ռեսուրսներ կովկասյան կենտրոն-Հայաստան» ՀԿ-ի կազմակերպած սեմինարին՝ «Ընտրանքային հետազոտությունների արդյունքները 2012թ.» թեմայով, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և Եվրոպական միության ՍԻԳՄԱ ծրագրի հետ համատեղ կազմակերպված սեմինար-խորհրդակցությանը՝ «Հանրային ոլորտի էթիկան Հայաստանում և Եվրոպական Միությունում» թեմայով, ՀՀ Կառավարության և «Ինֆորմացիոն ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Բաց-կառավարական գործընկերություն-Հայաստան» միջազգային համաժողովին, 28.06.2013թ. և 29.06.2013թ.՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգի բարեփոխումը Ասոցացման Համաձայնագրի» համատեքստում սեմինար-քննարկմանը և այլն:

ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ մի շարք կազմակերպությունների տրվել են պարզաբանումներ:

Կատարվել են ՀՀ դատախազության պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքներ, մասնավորապես՝ հայերեն նյութերի տեղադրման, ռուսերեն և անգլերեն բաժիններում տեղադրվող նյութերի թարգմանության և տեղադրման աշխատանքներ, լրատվական կայքերի և տպագիր մամուլի մշտադիտարկում և արխիվացում, տեսանյութերի տեղադրում համացանցում, կայքում տեսանելի մի շարք բարեփոխումների իրականացում:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների հմտությունների զարգացման և վերապատրաստման դասընթացների շարունակական աշխատանքները

ապահովելու և զարգացնելու նպատակով 19.12.2012թ.-ին ՀՀ գլխավոր դատախազությունում կնքվել է եռակողմ հուշագիր՝ ՀՀ գլխավոր դատախազության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և «Հայաստանի պետական ծառայողների միություն» ՀԿ-ի միջև, որի հիման վրա համապատասխան աշխատանքներ են իրականացվել 2013թ.-ին:

ՁԼՄ-ների իրավունքներին առնչվող ԵԽ նորմերի վերաբերյալ պետական իշխանության ներկայացուցիչների (դատավորների, դատախազների) տեղեկացվածության ուղղությամբ ընդունվել է նաև ՀՀ գլխավոր դատախազի 2009 թվականի փետրվարի 20-ի «ՀՀ դատախազության և հասարակական կազմակերպությունների միջև մասնակցային համագործակցության կարգը հաստատելու մասին» N 5 հրամանը, որտեղ նշված է. «Տեղեկատվություն տրամադրելիս դատախազությունը ղեկավարվում է Դատախազության մասին ՀՀ օրենքով, ՀՀ քր. դատ. օր.-ի 201-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև առաջնահերթ է համարում պահպանել քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններին ուղղված Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի N 13 հանձնարարականի պահանջները, այն է՝ տեղեկատվությունը տրամադրել առանց խտրականության՝ հարգելով անմեղության կանխավարկածը:»:

Բացի այդ, 2013թ. ՀՀ դատախազությունը լույս է ընծայել «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի 6 հատոր, որոնցում տպագրվել են հոդվածներ, ուսումնասիրություններ և տեղեկատվական նյութեր: Նշված նյութերում արծարծվել են ժողովրդավարության, օրենքի գերակայության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պահպանման, կիբերպաշտպանության հետ կապված հարցեր (Օրինակ՝ «Մարդու իրավունքների ժամանակակից ընկալման հիմնական ասպեկտները», «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական արժեքը...», «Իրավունքի գերակայության խնդիրը», «Կիբերհանցագործություններ...», «Իրավունքի հասկացության շուրջ» և այլն):

Հրապարակվել են բազմաթիվ տեղեկատվական-վերլուծական նյութեր, որոնք անդրադարձել են միջազգային կազմակերպությունների և օտար երկրների դատախազական և իրավապահ այլ մարմինների հետ ՀՀ դատախազության համագործակցության խնդիրներին:

Առանձին նյութեր են նվիրվել հասարակության հետ դատախազության համագործակցության, դատախազության գործունեության մասին հասարակության իրազեկման ապահովման հիմնահարցերին («Քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կարգը», «Համագործակցության ծրագիր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ» և այլն):

Առաջիկայում ևս ՀՀ դատախազությունը ծրագրում է «Օրինականություն» հանդեսում հոդվածներ և տարաբնույթ այլ նյութեր հրապարակել «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր. Հայաստան» նախագծի համատեքստում:

12. «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ դպրոց) «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր դատախազները, բացառությամբ գլխավոր դատախազի և նրա տեղակալների, պարտավոր են անցնել տարեկան վերապատրաստում՝ գլխավոր դատախազի կողմից սահմանված կարգով, ինչն 2013թ.-ին կատարվել է ամբողջ ծավալով:

Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, դատախազն իրավունք ունի մասնակցելու այլ կրթական վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի համաձայն՝ Դատախազության դպրոցն իրականացնում է՝

1) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը,

2) դատախազների տարեկան և լրացուցիչ վերապատրաստումը,

3) դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստումը:

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն ՀՀ գլխավոր դատախազի 16.06.2008թ. N 56 հրամանով հաստատված՝ «ՀՀ դատախազությունում մասնագիտական պատրաստում և վերապատրաստում անցկացնելու կարգի» (այսուհետ՝ կարգ), ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից 26.02.2013թ. N 10 հրամանով հաստատված «Մասնագիտական պատրաստման և վերապատրաստման 2013թ. կրթական ծրագրերի», Դատախազության դպրոցն (այսուհետ՝ դպրոց) իրականացրել է համապատասխան ուսումնառություն՝ ներքոհիշյալ 3 կրթական ծրագրերով՝

1) դատախազների տարեկան վերապատրաստում,

2) դատախազների լրացուցիչ վերապատրաստում,

3) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

2013թ. դպրոցն իրականացրել է 2013թ. վերապատրաստման ցուցակում ընդգրկված 300 (2012թ.՝ 318) դատախազի տարեկան վերապատրաստում՝ 16 խմբով: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված է եղել 13-20 դատախազ, դատախազներից 5-ը անցել են կրկնակի վերապատրաստում: Դատախազության ղեկավար կազմի վերապատրաստումն իրականացվել է դրսեկության եղանակով: Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 18 անձից մասնագիտական պատրաստում է անցել 17-ը:

Կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական գործընթացներն իրականացվել են դասախոսությունների, գործնական պարապմունքների, դասախաղերի, դատախաղերի, սեմինարների, խնդիրների, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճիռների, Վճռաբեկ դատարանի որոշումների հիման վրա քննարկումներ և բանավեճեր կազմակերպելու միջոցով:

Բացի վերոնշյալ ավանդական ուսումնական մեթոդներից, 2013թ. ընթացքում դասընթացները կազմակերպվել են նաև դպրոցի կողմից նախապես պատրաստված ուսումնական ֆիլմերի միջոցով, որն ապահովում է անհատական մոտեցում ունկնդրին, մատուցվող նյութերի մատչելիություն և բարձր ընկալման մակարդակ:

Դասընթացների ժամանակ վերապատրաստվողներին տրամադրվել են համապատասխան նյութեր, գիտագործնական ձեռնարկներ, մենագրություններ և այլն:Դասընթացներն անցկացվել են ինչպես դպրոցի աշխատակիցների, այնպես էլ վերապատրաստման դասընթացներին ժամավճարային կարգով որպես դասախոսներ ներգրավված՝ տարբեր հաստատություններում դասավանդող իրավաբան-մասնագետների և դատախազության փորձառու աշխատակիցների կողմից:

2013թ. ընթացքում փորձագիտական գործունեության բնագավառում դպրոցը հանդես է եկել որպես առաջատար կազմակերպություն և կարծիքներ ներկայացրել իրավունքի բնագավառում կատարված 8 ատենախոսությունների վերաբերյալ:

2013թ. էլեկտրոնային ուսուցման գործընթացի շրջանակներում ստեղծվել են հետևյալ 3 ուսումնական ֆիլմերը՝ «Էլեկտրոնային խնդրանի», «Մարդկանց թրաֆիքինգ. Հարկադիր աշխատանք», «Արդար դատաքննություն. «Միակ կամ վճռորոշ կանոն»»:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը համագործակցել է միջազգային հեղինակավոր կառույցների և փորձագետների հետ:

Դատախազության ղեկավար կազմի վերապատրաստումն իրականացվել է դրսեկության եղանակով: Ղեկավար կազմի վերապատրաստման շրջանակում անցկացվել են սեմինար-քննարկումներ «Քրեադատավարական արդի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» և «Դատախազության գործունեության արդյունավետության բարձրացումը» թեմաներով և այլն, բացի այդ դպրոցը համագործակցել է նաև Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի հետ, որի արդյունքում ղեկավար կազմի վերապատրաստման շրջանակում կազմակերպվել են նաև «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը» թեմայով սեմինարներ:

Տարեկան վերապատրաստում անցած 300 դատախազից 5-ը, համաձայն կարգի 64-րդ կետի 1-ին ենթակետի, անցել է կրկնակի վերապատրաստում: Դատախազների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման եղանակով, իսկ ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն կարգի, կազմել է 80 դասաժամ:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումն անցկացվել է 1 խմբով՝ առկա ուսուցման եղանակով: Ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն կարգի, կազմել է 960 դասաժամ, որից 320-ը՝ ուսումնական պրակտիկան:

2013թ. ընթացքում դպրոցը վերապատրաստման և մասնագիտական պատրաստման գործընթացի որոշակի հատվածն իրականացրել է էլեկտրոնային ուսուցման ծրագրի հաշվին, որի կազմակերպումն ու անցկացումը նախատեսված է եղել դպրոցի 2013 թվականի բյուջետային հայտով: Էլեկտրոնային ուսուցման ծրագիրն իրագործելու համար, որպես կանոն, ստեղծվել է աշխատանքային խումբ: Ուսուցանվող նյութը բովանդակել է

նախադեպային իրավունքը, քրեական և քրեադատավարական օրենսդրությունը, քննության առանձնահատկությունները և այլն։

Վերոնշյալ ծրագրի արդյունավետությունը պայմանավորված է նյութի մատուցման մեթոդի բովանդակությամբ։ Այն հնարավորություն է տվել շուրջ հինգ անգամ բարձրացնելու դասավանդվող առարկայի ընկալելիության մակարդակը, քանի որ նյութը սերտելու համար միաժամանակ ունկնդիրն օգտագործել է իր երկու զգայարանները՝ տեսողական և լսողական։ Ուսուցումը անցկացվել է համակարգչային լսարանում՝ հատուկ դրա համար մշակված համակարգչային ծրագրի կիրառմամբ և ինքնակրթության միջոցով։ Ուսումնական ֆիլմերը էլեկտրոնային կրիչներով տրամադրվել են ունկնդիրներին։ Ուսուցման գործընթացը հիմնականում բաղկացած է մասնագիտական գիտելիքների և հմտությունների ախտորոշումից, ուսուցումից և արդյունքների ստուգումից։

Էլեկտրոնային ուսուցման գործընթացի շրջանակում ստեղծվել են թեմատիկ ուղղվածությամբ գիտաուսումնական նյութեր, որոնցից յուրաքանչյուրը բաժանվել է մոդուլների (հատվածների)։ Գիտաուսումնական նյութերի հիման վրա ստեղծվել են ութ ուսումնական ֆիլմեր։

Իրավական հանրության դատին ներկայացվող ֆիլմը գիտաստեղծագործական, մանկավարժական, համակարգչային ծրագրավորման, ռեժիսորական, կինոարտադրության և այլ տեխնիկատնտեսական միջոցների ու ռեսուրսների համագումար է։

2013 թվականի ընթացքում դպրոցը էլեկտրոնային ուսուցման գործընթացի շրջանակում ստեղծել է հետևյալ ուսումնական ֆիլմերը՝

«Էլեկտրոնային խնդրանի»՝ բաղկացած 5 մասից (նախատեսված ուսուցանողների և ինքնուսուցման համար),

«Մարդկանց թրաֆիքինգ, հարկադիր աշխատանք»՝ բաղկացած երկու մասից,

«Արդար դատաքննություն. «Միակ կամ վճռորոշ կանոն»»։

Էլեկտրոնային խնդրանիում ներկայացված են ՄԻԵԴ և ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012թ. նախադեպային իրավունքի հենքի վրա պատրաստված իրավիճակային խնդիրներ՝ համապատասխան առաջադրանքներով, և դրանց պատասխանների մեկնաբանությունները։

Շարունակելով մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ գիտաուսումնական ֆիլմերի շարքը՝ դպրոցն այս անգամ անդրադարձել է միջազգայնորեն արդի դարձած թրաֆիքինգի դրսևորումներից մեկի՝ հարկադիր աշխատանքի հիմնախնդիրներին։ «Մարդկանց թրաֆիքինգ, հարկադիր աշխատանք» խորագրով գիտաուսումնական 2 ֆիլմում ներկայացվել են հարկադիր աշխատանքի հասկացությունը, միջազգային չափորոշիչները և դատական պրակտիկան Հաագայի միջազգային դատարանի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների լույսի ներքո։

«Արդար դատաքննություն. «Միակ կամ վճռորոշ կանոն»» խորագրով գիտաուսումնական ֆիլմում բարձրացվել են արդար դատաքննության իրավունքին առնչվող մի շարք խնդիրներ, ուսումնասիրվել են ՄԻԵԴ նախադեպային իրավունքում ձևավորված ապացույցների թույլատրելիության և գնահատման չափորոշիչները, այդ թվում՝ «հակակշռող գործոններ», «չբացահայտված ապացույց», «ինքնուրույն ապացույց», «չստուգված ապացույց»,

«անխուսափելիորեն բացահայտելի ապացույց», «թունավոր ծառի պտուղներ», «միակ կամ վճռորոշ կանոն» հասկացությունները:

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2012 թվականի փետրվարի 24-ի նիստում ընդունված որոշումների կատարումն ապահովելու մասին» N 11, 2012թ. դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 2-ի նիստում ընդունված որոշումների կատարումն ապահովելու մասին» N 57 հրամանների՝ պատրաստվել է «Ներպետական փորձագիտական կառույցներում առաջարկվող փորձաքննությունների տեսակները և հնարավորությունները» խորագրով ուղեցույցձեռնարկը և ՀՀ գլխավոր դատախազի ու նրա տեղակալների հիմնարար հրամանների, հանձնարարականների և ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների ժողովածուն:

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2009թ. մարտի 30-ի «Կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման կրթական ծրագիրը հաստատելու մասին» N 20 հրամանի՝ մշակվել և հրատարակվել է «Կաշառակերության հակազդման հիմնախնդիրները» խորագրով մենագրությունը:

Գիտաուսումնական բոլոր ձեռնարկները տրամադրվել են դատախազներին և համապատասխան պետական մյուս մարմիններին:

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ՀՀ գլխավոր դատախազի 12.12.2013թ. N 113 հրամանով դպրոցը լուծարվել է և դրա համապատասխան գործառույթները փոխանցել են Արդարադատության ակադեմիային:

Հավաստիացնում եմ, որ շարունակելով իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, ՀՀ դատախազությունը կանի հնարավորինը՝ օրինախախտումների դեմ տարվող պայքարին, սահմանադրական և հասարակական կարգի ամրապնդմանն օժանդակելու, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև օրինականության պահպանմանն առնչվող սահմանադրական լիազորություններից բխող մյուս խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, բացահայտելով դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման աշխատանքներում տեղ գտած թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նկատի ունենալով այդ կապակցությամբ ՀՀ Նախագահի կողմից ներկայացված հանձնարարականների պահանջները, կարվեն դրանցից բխող համապատասխան հետևություններ՝ առավելագույնս ապահովելու հետագա աշխատանքների արդյունավետությունը:

Հարգանքով՝

Գ.Ս.ԿՈՍՏԱՆՅԱՆ